

1620

— 9

2(075)  
4-15

5



03 AUG 2009

Փ ռ փ ո լ ա մ ձ

ՏՄ

Ն Ա Բ - Ռ Ի Խ Տ

# ԱՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Եկայք որդեակք ին  
«Եւ լուարուք ինձ  
«Եւ զերկիւղ Տեսան  
«Ուսուցից ձեզ»:

Ս ա ղ մ ո ւ

Զ. ՏՊ.

499 | 252

Աշխատասիրեց

Ա Ա Հ Ա Կ Ա. Գ Ա Հ. Ա Ա Հ Ա Կ Ե Ա Ն Յ

(Միաբան Առղինոյ Ա. Գէորգ եկեղեցւոյ Տիխոնց)

Կըօնուսոյցներին առաջարկւում է դասազրիս նիւթի մշակութիւնը  
—«Դասադիրք կըօնի» ուղեցոյց հայ կըօնուսոյցների համար

Թ. Ի Ֆ Լ Ի Ւ

Եւերական Տուարան Օր. Ն. Աւանեսի, Պօլմ. 7.

1907 (40)

ՀԱՐՄ  
Զ-8402

Փ ո փ ո լ ա մ ձ

2(075)  
Վ-15

Ն Ո Ր - Ո Ւ Խ Տ Տ

# ՄՐԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Եկայք որդեակք իմ  
«Եւ լուսրուք ինձ  
«Եւ զերկիւղ Տեան  
«Ուսուցից ձեզ»:

Ս ա դ ո ւ

2912

Զ. ՏՊ.

Աշխատասիրեց

Ս Ա Հ Ա Կ Ֆ Ա Հ . Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն Ց

(Միաբան Մողնւոյ Ա. Գէորգ Եկեղեցւոյ Տփխեաց)

Կրօնուսոյցներին առաջարկւում է դասագրիս նիւթի մշակութիւնը  
— «Դանագիրք կրօնից ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար»

Թ Ի Ց Լ Ի Ս

ԵԼԵՅՏՐԱՏԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻ. 7.

1907 (40)

05 FEB 2014

1620

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

## Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ  
Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

## Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Քնթերցեալ զայս գրքոյկ, չգտի ի սմին հակառակ ինչ,  
ուստի թոյլատրի տպագրութիւն սորա. 9 մարտի 1891  
ամի ի Ս. Էջմիածնի:

Նախադ. Տպար. Ժող. Արիստակէս Եպիսկոպոս



ԾԱՅԻՆՅՈՒՅԹՈՂՈՅ 4

Ա Շ Տ Պ Ա Մ Ա Հ

րան քրոյ՝ մրաննել խոճիրներ՝ մօրութըղը  
ուստանդրով մուժուցանչ վարակում մրան  
յատելի պահ մոփոցում մանրանդրով յունել  
պշեացից միջրներ յուրի

Ա Շ Տ Պ Ա Մ Ա Հ

Ց Ա Շ Տ Պ Ա Մ Ա Հ

ՏԵՍԱՅ ՅԱԽԱԿԱՅ ՊԱՐԱԳԱՎԱՐԱ

Է՛տ յառակու մին և մոք քառա ուր բանքի մէջ  
1981 յուրին զ առաջ մովկարու պայտական վայսու<sup>թ</sup>  
աքնարին վ մ կ ո վ ո ւ

ուստանդրու առաջակա լու յուր բանքի

ման լուսած մեջ աշութ նայածաւ բան նույն  
ինքնորու ով հապալիք յանձնան ուրածու  
ու մասսաւ անը անու ափայրու ամեն ու ուրի  
անդաստու ամուս սիմ ամբական ան անք  
մանդպարու 1 զայ ամենա ստան ու ուրի  
ով նայու և տօն յու աջախին մանգը  
ով այժ իստ իստ անու ու ուրին

ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՏԱԺԱՐԻՆ  
ՀՆԾՍՑՈՒԻՆԸ

Քանանացւոց աշխարհում, Յուղայի երկրում  
մի քաղաք կար՝ անունը նազարէթ։ Այդ քաղա-  
քում ապլում էր մի բարեպաշտ մարդ՝ Յովակիմ  
անունով իւր Աննա կնոջ հեաւ։ Սրանք որդի  
չունէին, դրա համար էլ շատ էին տիրում և Աստր-  
ծուն ամեն օր աղօթում էին, որ իրանց մի զա-  
ւակ պարգևէ։ Մի անգամ էլ աղօթելիս խոստա-  
ցան, որ եթէ Աստուած իրանց ինդիրը լսէ և  
մի որդի պարգևէ, իրան կընծայէն։ Աստուած  
լսեց բարեպաշտ ծնողների աղօթըը և մի աղջիկ  
պարգևէց նրանց, որի անունը Մարիամ դրին։  
Երբ աղջիկը երեք տարեկան դարձաւ, Յովա-  
կիմն ու Աննան, ինչպէս խոստացել էին, ի-  
րանց զաւակին տաճար տարան և ընծայեցին  
Աստծուն։ Մարիամը մնաց տաճարում։ Քահանա-  
յապեաը նրա ուսուցիչն էր—սովորցնում էր նրան,  
թէ Աստծուն ինչպէս պէտք է ծառայել։ Մա-

ըիամը մնաց տաճարում մինչև 14 տարեկան  
դառնալը: Նա այնտեղ պարապում էր աղօթքով  
և սուրբ գիրք կարդալով:

Մի առ ժամանակից ետոյ քահանաները Մա-  
րիամին յանձնեցին իւր ազգական Նազարէթցիր  
ծերունի Յովսէփին, որի մօտ և ապրում էր:  
Յովսէփը արհեստով հիւսն էր:

Սուրբ կոյս Մարիամի ծննդեան տօնը կատարում ենք  
սեպտ. 8-ին, իսկ Տաճարին ընծայուիլը նոյեմբ. 21-ին:

2.

### ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Ա. Աւետումն: Աստուած Գաբրիէլ հրեշ-  
տակին ուղարկեց Նազարէթ քաղաքը կոյս  
Մարիամի մօտ, որը Դաւիթ թագաւորի ցեղիցն  
էր:

Հրեշտակն ասաց նրան. «Ուրախացիր, Մա-  
րիամ, Աստուած քեզ հետ է»: Երբ կոյսը հրեշ-  
տակին տեսաւ, շփոթուեց և մտածում էր,  
թէ ինչ կնշանակէ այս ողջոյնը: Հրեշտակն ասաց  
նրան. «Մի վախենար, Մարիամ, դու Աս-  
տուածանից չնորհ գտար. մի որդի կունենաս  
ու նրան կանուանես Յիսուս: Նա մեծ կլինի և  
Բարձրելոյ որդի կկոչուի. Աստուած Դաւթի

աթոռը նրան կտայ, նա թագաւար կլինի և նրա  
թագաւորութիւնը վերջ չի ունենայ»:

Մարիամը պատասխանեց. «Ես Աստծու  
աղախինն եմ, թող այնպէս լինի՝ ինչպէս ասում  
ես»: Հրեշտակը հեռացաւ նրանից:

Բ. ԾՆՈՒՆԴ: Յիսուսի ծննդեան ժամանակ  
Քանանը գտնվում էր հոռվմայեցւոց իշխանու-  
թեան տակ: Յշտ երկրում բնակւում էին հրէա-  
ները, որոնք հարկատու էին հոռվմայեցւոց: Կար-  
ը Օգոստոսն էր. Նա իւր կողմից Քանանում կա-  
ռավարիչ էր նշանակել Պոնտացի Պիղատոսին:  
Յշտ օրերում Օգոստոս կայսրից հրաման դուրս  
եկաւ՝ որ իւր տէրսւթեանը մէջ եղող բոլոր  
մարդկանցը համարեն, որպէսզի հարկը կանո-  
նաւոր հաւաքեն և մէկ էլ իմանան, թէ քանի  
զինուոր պիտի առնեն: Սրա համար ամենքը  
պէտք է զնային իրանց հայրենի քաղաքը՝ ցու-  
ցակի մէջ գրուելու համար:

Յովսէփին էլ Նազարէթից գնաց Յուղալի  
երկիրը՝ Դաւթի քաղաքը՝ Բեթղեհէմ, որովհե-  
տեւ նա այնտեղացի էր, որպէսզի Մարիամի  
հետ իւր անունը գրել տալ ցուցակի մէջ:

Երբ Բեթղեհէմ հասան, գիշեր էր, Մարիամը  
մի որդի ունեցաւ. պատեց խանձարուրով և  
դրաւ մսուրի մէջ:

Այն երկրում հովիւները զիշեր ժամանակ դրսումն էին արածացնում իրանց ոչխարները։ Յանկարծ հրեշտակը երևաց նրանց։ Այս բանից շատ վախեցան նրանք։ Այն ժամանակ հրեշտակն ասաց նրանց. «Մի վախենաք, ես ձեզ և բոլոր ժողովրդեան մեծ ուրախութիւն եմ աւետում, որովհետև այսօր ձեզ համար Փրկիչ ծնաւ՝ Դաւթի քաղաքում, Բեթղեհէմում։ Այս բանը թնդ ձեզ նշան լինի—դուք կգտնէք մանկանը իանձարուրի մէջ պատած և մսրում դրած»։ Յանկարծ օդը լցուեց հրեշտակներով, որոնք Աստծուն օրհնում էին և ասում. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»—փառք Աստծուն երկնքումը, այսուհետև երկրիս վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն պէտք է լինի։

Երբ հրեշտակը նրանցից հեռացաւ և դէպի երկինք վերացաւ, հովիւներն ասացին միմեանց. «Եկէք գնանք Բեթղեհէմ և տեսնենք, թէ սա ինչ բան է, որ Աստուած մեզ ցոյց տուաւ»։ Նրանք շտապով եկան և գտան Մարիամին, Յովսէփին և մսուրի մէջ դրած մանկանը։ Տեսնելուց ետոյ՝ վերադարձան և փառաբանում էին Աստծուն իրանց լած ու տեսած բաների համար և առաջանաւ էին ամեն տեղ՝ ինչ որ ասուել էր մանկան մասին։

Մարիամն այս բոլոր բաները պահում էր

իւր մտքումը։ Ութն օրից ետոյ, հրէաների սովորութեան համաձայն, մանկանը թլփատեցին և անունը դրին Յիսուս, ինչպէս ասել էր հրեշտակը։

Յիսուսի ծննդեան տօնը կատարում ենք Յունուարի 6-ին, իսկ թլփատութիւնը կամ անուանակոչութիւնը՝ 13-ին։

3.

Արեհելքի ՄՈՒԴԵՐԸ ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ԵԳԻՊՏՈՍ ՓԱԽԶԵԼԸ

Ա. Օգոստոս կայսրի ժամանակ Քանանը կոչւում էր Պաղեստինէ և բաժանուած էր չորս մասի—1. Յուղայի երկիր կամ Հրէաստան, 2. Սամարիա, 3. Գալիլիա, 4. Պէրէա կամ Յանկոյս Յորդանսանի։ Հրէաստանի և Գալիլիայի կառավարիչները հրէաների թագաւորական տանից էին և կոչւում էին թագաւորներ։ Այդ ժամանակ Հրէաստանի թագաւորն էր Հերովդէսը, որի օրով Յիսուսը ծնաւ Բեթղեհէմ քաղաքում։ Սրանից ետոյ արեելքից երեք մոգեր՝ իմաստուններ եկան Երուսաղէմ մեծ բազմութիւնով և հարցնում էին, թէ որտեղ է հրէից նորածին թագաւորը, որովհետեւ մենք տեսանք նրա աստղն արկելըում և եկանք Երկրպագութիւն տալու։

Հերովդէսն այս բանը լսելուն պէս՝ վախեց

Նրա հետ էլ բոլոր երուսաղէմացիները — կարծում էին թէ պատերազմի են եկել: Ուստի ժողովել տուաւ բոլոր քահանայապետներին և ժողովրդի դպիրներին ու հարցնում էր նրանց, թէ որտեղ պէտք է ծնի Քրիստոսը: Նրանք պատասխանեցին: «Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում, որովհետեւ մարգարէներն այսպէս են գրել»:

Այն ժամանակ Հերովդէսը մոգերին թագուն կանչեց և աստղի երեալու ժամանակն ստոյգ իմանալով նրանցից՝ խորամանկութեամբ ասաց: «Գնացէք Բեթղեհէմ և մանկան մասին ճիշտն իմացէք և երբ նրան գտնէք, ինձ էլ իմաց տուէք, որ ես էլ գամ և երկրպագութիւն տամ նրան»:

Մոգերը գնացին: Եւ ահա այն աստղը, որին նրանք արևելքում տեսել էին, առաջնորդեց նրանց և եկաւ կանգնեց այն տան վրայ, ուր մանուկն էր: Նրանք չափից գուրս ուրախացան. ներս մտան տուն և գտան մանկանը իւր մալր Մարիամի հետ. երկրպագութիւն տուին և իրանց հետ բերած գանձերը ընծալ տուին — ոսկի, կնտրուկ և զմուռս:

Աստուած իմանալով Հերովդէսի միտքը, երազում հրամայեց մոգերին, միենոյն ձանտպարհով չվերադառնան, ուստի ուրիշ տեղով գնացին իրանց երկիրը:

Բ. Երբ մոգերն այնտեղից գնացին, ահա Աստծու հրեշտակը Յովսէփին երազում երևեցաւ և ասաց. «Վեր կաց, առ մանկանն ու նրա մօրը փախիր Եգիպտոս և կաց այնտեղ մինչեւ ես քեզ կասեմ, որովհետեւ Հերովդէսը որոնում է մանկանը և կամենում է սպանել նրան: Յովսէփը վեր կացաւ, առաւ մանկանն ու նրա մօրը և գլուխով փախաւ Եգիպտոսուու:

Հերովդէսը երբ տեսաւ, որ մոգերն իրան խաբեցին, խիստ բարկացաւ, ուստի դահիճներ ուղարկեց և կոտորել տուաւ Բեթղեհէմի ու նրա շրջակացի բոլոր մանուկներին՝ երկու տարեկանից սկսած՝ մոգերի որոշած ժամանակի համաձայն:

Հերովդէսի մահուանից ետոյ Աստծու հրեշտակը նորից երևեցաւ Յովսէփին Եգիպտոսում և ասաց. «Վեր կաց, առ մանկանն ու նրա մօրը և գնա Իսրայէլի երկիրը, որովհետեւ մեռան նըրանք, որոնք մանկան կեանքի ետևիցն էին ընկած»: Նա էլ վեր կացաւ. առաւ մանկանն ու նրա մօրը և եկաւ Իսրայէլի կամ Պաղեստինէ երկիրն ու բնակուեց Նազարէթ քաղաքում:

4.

ՅԻՍՈՒՄԻ ՏԱՁԱՐ ՏԱՆՈՒԻԼԸ, ՈՒՄՔՕՆ ԱՍՏՈՒՄԾԼՆԿԱԼԸ ԵՒ ԱՆԱ ՄԱՐԳԱՐԵՈՒՀԻՆ

Մովսէսի օրէնքի համաձայն՝ բառասուն օրից ետու, եթէ երեխան արու էր և անդրանիկ, ծնողները տանում էին երուսաղէմ, նուիբում տաճարին և ապա զոհով ետ էին առնում։ Հարուստները բերում էին գառը, իսկ աղքատները՝ մի զոյգ աղաւնի։

Յիսուսի ծնողները աղքատ էին, ուստի մի զոյգ աղաւնի տարան։

Այդ միւնոյն ժամանակ երուսաղէմում բնակւում էր մի մարդ, որի անունն էր Սիմէօն։ Այս մարդն արդար էր և սպասում էր Մեսիայի դալուն։ Նա Սուրբ Հոգուց իրաւունք ունէր կենդանի մնալ մինչև այդ օրը։ Երբ Յիսուսին տաճար բերին, Սիմէօնը հոգով իմացաւ, դուրս գնաց, Յիսուսին զրկեց, օրհնեց և ասաց. «Տէր, այժմ առ իմ հոգին, որովհետեւ ես տեսալ Փրկչին, որին դու պատրաստել ես բոլոր աղքերի համար. ես տեսալ այն լոյսը, որ պիտի լուսաւորէ հեթանոսներին։ Ծնողները զարմանում էին ծերունու խօսքերի վրայ։ Սիմէօնն օրհնեց մանկանը և Մարիամին ու ասաց. «Սա իսրայէլի մէջ շատերի համար ընկնելու և կանգնելու պատճառ

կլինի. քո սիրան էլ սրա պատճառով սրի կանցնի։

Այնտեղ էր և Աննա մարգարէուհին, որ 84 տարեկան մի ալրի կին էր. տաճարիցը երբէք չէր հեռացել. իւր օրերը ծոմով և աղօթքով էր անց կացնում ու գիշեր ցերեկ ծառայում էր տաճարին։ Երբ սա Յիսուս մանկանը տեսաւ, վեր կացաւ, զոհացաւ Աստուածանից և պատմում էր Մեսիային սպասողներին, թէ Յիսուսը մարգարէների խոստացած Փրկչչն է՝ Մեսիան է։

Այդ օրը տօն է։ Տօնի անունն է Տեառնընդառաջ-տօնում հնք վետրուարի 14-ին։

5.

ՏԱՄՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՄԸ ՏԱՁԱՐՈՒՄ

Մանուկը հասակով մեծանում էր ու զօրանում իմաստութիւնով—Աստծու շնորհը նրա վրայ էր։ Նրա ծնողներն ամենայն տարի Զատկի տօնին երուսաղէմ ուխտ էին գնում։ Երբ Յիսուսը 12 տարեկան դարձաւ, նրան էլ հետները երուսաղէմ տարան։ Տօնի օրերն անցնելուց ետոյ՝ ծնողներն ուզում էին վերադառնալ, բայց յանկարծ նկատեցին, որ Յիսուսը չկայ։

Կարծելով թէ նա ուղեկիցների հետ գնացած կլինի՝ մի օրուայ ճանապարհ ետ եկան և որոնում էին ազգականների ու ծանօթների մէջ։ Քայլ երբ չգտան, նորից դարձան Երուսաղէմ։

Երեք օր որոնելուց ետոյ, գտան տաճարում հրէաների վարդապետների մէջ նստած, ուր լսում էր նրանց և հարցեր էր առաջարկում։ Բոլոր լսողները զարմանում էին նրա իմաստուն պատասխանների վրայ։

Երբ ծնողները տեսան նրան, զարմացան։ Մայրն ասաց. «Որդեակ, այդ ինչ արիր մեզ, հայրդ և ես որոնում էինք քեզ»։ Նա պատասխանեց և ասաց. «Միթէ չգիտէք, որ ես իմ հօր տանը կլինէի»։ Այս խօսքերը ոչ ոք չհասկացաւ։

Յիսուսը նրանց հետ Նազարէթ դարձաւ և հնազանդ էր ծնողացը։ Մայրն այս բոլոր բաները պահում է մտքումը։

6.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ

Ա. Աւետումն։ Հրէից Հերովդէս թագաւորի օրերում մի քահանայ էր ապօռում անունը Զաքարիա։ Նրա կնոջ անունը Եղիսաբէթ էր։ Երկուսն էլ արդար էին և Աստծու բոլոր պա-

տուիրանները ճշտութեամբ էին կատարում։ Նրանք զաւակ չունէին. Երկուսն էլ ծերացած էին։

Մի անգամ, երբ քահանայական պարտքը կատարելու հերթը Զաքարիային հասաւ, Աստծու տաճարը մտաւ խնկարկելու համար։ Ժողովուրդը դուրսն աղօթում էր։ Խնկարկելու ժամանակ հրեշտակը երկաց Զաքարիային և նա խիստ վախեցաւ։

Հրեշտակն ասաց. «Մի վախենար, Զաքարիա, քո աղօթքը լսելի եղաւ. Եղիսաբէթ կինդ մի որդի կունենայ և նրա անունը Յովհաննէս կդնես։ Քեզ հետ շատերը կուրախանան նրա ծննդեան վրայ. Աստծու առաջ մեծ կլինի. Խորայէլի որդկերանցը կքարոզէ և շատերին դէպի ճշմարիտ Աստուծը կդարձնէ—նա առաջուց Եղիայի նման Աստծու համար ժողովուրդ կպատրաստէ»։

Զաքարիան պատասխանեց հրեշտակին. «Ի՞նչով պիտի իմանամ ես այդ բանը, որովհետեւ ես էլ կինս էլ ծերացած ենք»։ Հրեշտակը պատասխանեց. «Ես Գաբրիէլն եմ, որ կանգնում եմ Աստծու առաջ. Ես ուղարկուած եմ քեզ հետ խօսելու և աւետելու։ Բայց որ դու չհաւատացիր, իբրև պատիժ, համր կմնաս մինչև այն օրը՝ Երբ այս բոլորը կկատարուի։

Ժողովուրդն սպասում էր Զաքարիային և զարմանում, որ նա տաճարում այդքան ուշացաւ։

Երբ տաճարից դուրս եկաւ, այլևս չէր կարողանում խօսել։ Նրանք իսկոյն հասկացան, որ այստեղ մի բան է պատահել։ Զաքարիան նշաններով էր խօսում ժողովրդի հետ և մնաց պապանձուած։ Հերթակալութիւնն աւարտելուց ետոյ, վերադարձաւ տուն։

Բ. Ծնունդ։ Ժամանակը լրացաւ և եղիսաբէթը մի որդի ունեցաւ։ Երբ նրա դրացիները և ազգականները լսեցին, որ Աստուած մեծողամութիւն է արել, շատ ուրախացան։

Եօթն օրից ետոյ պէտք է մանկանը թլփատէին։ Նրա անունը կամենում էին Զաքարիա դնել, բայց մայրն արգելում էր և ասում, թէ նրա անունը Յովիաննէս պէտք է լինի։ Բարեկամները պատասխանեցին նրան, «Իո ազգականների մէջ ոչ ոք այդպիսի անուն չունի»։ Վերջն ամենքը հօրն ակնարկեցին, թէ նա ինչ անուն կցանկանայ։

Զաքարիան մի տախտակ պահանջեց և նրա վրայ գրեց, «Յովիաննէս է նրա անունը»։ Իսկոյն լեզուն բացուեց, խօսում և օրհնում էր Աստուածուն։ Ամենքն էլ զարմանում էին այս բանի վրայ և ասում, «Ի՞նչ պէտք է լինի այս մանուկը»։

Զաքարիան չոգուվ Սրբով լցուեց, մարգարէացաւ և ասաց. «Օրհնեալ է իսրայէլի տէր Աստուածը, նա այցելեց մեզ և իւր ժողովրդեան համար փրկութիւն պատրաստեց։ Իսկ դռւ, մանուկ, Բարձրելոյ մարգարէ կլինիս։ Տիրոջ առ-

ջնից կգնաս և նրա ճանապարհը կպատրաստես»։

Մանուկն աճում էր և հոգւով զօրանում։ Յովիաննէսի ծնողները վաղ մեռան—մնաց որբ։ Փոքը հասակից նա ապրում էր Յուղայի անապատում և շատ պարզ կեանք էր վարում։ Ուտում էր մարախ և վայրենի մեղք. հագուստը ուղտի բրդից էր, իսկ գոտիկը՝ կաշուից։

7.

ՅՈՎՀԱՆՆԵՍՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ Է ՔԱՐՈՉՈՒՄ ԵՒ  
ՄԿՐՏՈՒՄ

Երբ Յովիաննէսը 30 տարեկան դարձաւ, Աստուած նրան մարգարէ նշանակեց և ուղարկեց Յորդանանի կողմերը քարոզելու։ Արդ ժամանակ հոռվմի կայսրն էր Տիրերիոսը, իսկ Պոնտացի Պիղատոսը կառավարիչ էր Պաղեստինում։ Նոր մարգարէն այս մասին էր քարոզում. «Ապաշխարեցէք, զի ոերձեալ է արքայութիւն երկնից»։ Սիաններդ ուղղեցէք, երկնքի թագաւոր Քրիստոսը գալիս է. արդար գործեր կատարեցէք, որ կարողանաք նրա թագաւորութեան արժանանալ։ Յովիաննէսի մօտ շատ մարդիկ էին գալիս մկրտուելու, որովհետեւ վաղուց մարգարէ չէր

2



երևացել։ Նրա մօտ էին գնում երուսաղէմացիները, Հրէաստանի բոլոր ժողովուրդը, Յորդանանի կողմերից և խոստովանում էին իրանց մեղքերը, խորհուրդ էին հարցնում ու մկրտում նըրանից։

Սադուկեցիներից և փարիսեցիներից ևս շատերը եկան նրա մօտ, բայց ոչ թէ խորհուրդ հարցնելու, այլ՝ ծաղրելու համար։ Նրանք չէին եկել մարգարէից խրատ լսելու—փարիսեցիները պարծենում էին, որ իրանք օրէնքն ամբողջովին կատարում են, ուստի և արքայութեան ժառանգ են, իսկ սադուկեցիները չէին հաւատում յարութեան։ Այս պատճառով Յովհաննէսը յարձակուեց նրանց վրայ և ասաց. «Իժի ծնունդներ, ձեզ ովզ ցոյց տուաւ, որ փախչէք Սստծու բարկութիւնից»—ես յայտնում եմ ձեզ—սիալներդ ուղղեցէք, թէ չէ... «Դուք մի ասէք, թէ հայր Արքահամ ունինք. նա կպաշտպանէ մեզ. ես ասում եմ ձեզ, որ Աստուած կարող է այս քարերիցն էլ Արքահամի որդիք յարուցանել։ Արդէն կացինը ծառի արմատին է դրած. այն ծառը, որ բարի պտուղ չի բերի, կկտրուի և կրակը կձգուի»։

Մաքսաւորները ևս եկան Յովհաննէսի մօտ մկրտուելու։ Նրանք ասում էին. «Ի՞նչ պէտք է անենք, վարդապետ»։ Յովհաննէսը պատասխանեց. «Օրէնքով սահմանածից աւելի մի պահան-

ջէք»։ Զինուորները ևս հարցնում էին. «Հապամենք ի՞նչ անենք»։ Նա պատասխան տուաւ և ասաց. «Ոչ ոքի մի հարստահարէք. ձեր թոշակովը բաւականացէք»։ Ժողովուրդը ևս հարցնում էր և ասում. «Մենք ի՞նչ անենք»։ «Ով երկու հանգերձ ունի, թող մինը չունեցողին տայ, ով աւելորդ կերակուր ունի, թող նոյնպէս վարուի»։ Այսպիսի իմաստուն խրատների համար ժողովուրդը մտածում էր, թէ մի գուցէ սա լինի Քրիստոսը՝ խոստացեալ Մեսսիան։ Մի ուրիշը որ լինէր, այս գովասանքը կընդունէր, բայց Յովհաննէսը խոնարի կերպով մերժեց և ասաց. «Ես ձեզ ջրով եմ մկրտում, բայց ինձնից ետոյ կդայ ամենից զօրեղը, որի ծառան լինելու արժանի չեմ, նա ձեզ կմկրտէ Հոգով Սրբով ու կրակով։ Նա հեծանոցը ձեռին ունի բռնած, կալը կսրբէ, ցորենը կհաւաքէ շտեմարանում, իսկ յարդն անհանգչելի կրակով կալորէ, ահա նա է ճշմարիտ Մեսսիան։

II.

8.

Յ Ի Ս Ո Ւ Ի Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ւ Ը

Երբ Յիսուոը 30 տարեկան դարձաւ, Գալիլիայից Յովհաննէսի մօտ եկաւ մկրտուելու համար, բայց Յովհաննէսը մերժեց նրան և ասաց.

«Ես պէտք է քեզնից մկրտուեմ. դժւ ես ինձ մօտ գալիս»։ Յիսուսը պատասխանեց նբան և ասաց. «Մկրտիր ինձ, որովհետեւ դու ինձնից մեծ ես տարիքով, արդարութիւնը այսպէս պիտի կատարենք»։ Այս խօսքերը համոզեցին Յովհաննէսին և նա մկրտեց Յիսուսին։

Մկրտութիւնից ետոյ՝ Յիսուս ջրից դուրս եկաւ և ահա երկնքը բացուեց և Յովհաննէսը իւր մէջ լսեց և տեսաւ, որ Հոգին սուրբն աղաւնու կերպարանքով վայր էր իջնում նրա վրայ, իսկ երկնքից ձան էր գալիս, որ ասում էր. «Ի՞ս է իմ սիրելի Որդին, որին ես հաւանեցի»—ինչ որ կասէ, կատարեցէք։

### 9.

ՅԻՍՈՒՍ ՀՆՏՐՈՒՄ Է ՍԻՄՈՆԻՆ ԵՒ ՆՐԱ ՀՆԿԵՐՆԵՐԻՆ  
ԱՌԱՔԵԱԼՆԵՐ

Մկրտութիւնից ետոյ Յիսուս գնաց անապատ և 40 օր աղօթք անելով և ծոմ պահելով պատրաստուեց իւր կատարելիք մեծ գործի համար։ Սրանից ետոյ Գալիլիա եկաւ և այնտեղ քարոզում էր երկնից արքայութեան աւետարանն ու ասում. «Փամանակը լրացել է, Աստծու արքայութիւնը մօտեցել է, ապաշխարեցէք և հաւատացէք աւետարանին»։ Մեծ բազմութիւն էր հաւաքուել նրա շուրջը՝ Աստծու խօսքը լսելու

համար։ Նա եկաւ Գեննեսարէթի լճակի ափը և տեսաւ երկու նաւակներ ծովի մօտ կանգնած։ Դրանք ձկնորսներ էին, որոնք դուրս էին եկել ծովափը և իրանց ուռկաններն էին լուանում։ Յարմարութեան համար Յիսուս մտաւ նաւերից մինի մէջ, որ Սիմօնին էր պատկանում և խընդուեց նրան ցամաքից փոքր ինչ հեռացնել։ Յիսուս նստեց նաւակի մէջ և ծովի վրայից քարոզում էր Ժողովրդին։

Երբ քարոզը վերջացրեց, ասաց Սիմօնին և նրա եղբայր Անդրէասին. «Նաւակը ծովի խորը տաք և ուռկանը ձգիր»։ Սիմօնը պատասխանեց և ասաց. «Տէր, ամբողջ գիշերն աշխատել ենք և ոչինչ չենք բռնել բայց քո խօսքի համար ուռկանը կձգենք»։ Եւ երբ նրանք այս արին, ուռկանը ձկնով լցուեց՝ այնպէս որ քիչ մնաց պատառուէր։ Նրանք նշան տուին միւս նաւի մէջ եղողներին, որ գան և իրանց օգնեն ուռկանը դուրս քաշելու։ Եկան և երկու նաւերն էլ ընկըղմելու չափ ձկնով լցրին։

Երբ Սիմօնն այս չլսուած բանը տեսաւ, Յիսուսի ոտներն ընկաւ ու ասաց. «Ինձնից հեռու կաց, Տէր, ես մի մեղաւոր մարդ եմ»։ Ահը պատեց նրան, նոյնպէս նրա մօտ եղողներին, այն է Անդրէասին և Զեբեթիլի երկու որդւոցը՝ Յակովոսին և Յովհաննէսին, որոնք Սիմօնի ընկերներն էին։ Յիսուս ասաց Սիմօնին. «Մի վա-

խեսար, ոռւ այսուհետեւ մաքդիկ որսող կլինիս»։

Նրանք ափը հանեցին նաւակները, թողին իրանց գործիները և գնացին Յիսուսի հետ։

10.

ՅԻՍՈՒՍ ԿԱՆՉՈՒՄ Ե ՄԱՏԹԵՈՒՆ

Յիսուս մի մաքսաւոր տեսաւ՝ Մատթէոս անունով, որ նստած էր մաքսատանը և ասաց նրան. «Հետեիր ինձ»։ Նա էլ վեր կացաւ և գնաց Յիսուսի ետեից և դարձաւ նրա աշակերտ։

Մի անգամ, երբ Յիսուս Մատթէոսի տանը հացի էր, այստեղ հրաւիրուած էին իրան բարեկամ մաքսաւորներ և փարիսեցիներ ևս, որոնք նստեցին Յիսուսի ու նրա աշակերտների հետ։ Երբ տեսան փարիսեցիները, որ Յիսուս փոխանակ իրանց մօտ ճաշի գալու՝ մեղաւոր մաքսաւորների մօտ է եկել, ասացին աշակերտներին. «Ինչո՞ւ է ձեր վարդապետը մաքսաւորների հետ ուտում»։ Երբ Յիսուս այս բանը լսեց, ասաց նրանց. «Առողջները բժշկի կարօտութիւն չունին, այլ հիւանդները. ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղաւորներին»։ Զէ՞ որ դուք փարիսեցիներդ ձեզ արդար էք համարում. ուրեմն առողջ էք, իսկ մաքսաւորներին՝ մեղաւոր, ուրեմն նրանք հիւանդ են—հասկա-

նալի է, որ ես՝ իբրև բժիշկ, հիւանդ մտքսաւոր ների մօտ պիտի լինեմ։

Բացի այս հնգից Յիսուս ընտրեց եօթը հոգի ևս և նրանց անուանեց առաքեալներ—նրանց անուններն են—6. Փիլիպպոս, 7. Բարթոլոմէոս, 8. Թովմաս, 9. Յակովը Ալփեայ, 10. Սիմօն նախանձայոյզ, 11. Յուդա Յակովիան և 12. Յուդա Սկարովտիացի։

11.

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Մի քանի որդեսէր մալրեր ևս լսել էին Յիսուսի մասին։ Նրանք համոզուած էին, որ եթէ Յիսուս իրանց որդւոցն օրհնէ, բաղդաւոր կլինին, ուստի վեր առան իրանց որդւոց և Յիսուսի մօտ բերին, որ օրհնէ նրանց։ Աշակերտներն արգելում էին մայրերին և յանգիմանում, որ հանգիստ չեն տալիս իրանց ուսուցչին։ Յիսուս, երբ այս բանը տեսաւ, բարկացաւ և ասաց. «Թողէք մանուկներին և մի արգելէք դրանց ինձ մօտ գալու, որովհետեւ երկնքի արքայութիւնն այդպիսիներին է պատկանում։ Ճշմարիտն եմ ասում ձեզ. «Ով այս մանուկների նման սիրտ չի ունենայ, չի կարող մտնել Աստծու արքայութիւն»։ Յիսուս գըրկեց նրանց, ձեռը գլխներին դրաւ և օրհնեց։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՎԻՃՈՒՄ ԵՆ, ԹԷ Ո՞Վ Է ՄԵԾ ԵՐԿՆՔԻ  
ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Նորնատիր առաքեալներն այնպէս էին կարծում, թէ իրանց ուսուցիչը երկրաւոր թագաւոր է, շուտով Պաղեստինէն կլիէ Հովհայեցիներից, ինքը տէր կլինի և իրանց էլ մեծ մեծ պաշտօններ կտալ, բայց չէին կարողանում որոշել, թէ ամենամեծ պաշտօնն ումը կտալ, ուստի Յիսուսի մօտ եկան և ասացին. «Երկնքի արքայութեան մէջ ովէ մեզնից մեծը»։ Այս խնդրի մասին ճանապարհին շարունակ վիճում էին միմեանց հետ։ Յիսուս նկատեց, որ իւր աշակերտները չեն հասկանում իրան, ուստի մի մանուկ կանչեց, կանգնեցրեց աշակերտների առաջ և ասաց. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, մինչև սրտով սրանց նման մանուկներ չդառնաք, չէր կարող երկնքի արքայութիւնը մտնել։ Արդ՝ ով այս մանկան նըման խոնարհ կլինի, նա է մեծը երկնքի արքայութեան մէջ։ Ով մի այլպիսի մանուկ կընդունի իմ անունով, կնշանակէ ինձ է ընդունում։ Ով սրանցից մինին կգայթակղեցնէ, այնպիսին լաւ կանէ, եթէ իշի երկան կախ անէ վկից և ծովի անդունդի մէջ խեղտուի։ Ուրեմն զգոյշ կացէք մանուկներին գայթակղեցնելուց»։

Կ Ա.Ն Ա.Յ Ի Հ Ա.Ր Ս Ա.Ն Ի Ք Բ

Կանա քաղաքում հարսանիք էր։ Յիսուսի մայր Մարիամն էլ այնտեղ էր։ Ետոյ ինքը ևս իւր աշակերտներով հարսանիք հրաւիրուեց։ Այնտեղ գինին պակասեց։ Մարիամը տեսաւ, որ իւր որդու պատճառով է եղել այդ, ասաց Յիսուսին. «Գինի չունին»։ Յիսուսը պատասխանեց. «Ժամանակ չէ դեռ ևս, երբ պէտք լինի, գինի կունենան»։ Մայրը պատուիրեց ծառաներին և ասաց. «Ինչ որ նա ձեզ ասէ, կատարեցէք»։

Հրէաները հացից առաջ ձեռները լուանում էին, այս պատճառով այնտեղ վեց քարէ սափորներ կային դրած։ Յիսուս ասաց սպասաւորներին. «Սափորները ջրով լցրէք»։ Նրանք էլ մինչև բերանը լցրին։ Յիսուս ասաց նրանց. «Հիմա առէք, մառանապետին տարէք»։ Նրանք էլ տարան։

Մառանապետը՝ երբ գինի դարձած ջրի համը տեսաւ, չկարողացաւ իմանալ, թէ որտեղից է, ուստի դարձաւ փեսացին և ասաց. «Սովորաբար հացից առաջ լաւ գինի են բերում, ետոյ՝ երբ տաքանում են՝ վատը, իսկ դու լաւ գինին վերջն ես բերում»։

Այսպէս յայտնեց Յիսուս իւր փառքը և նրա աշակերտները աւելի հաւատացին նրան։

14.

Կ Ա. Փ Ա. Ռ Ն Ա Յ Ո Ւ Մ Ի Հ Ա. Ր Ի Ւ Ր Ա Պ Ե Տ Հ

Յիսուս եկաւ կափառնայում քաղաքը, Այնտեղ մի հարիւրապետ կար. սա թէև ազգով հոռվմայեցի էր և կուսպաշտ, բայց հրէաների կրօնը շատ էր սիրում—նրանց համար մի աղօթատուն էր շինել, Սա եկաւ Յիսուսի մօտ, աղաչում և ասում էր. «Տէր, իմ ծառան անդամալոյծ է և չարաչար տանջլում է»: Յիսուսը պատասխանեց. «Ես կգամ և կբժշկեմ նրան»: Հարիւրապետն ասաց. «Տէր, ես արժանի չեմ, որ դու իմ տուն գաս, մի խօսք տսակ և իմ ծառան կբժշկուի, որովհետև ես էլ իշխանութեան ներքոյ գտնուող մարդ եմ, իմ ձեռի տակ ունիմ գինուորներ, եթէ ես մինին ասում եմ, գնա, գնում է և միւսին՝ Եկ, գալիս է կամ ծառայիս այս բանն արա, անում է».—այսպէս էլ դու եթէ հիւանդութեանը հրամայես, կհեռանայ, առողջութեանը պատուիրես, կգայ:

Երբ Յիսուս այս խօսքերը լսեց, զարմացաւ և իրան հետեւողներին ասաց. «Ճշմարիտն եմ ասում, իսրայէլի մէջն էլ այսպիսի հաւատ չգտայ. բայց ասում եմ ձեզ, շատերը կգան արևելքից, արևմուտքից ինչպէս մոգերը և այս հոռմայեցին և Աբրահամի, Իսահակի ու Յակովի հետ արքայութեան մէջ կբաղմեն, իսկ ար-

քայութեան որդիքը՝ իսրայէլացիները կերթան արտաքին խաւարը»: Յիսուս ասաց հարիւրապետին. «Դնա, ինչպէս որ հաւատացիր, թող այնպէս էլ կատարուի»: Նրա ծառան հէնց այն ժամին էլ առողջացաւ:

15.

Տ Ա. Ս Ն Բ Ո Ր Ո Տ Ն Ե Ր Ի Բ Ժ Կ Ո Ւ Ի Լ Հ

Յիսուսը՝ Երուսաղէմ գնալիս, Սամարիաի և Գալիլիայի սահմանի վրայ պատահեց տան բորսուների, որոնք հեռու կանգնած աղաղակում էին և ասում. «Յիսուս վարդապետ, ողորմիլ մեզ»: Նրանցից ինը հրէա էին, իսկ մէկը՝ սամարացի: Յիսուս նրանց փորձելու համար ասաց. «Գնացէք և ձեր անձը քահանային ցոյց տուէք»: Նրանք փոխանակ ասելու թէ քահանան (այն ժամանակուայ բժիշկները) մեզ չի լնդունի, մենք դեռ հիւանդ ենք, հաւատացին Յիսուսի խօսքին, գնացին և իսկոյն բժշկուեցան:

Դրանցից միայն մինը ետ գարձաւ և բարձր ձախով փառաբանում էր Աստծուն: Նա Յիսուսի ոտներն ընկաւ և շնորհակալութիւն արաւ նրան:

Այն ժամանակ Յիսուսը հարցրեց. «Զէ որ տասն հոգի բժշկուեցան, հապա մւր են ինը»: Միւսները չեկան Աստծուն շնորհակալութիւն անելու՝ բացի այս սամարացուց: Յիսուս ասաց նրան. «Վեր կաց և գնա, քո հաւատը քեզ փրկեց»:

16.

ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՀՈՐԾ

Այն մարդիկը, որոնք իրանք են իրանց արժանաւորութիւնը չափում, բարեպաշտ համարում, իսկ ուրիշներին արհամարհում, վատաքանում, այդպիսիների համար Յիսուս այս առակը պատմեց.

«Երկու մարդիկ տաճար գնացին աղօթքանելու։ Նրանցից մինը փարիսեցի էր, իսկ միւսը՝ մաքսաւոր։ Փարիսեցին առանձին կանգնած սրբութեան առաջ՝ այսպէս էր աղօթում—շնորհակալ եմ քեզնից, Աստուած, որ ես ուրիշ մարդկանց նման յափշտակող, անիրաւ կամ շնացող չեմ, ինչպէս այս մաքսաւորն է։ շաբաթը երկու անգամ ծում եմ պահում և իմ բոլոր ստացուածներից տասանորդ եմ տալիս»։

Իսկ մաքսաւորը հեռու կանգնած դաւթում՝ աչքերը երկինք բարձրացնել չէր կամենում, այլ իւր կուրծքն էր ծեծում և ասում. «Աստուած, քաւիր մեղաւորիս»։

Ասում եմ ձեզ, սա արդարացած վերադարձաւ իւր տուն, որովհետեւ ով իրան կբարձրացնէ փարիսեցու նման, կխոնարհի, իսկ ով կխոնարհեցնէ մաքսաւորի նման, կբարձրանայ»։

17.

ԱՆ ԱՌԱԿ ՈՐԴՈՒԻ ԱՌԱԿԸ

Մի մարդ ունէր երկու որդի։ Փոքրն ասաց հօրը. «Հայր, տո՛ւր ինձ իմ բաժինը քո ունեցածից»։ Հայրը տուաւ նրան իւր բաժինը։ Շատ օր չանցած՝ փոքր որդին առաւ իւր բաժինը և գնաց հեռու աշխարհ ու այնտեղ իւր ունեցածը վատնեց՝ անառակ կեանք վարելով։

Երբ բոլորը կերաւ, վերջացրեց, հենց այն ժամանակ այն երկրութն էլ սաստիկ սով ընկաւ։ Նա սկսեց մուրացկանութեամբ ապրել։ Վերջը գնաց այն երկրի քաղաքացիներից մինի մօտ ծառայութեան մտաւ։ Նա էլ ուղարկեց իւր հանդը, որ խոզեր արածացնէ։ Փոքր որդին ցանկանում էր իւր փորը լցնել խոզերի կերածով, բայց այդ էլ չկար։

Նա սկսաւ մտածել և ինքն իրան ասել. «Քանի վարձկաններ իմ հօր տանը հաց են ուտում, իսկ ես այստեղ սովամահ կորչում եմ։ կդնամ հօրս մօտ և կասեմ նրան—հայր, ես մեղաւոր եմ քո և Աստծու առաջ, այլևս արժանի չեմ քեզ որդի կոչուելու. ընդունիր ինձ իբրև քո մշակներից մինը»։

Փոքր որդին վեր կացաւ և եկաւ հօր մօտ։ Հայրը նկատեց նրան հեռուից, զթաշարժուեց,

առաջ վաղեց, վզովս ընկաւ և համբուրեց։ Որդին ասաց. «Ես մեղաւոր եմ քո և Աստծու առաջ, այլևս արժանի չեմ քեզ որդի կոչուելու»։ Հայրն ասաց իւր ծառաներին. «Հանէք սրա հին շորերը և նորը հազցըէք. մատանին դրէք մատին, ոտներին կօշիկներ հազցըէք, մսացու եզը մորթեցէք, ուտենք և ուրախանանք, որովհետեւ իմ այս որդին մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գտնուեց»։ Ամենքն սկսեցին զուարձանալ.

Մեծ որդին հանդումն էր; Երբ տուն դարձաւ՝ երգելու և պարելու ձայներ լսեց։ Ծառաներից մինին կանչեց իւր մօտ և հարցըեց, թէ այդ ինչ է; Նա էլ պատասխանեց. «Եղբայրդ դարձել է. քո հայրը մսացու եզը մորթել տուաւ նրա գալստեան պատճառվ և ահա ամենքն էլ ուրախանում են»։

Սա՛ փոխանակ ուրախանալու՝ բարկացաւ և ներս չէր կամենում մտնել, բայց հայրը, որ իւրաւում ունէր հրամայելու, դուրս եկաւ և աղաչում էր նրան տուն գալ; Նա բարկացած պատասխան տուաւ հօրն ու ասաց. «Ահա այս քանի տարի է քեզ ծառայում եմ, քո պատուէրից երբէք դուրս չեմ եկել, բայց ինձ մի ուշ էլ շտուիր, որ իմ բարեկամների հետ ուրախանամ, իսկ այդ որդիդ, որ քո կալըը կերաւ, նբա համար մսացու եզն ես մորթել»։

Հայրն ասաց նրան. «Որդեակ, դու ամեն

ժամանակ ինձ մօտ ես և այն ամենն՝ ինչ որ իմս է, քոնն է. բայց դու պէտք է ուրախանայիր, որովհետեւ քո եղբայրը մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գտնուեց»։

18.

ՅԻՍՈՒՍ ԲԺՇԿՈՒՄ Է ԿՈՅՑՐԻՆ ԵՐԻՔՈՎԻ ՄՕՏ

Յիսուս անցնում էր Երիքով քաղաքի մօտով։ Մի կոյր ճանապարհի վրայ նստած՝ մուրում էր, Եւ երբ նա ժողովրդի անցնելը լսեց, հարցըեց, թէ այդ ինչ է։ Նրան պատասխանեցին, որ Յիսուս Նազովրեցին է անցնում։ Կոյրըն սկսաւ բարձր ձայնով աղաղակել և ասել. «Դաւթի որդի Յիսուս, ողորմիր ինձ»։ Առաջնից գնացողները յանդիմանում էին, որ լոէ, իսկ նա ևս աւելի բարձր ձայնով էր աղաղակում. «Դաւթի որդի Յիսուս, ողորմիր ինձ»։

Յիսուս կանգ առաւ և հրամայեց իւր մօտ բերել կոյրին և բերին։ Յիսուս հարցըեց. «Ի՞նչ ես կամենում»։ Նա էլ պատասխանեց. «Տէր՝ ուզում եմ տեսնել»։ Յիսուս պատասխանեց նըրան. «Տէս, քո հաւատը քեզ փրկեց»։ Նա սկսաւ այն ըոպէին տեսնել, գնում էր նրա ետեից և փառաբանում Աստծուն։ Ժողովուրդն այս որ տեսաւ, սկսաւ Աստծուն օրհնել».

19.

ՅԻՍՈՒՄ ԵՒ ԶԱԿՔԵՈՍԸ

Յիսուս մտաւ Երիքով և անցնում էր քաղաքի միջովը։ Այստեղ մի մարդ կար՝ անունը Զակքէոս, որը մաքսապետ էր և հարուստ։ Նա սրտով ցանկանում էր Յիսուսին տեսնել, բայց բազմութեան պատճառով չէր կարողանում, որովհետև կարճահասակ էր։ Յիսուսին տեսնելուց անկութիւնն այնքան մեծ էր, որ նա ուշը չըդարձրեց ժողովրդի ծիծաղին։ Ուստի առաջ վազեց և բարձրացաւ թզենու վրայ, որպէսզի Յիսուս այնտեղովն անցնելիս, կարողանայ տեսնել։

Երբ Յիսուս այնտեղ հասաւ, վեր նայեց և ասաց նրան. «Զակքէ, շնոր արա, իջիր, այսօք պէտք է քո տանն իջևանեմ»։ Զակքէոսն շտապով վայր իջաւ և ուրախութեամբ ընդունեց նրան։

Փարիսեցիները տրտնջում և ասում էին, թէ էլի մեղաւոր մարդու մօտ գնաց հանգստանալու։ Անպատճառ Յիսուսն այնտեղ կքարողէր և քարոզի հետեանքն այն է եղել, որ Զակքէոսը չառաջ եկաւ և ասաց. «Տէր, իմ հարստութեան կէսը կտամ աղքատներին—եթէ մինին զրկել եմ, չորեքպատիկ կվճարեմ»։

Յիսուս ասաց. «Այսօր վրկութիւն եղաւ այս տանը, որովհետեւսա էլ Աբրահամի որդի դարձաւ. եռ եկել եմ, որ այսպիսի կորածներին գտնեմ»։

20.

ՅԻՍՈՒՄ ԲԺՇԿՈՒՄ Է ԽՈՒԼՈՒՀԱՄՐԻՆ

Մի անգամ Յիսուսի մօտ մի լառլուհամը բերին և աղաչում էին, որ ձեռը նրա վրայ դնէ։ Յիսուս ամբոխից հեռացրեց հիւանդին. մատնելն ականջի մէջ դրաւ. թքեց այնտեղ. լեզուն շշափեց. վերև նայեց. հոգւոց հանեց և ասաց. «Եփփատայ», որ նշանակում է բացուիր։ Խսկոյն նրա ականջները բացուեցան և սկսաւ խօսել։ Պատուիրեց ոչ ոքի չասել, բայց որքան նա արգելում էր, նրանք ևս առաւել քարոզում, տարածում էին։

21.

ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑՈՒ ԱՌԱԿ

Յիսուս մի օրինականի հետեւեալ առակը պատմեց։

«Մի մարդ Երուսաղէմից գնում էր Երիքով։ Ճանապարհին աւազակների ձեռն ընկաւ, որոնք վիրաւորեցին անծանօթին, կիսամահ թողին և գնացին։

Պատահմամբ մի քահանայ այդ ճանապարհովն անցաւ, տեսաւ նրան, բայց ոչինչ չարաւ—անցաւ, գնաց։ Նոյն տեղովն անցաւ մի դկտացի։ Նա ևս չօգնեց և անցաւ, գնաց։

Եկաւ մի սամարացի ճանապարհորդ։ Սա  
երբ տեսաւ վիրաւորուածին, խղճաց. իսկոյն ի-  
շաւ գրաստից. մօտեցաւ. վէրքերը փաթաթեց.  
վրան ձէթ ածեց. գինի խմացրեց. գրաստի վրայ  
գրաւ և տարաւ հետեւեալ իջևանը։ Միւս օրը,  
երբ պէտք է հեռանար, երկու դահեկան տուաւ  
իջևանի տիրոջը և ասաց. «Խնամք տար սրա  
վրայ և եթէ աւելի ծախս անես դրա համար,  
վերադարձիս կվճարեմ»։ Յետոյ Յիսուս հարցրեց  
օրինականին. «Ի՞նչ ես կարծում՝ այն երեքից  
մին է ընկերաբար վարուել աւազակների ձեռն  
ընկած մարդուն», Օրինականն ասաց. «Նա՝ որ  
ողորմութիւն արաւ»։ Այն ժամանակ Յիսուս ա-  
սաց. «Գնա՞ դու էլ այնպէս արա»։

22.

Ա Յ Ր Ի Կ Ն Ո Զ Լ Ո Ւ Մ Ա Ն

Յիսուս տաճարում ուսուցանում էր. Նայեց  
և տեսաւ, որ հարուստները գանձանակ են ձգում։  
Տեսաւ նաև մի այրի աղքատ կին, որ երկու  
լումա ձգեց այստեղ։ Յիսուս ասաց. «Ճշմարիտ  
եմ ասում ձեզ, այս որբեայրին ամենից շատ  
տուաւ, որովհետև նրանք իրանց աւելորդ ու-  
նեցածից Աստծու համար զոհ բերին, իսկ սա  
իւր աղքատ տեղովը բոլոր ունեցածը ձգեց»։

23.

Զ Ա Ր Ծ Ա Ռ Ա Յ Ի Ա Ռ Ա Կ Ը

Յիսուս ասաց հետեւեալ առակը. «Մի թա-  
գաւոր կամենում էր իւր ծառաների հետ հաշիւ  
տեսնել։ Երբ հաշիւն սկսաւ՝ նրա մօտ բերին մի  
մարդու, որ պարտական էր թագաւորին բիւր (10,000) քանքար (20,000.000 ռուբլի)։ Բայց  
որովհետև նա չկարողացաւ վճարել, ուստի տէրը  
հրամայեց նրա կինն ու որդիքը և բոլոր ունե-  
ցածը ծախել և գինը վերցնել պարտքի փոխա-  
րէն։ Ծառան տիրոջ ոտներն ընկաւ. երկրպա-  
գութիւն էր տալիս և ասում. «Համբերիր, տէր,  
բոլորը կվճարեմ. ժամանակ տուր. պարտքս չեմ  
ուրանում»։ Տէրը հաւանեց ծառայի վարմունքը,  
խղճաց նրան և ոչ միայն ժամանակ տուաւ, այլ՝  
ամբողջ պարտքը ներեց։

Արդ միենոյն ծառան պատահեց իւր. ընկեր  
ծառաներից մինին, որ իրան հարիւր դահեկան  
(60 ռ.ք.) էր պարտ։ Բոնեց նրան, խեղտում էր  
և ասում. «Վճարիր, ինչ որ ինձ պարտական ես»։  
Ծառայակիցը նրա ոտքերն ընկաւ. աղաջում էր  
և ասում. «Համբերիր, բոլորը կհատուցանեմ,  
խնդրում եմ ժամանակ տնւր»։ Բայց նա չհամա-  
ձանեց, այլ գնաց և բանտարկել տուաւ մինչև  
պարտքը կվճարէ։

Ընկեր ծառաները, երբ այս բանը տեսան,

շատ բարկացան, եկան և իրանց տիրոջը յայտնեցին: Այն ժամանակ տէրը նրան իւր մօտ եկանչեց և ասաց. «Չար ծառայ, ես քո բոլոր պարտքը ներեցի, որովհետեւ դու ինձ լուղբեցիր ժամանակ տալ. միթէ դու էլքո ընկերին չպիտի խղճայիր»: Տէրը բարկացաւ և ծառային մատնեց դահիճներին՝ մինչև որ պարտքն ամբողջապէս վճարէ:

Իմ երկնաւոր հայրն էլ ձեզ հետ այդպէս կվարուէ, եթէ ձեզնից իւրաքանչիւրը իւր եղբօր հետ այդպէս չի վարուի:

Այն ժամանակ մօտ եկաւ Սիմօն Պետրոսն և ասաց. «Տէր, մինչև քանի անգամներեմ իմեղբօրը, եթէ նա իմ դէմ մեղանչէ, եօթն անգամ բաւական չէ»: Յիսուս պատասխանեց և ասաց. «Ոչ թէ եօթը, այլ եօթանասուն անգամ եօթը»:

24.

ՀԻՆԳ ՀԱԶԱՐԻ ԿԵՐԱԿՐԵԼ

Յիսուս իւր աշակերտների հետ գնաց մի անապատ տեղ, որ գտնւում էր Բեթսայիդա քաղաքի մօտ: Ժողովուրդն իմացաւ այդ բանը և մեծ բազմութիւնով գնաց նրա ետևից: Երբ Յիսուս խօսքի կարօտ ժողովրդին տեսաւ, խիստ ցաւեց, որովհետեւ նրանք նման էին անհովիւ հօտի: Նա քարոզեց նրանց Աստծու արքայութեան մասին

և բժշկեց հիւանդներին: Թէկ օրն սկսել էր մթնել, բայց ունկնդիրները յափշտակուած քարոզից, ամեն ինչ մոռացել էին: Աշակերտները Յիսուսի մօտ եկան և ասացին. «Արձակիր ժողովրդին, որ գնան մերձակայ գիւղերը հանգստանալու և կերակուր գտնելու, որովհետեւ մենք ոչինչ չունինք ուտելու և անապատումն ենք»: Յիսուս պատասխանեց նրանց. «Դուք կերակրեցէք դրանց»: Աշակերտներն ասացին. «Մենք հինգ հացից և երկու ձեզնից աւելի ոչինչ չունինք, դա ինչպէս կբաւականացնէ այդ բազմութեանը»:

Յիսուս ասաց աշակերտներին. «Նստացը էք ժողովրդին կարգ՝ կարգ՝ յիսուն-յիսուն»:

Այդպէս էլ արին: Բացի կանանցից և երեխաներից՝ տղամարդկանց թիւը 5,000 էր: Յիսուս վեր առաւ հինգ հացը և երկու ձուկը, գոհացաւ, կտրեց և աշակերտներին տուաւ, իսկ նրանք էլ՝ ժողովրդին: Ամենքը կերան, կշտացան, իսկ երբ վեր կացան, Յիսուս ասաց աշակերտներին. «Հաւաքեցէք վշրանքները»: Տասն և երկու զամբիւղ վշրանք ժողովեցին:

Ժողովուրդը, երբ տեսաւ այս հրաշքը, ասաց. «Սա է ճշմարիտ մարդարէն, որ աշխարհ պէտք է գար»: Յիսուս նկատեց, որ իրան թագաւորի տեղ են ընդունում, հեռացաւ լեառը:

25.

Ք Ա Ն Ա Ն Ա Ճ Ի Կ Ի Ն Հ

Յիսուս գնաց Տիւրոսի և Սիդոնի կողմերը Եւ ահա մի քանանացի հեթանոս կին աղաղակում էր նրա ետևից և ասում. «Ողորմիր ինձ, Տէր, Դաւթի որդի, իմ աղջիկը չարաշար դիւահարում է»։ Յիսուս կնոջը փորձելու համար՝ ոչինչ պատասխան չտուաւ։

Մօտեցան աշակերտաները, աղաչում էին Յիսուսին և ասում. «Արձակիր սրան, որովհետեւ մեր ետևիցն աղաղակում է»։ Նա պատասխան տուաւ և ասաց. «Ես ուղարկուել եմ իսրայէլի տան ոչխարների մօտ և ոչ հեթանոսների»։ Կինը մօտ եկաւ, Յիսուսի ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, օգնիր ինձ ևս»։

Յիսուս պատասխանեց և ասաց. «Լաւ չէ երեխաների ձեռիցը հացն առնել և շներին ձըգել»։ Կինը պատասխանեց. «Այն, Տէր, բայց շներն էլ իրանց տէրերի սեղանից ընկած փըշը բովն են կերակըւում»։

Յիսուս պատասխան տուաւ ու ասաց. «Ո՛վ կին, քո հաւատը մեծ է, թող այնպէս լինի, ինչպէս որ դու ես կամենում»։ Նրա դուստրը նոյն ժամին բժշկուեց։

26.

ՅԻՍՈՒՍ ՔԱՐՈՁՈՒՄ Է ՆԱԶԱՐԵԹՈՒՄ

Յիսուս հոգւով զօրացած՝ դարձաւ Գալիլիա։ Նրա համբաւը տարածուել էր շրջակայ բոլոր երկրներում։ Նա քարոզում, ուսուցանում էր նրանց ժողովրդանոցներում։ Ամենքը յարգում էին նրան։

Յիսուս եկաւ իւր հայրենի Նազարէթ քաղաքը և իւր սովորութեան համեմատ շաբաթօրը ժողովրդանոց գնաց և կամեցաւ կարդալ։ Նրան տուին Եսայեալ մարգարէի գիրքը և երբբաց արաւ, գտաւ այն տեղը, որ գրուած էր. «Տիրոջ հոգին իմ վրայ է, որի համար էլ օծեց ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին աւետիք տալու, սրտով կոսրուածներին բժշկելու, զերիներին թողութիւն քարոզելու, կոյրերին տեսութիւն տալու և Տիրոջ ընդունելի տարին քարոզելու»։

Այս նիւթի վրայ խօսեց և երբ քարոզը վերջացրեց, գիրքը խփեց՝ սպասաւորին տուաւ և նստեց ժողովրդանոցի մէջ, ամենքն էլ զարմացած նրան էին մտիկ տալիս։ Յիսուս ասաց. «Այսօր այս գրուածքը կատարեց ձեր ներկայութեամբ», Ամենքը վկայում էին այս բանին և զարմանում այն շնորհալի խօսքերի վրայ, բայց

միւնոյն ժամանակ ասում էին—սա հիւսն Յովսէփի որդին չէ։ Յիսուս ասաց նրանց. «Դուք ինձ ստիպում եք ասելու — բժիշկ, բժշկիք քո անձը. նրբան հրաշքներ ես կատարել Կափառնայումի մէջ, այստեղ՝ քո հայրենիքումն էլ արա, որ տեսնենք ու հաւատանք։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, Եղիալի ժամանակ իսրայէլի մէջ շատ որբեալրի կանալք կային, երբ երկինքը երեք տարի և վեց ամիս փակուեց, անպէս որ բոլոր երկրի մէջ մեծ սով ընկաւ, սական Եղիան բացի սարեալթացի մի որբեալրի կնոջից՝ ոչ ոքի մօտ չուղարկւեց։

Հասկացան որ իրանց է ակնարկում, ամենքըն էն բարկութիւնով լցուեցան ժողովրդանոցի մէջ, քաղաքից դուրս հանեցին և տարան մինչեւ այն լերան գլուխը, որի վրայ բաղաքն էլ շինած, որպէսզի այն բարձր տեղից վայր ձգեն, իսկ Յիսուս նրանց միջովն անցաւ և դնաց։

Հրաշքը գործուեց, բայց ոչ այն ժամանակ, երբ նրանք էին կամենում։

Մի երիտասարդ փարիսեցի մօտեցաւ Յիսուսին և ասաց. «Բարի վարդապետ, ի՞նչ բարի բան գործեմ, որ յաւիտենական կեանք ժառան-

գեմ»։ Յիսուս ասաց նրան. «Եթէ կամենում ես յաւիտենական կեանք ունենալ, պահի՛ր պատուիրանները»։ Երիտասարդը հարցրեց. «Ո՞ր պատուիրանները»։ Յիսուս պատասխանեց. «Մի սպանիր, մի՛ գողանար, սուտ մի՛ վկայիր, պատուի՛ր քո հօրն ու մօրը և քո ընկերին քո անձի չափ սիրի՛ր»։

Երիտասարդը պատասխանեց. «Այդ ամենն իմ երեխալութիւնիցն սկսած՝ պահել եմ, էլ ի՞նչ քան է պակաս ինձ»։ Այն ժամանակ Յիսուս նայեց նրան և ասաց. «Մի բան պակաս է քեզ, եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա և ծախի՛ր ունեցածդ. կերակրիր աղքատներին, այն ժամանակ կունենաս երկնքումը գանձ»։

Երբ պատանին այս խօսքերը լսեց, տխուր և տրտում հեռացաւ, որովհետեւ նա շատ հարուստ էր։ Յիսուս դարձաւ և ասաց իւր աշակերտներին. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, մալուկը՝ չուանը հեշտութեամբ ասեղի ծակովը կամցնի՝ քան թէ մի հարուստը Աստծու արքայութիւնը կմտնէ»։ Երբ այս բանն աշակերտները լսեցին, շատ զարմացան և ասացին. «Ճապա էլ ով կարող է փրկուել»։ Յիսուս ասաց. «Մարդկանց համար անկարելի է դա, իսկ Աստծու օգնութեամբ ամեն բան հնարաւոր է»։

28.

Ա Ն Մ Ի Տ Հ Հ Ա Ր Մ Ս Ի Ա Ռ Ա Կ Ը

Յիսուս հետևեալ առակն ասաց. «Մի հարուստ մարդու արտերն առատ պտուղ տուին։ Նա մտածում և ասում էր—ի՞նչ անեմ, տեղ չունիմ արտերիս պտուղները ամբարելու։ Շտեմարաններս կրանդեմ, աւելի մեծերը կշինեմ և բոլոր բերքերն այնտեղ կհտւաքեմ. ետոյ կասեմ ինձ—ով անձն, շատ բարիքներ ունիս՝ շատ տարիների համար ամբարուած, կեր, խմիր և ուրախացիր»։

Բայց Աստուած ասաց նրան. «Անմիտ, այս գիշեր քո հոգին քեզնից որ պահանջեն, այսքան պատրաստածներդ ի՞նչ պիտի անես»։

Այսպէս էլ ամենայն մարդու վիճակն է—ով միայն իւր անձի համար է դանձ հաւաքում, Աստծու մօտ հարուստ չէ»։

29.

ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՉԽԱՐԻ ԵՒ ԴՐԱՄԻ ԱՌԱԿՆ

Յիսուսի մօտ լսելու նպատակով շատ մաքսաւորներ և մեղաւորներ եկան։ Փարիսեցիները և դպիրները տրանջում էին ու ասում. «Սա ընդունում է մեղաւորներին և նրանց հետ յարաբերութիւն ունի»։

Ալդիսի մտածողների համար Յիսուս այս առակն ասաց. «Եթէ ձեզանից մինը հարիւր ոչ խար ունենայ և մինը կորցնէ, արդեօք չի թողնի իննսունինը փարախում և չի գնայ այն կորածի ետևիցը՝ մինչև որ գտնէ նրան։ Եւ երբ գտնէ, ուրախանալով իւր ուսերի վրայ չի դնի և տուն գալով բարեկամներին և դրացիներին չի կանչի ու չի ասի—ուրախացէք ինձ հետ, որովհետեւ իմ կորած ոչխարը գտայ։ Ասում եմ ձեզ, այսպէս էլ ուրախութիւն կլինի երկնքումը մէկ մեղաւորի համար, որ կապաշխարէ, քան թէ իննսուն ինն արդարների համար, որոնք ապաշխարութեան կարիք չունին»։

«Եւ կամ եթէ մի կին տասը դրամ ունենայ և մինը կորցնէ, արդեօք ճրագ չի վառի, տունը չի աւելի և չի որոնի՝ մինչև որ գտնէ։ Եւ երբ գտնէ, բարեկամներին և դրացիներին չի կանչի ու չի ասի—ուրախացէք ինձ հետ, որովհետեւ կորած դրամս գտայ։ Ասում եմ ձեզ, այսպէս էլ Աստծու հրեշտակների մօտ ուրախութիւն կլինի մէկ մեղաւորի համար, որ կապաշխարէ»։

30.

ՅԱՅՐՈՍԻ ԴՈՒՍՏՐԸ ԵՒ ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆԻՆ

Ա. Յայրոս անունով մի մարդ, որ ժողովրդի

իշխաններից մինն էր, եկաւ Յիսուսի մօտ ընկաւ նրա ոտները. աղաջում և ասում էր. «Իմ աղջիկը մահամերձ է, եթէ գաս և ձեռդ նրա վրայ գնես՝ կառողջանայ»:

Յիսուս գնաց նրա հետ: Մեծ բազմութիւն հետեւում էր նրան: Տուն չհասած իշխանի ծառաներից մինն եկաւ և ասաց. «Քո աղջիկը մեռաւ, Վարդապետին անհանգիստ մի անիր»: Երբ այս բանը Յիսուս լսեց, ասաց իշխանին, «Մի վախենար, հաւատու միայն»:

Յիսուս տուն եկաւ, տեսաւ փողհարներին ու ժողովրդին: Արդէն պատրաստում էին թաղելու: Ոչ ոքի թոյլ չտուաւ, որ իւր հետ տուն մանէ՝ բացի Սիմօնից (Պետրոս), Յակովոսից և Յովհաննէսից: Ամենքը լալիս և ողբում էին: Յիսուս ասաց. «Մի լաք, նա չէ մեռել, այլ քնած է»: Այս խօսքերի վրայ ամենքն էլ ծիծաղեցին, որովհետև դիտէին, որ մեռած է:

Յիսուս պատուիրեց տանը եղողներին դուրս գալ. առաւ իւր հետ երեխայի հօրն ու մօրը և նրանց, որոնք իւր հետն էին ու մտաւ այստեղ, ուր երեխան պառկած էր: Բոնեց նրա ձեռից և ասաց. «Ճալիթա, կումի», այսինքն՝ աղջիկ, վեր կաց:

Իսկոյն վեր կացաւ աղջիկը և ման եկաւ: Յիսուս հրամայեց կերակուր տան ուտելու: Ամենքը զարմացան այս բանի վրայ:

Ա. Արանից ետոյ Յիսուս եկաւ Նային քաղաքը: Նրա հետ գնում էին աշակերտները և բազմաթիւ ժողովուրդ: Երբ քաղաքի դուռն մօտեցաւ, տեսաւ մեռել էին տանում, որ մի այրի կնոջ միակ որդին էր: Դազաղի ետևից մեծ բազմութիւն էր գնում: Յիսուս մօտ գնաց և մօրն ասաց. «Մի լաք»: Ետոյ մօտ եկաւ, դազաղը շօշափեց: Տանողները կանգնեցին: Յիսուս ասաց. «Պատանի, քեզ եմ ասում, վեր կաց»:

Մեռելը վեր կացաւ, նստեց և սկսաւ խօսել: Ամենքին երկիւղը պատեց: Աստծուն փառք էին տալիս և ասում. «Մեծ մարդարէ է վեր կացել մեր մէջ: Աստուած իւր ժողովրդին յիշել է»:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ  
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԸ

Ա. Յովհաննէսի աշակերտները ևս՝ ինչպէս երեմն Յիսուսի աշակերտները, այն կարծիքի էին, որ Յիսուս երկրաւոր թագաւոր է. նա հովմայեցիներին պիտի արտաքսէ Պաղեստինից և Դաւթի գահի վրայ բազմէ: Բայց փոխանակ սրան տեսնում են, որ նա բժշկում է հոռվմայեցի հարիւրապետի ծառային, իրանց ուսուցիչը բանտում շղթայակապնստած է, Յիսուս չի ազատում նրան, ուստի Յովհաննէսը համոզում էր իւր աշակերտներին, որ նա իսկական

Միսիան է, բայց ուսուցչի ծանր շղթաները գայթակղեցնում էր նրանց։ Եւ երբ ինքը չկարողացաւ համոզել աշակերտներին, պատռվիրեց գնալ և անձամբ իրենից տեղեկանալ։ Այս պատճառով, աշակերտներից երկուսին ուղարկեց նրա մօտ հարցնելու։ «Դու ես այն Մեսիան, որ գալու էիր, թէ ուրիշն սպասենք»։

Աշակերտները եկան Յիսուսի մօտ և գտան նրան շրջապատուած ամեն տեսակ հիւանդնեներով և յայտնեցին իրանց ուսուցչի պատռէրը։

Յիսուս տեսնելով, որ նրանք թերահաւատ են գարձել, պատասխանեց և ասաց. «Գնացէք Յովհաննէսին պատմեցէք, ինչ որ տեսաք—կոյրերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբում են, խուլերը լսում են, մեռեները յարութիւն են առնում և աղքատներին աւետարանն է քարոզում—եթէ իսկական Մեսիա չլինէի, այս հրաշքները չէի կարողանայ գործել և վերջն աւելացրեց—երանելի է նա, որ ինձ վրայ չի գայթակղուի Յովհաննէսի նման։

Բ. Յիսուս նկատեց, որ Յովհաննէսի աշակերտները իրանց ուսուցչին չեն հասկանում և երբ նա եկաւ Փիլիպպեայ կեսարիայի կողմերը, ուզեց իմանալ թէ ի՞ւր աշակերտներն ինչ կարծիք ունեն իրա մասին, ուստի հացրեց նրանց ու ասաց. «Մարդիկ ինձ համար ի՞նչ են ասում

— ով է մարդու Որդին»—ով եմ ես։ Նրանք էլ ասացին. «Ոմանք ասում են՝ թէ Յովհաննէս Մկրտիչն ես, միւսները՝ Եղիան և ուրիշներն էլ՝ երեմիան կամ մարգարէներից մինն ես»։

Յիսուս հարցրեց. «Իսկ դուք ի՞նչ էք ասում, ով եմ ես»։ Սիմօնն առաջինը պատասխանեց և ասաց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծու Որդին»։

Յիսուս ասաց. «Երանի քեզ, Սիմօն՝ Յովհաննի որդի, որովհետեւ այդ բանը դու չէիր, որ իմացար, այլ իմ երկնաւոր Հայրը իմանալու շնորհ տուաւ քեզ, ուստի ես ասում եմ—ով քեզ նման վիմի հաւատ կունենայ, նրա վրայ էլ կշինեմ իմ եկեղեցին, որին դժողքի գոներն էլ չեն կարող շարժել։ Քեզ կտամ երկնքի արքայութեան բանալիները, ինչ որ երկրիս վրայ կկապես, կտպուած կլինի երկնքումը, ինչ որ կարձակես երկրիս վրայ, երկնքումն էլ արձակուած կլինի»։ Արգելեց իւր աշակերտներին, որ ոչ ոքի չասեն, թէ նա Յիսուս Քրիստոսն է։

կովբոսին և Յովհաննէսին ու բարձրացաւ Թափոր լեառը։ Երբ լերան գլուխը հասաւ, Յիսուս սկսաւ աղօթել։ Այդ ժամանակ նրա կերպարանքը փոխուեց՝ պայծառացաւ (այլակերպուեց)։ Երեսը արեի պէս լուսաւորուեց, իսկ շորերը ձիւնի նման սպիտակ դարձաւ։ Այդտեղ՝ լուսով պատաժ երևեցան նրան Մովսէս և եղիա մարդարէները։ Նրանք խօսում էին Յիսուսի հետինչ որ Երուսաղէմում պիտի պատահէր նրա հետ։

Պետրոսն առաջ խօսքով խոստովանել էր Յիսուսի Սատծու որդի լինելը, բայց այժմ աչքով տեսնում է նրա աստուածային կերպարանքը, ուստի և ուրախութիւնից շփոթուած՝ չի իմանում, թէ ինչ է ասում։ «Ճէր, եթէ հրամայես, մենք կշինենք Երեք տաղաւար (վրան)՝ մինը քեզ, միւսը՝ Մովսէսի, իսկ երրորդը՝ Եղիայի համար»։

Մինչև որ Պետրոսը խօսում էր, մի լուսաւոր ամպ եկաւ՝ որտեղից ձայն լուսեց, որ ասում էր. «Սա է իմ սիրելի որդին, սրան լսեցէք»։ Աշակերտները, Երբ լսեցին այս երկնային ձայնը, զարհուրեցան, գետնի վրայ ընկան և սկսեցին աղօթել։

Այն ժամանակ Յիսուս մօտեցաւ նրանց և ասաց. «Մի վախենաք, վեր կացէք»։ Նրանք վեր կացան, բայց այլ ևս ոչի չտեսան՝ բացի Յիսուսից՝ իւր սովորական կերպարանքով։

33.

ՅՈՎՅԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՄԱՀԼ

Հերովդէսը խլեց իւր եղբայր Փիլիպոսի Հերովդիա կնոջը և ամուսնացաւ նրա հետ։ Յովհաննէսը նկատողութիւն արաւ Հերովդէսին և ասաց. «Վայել չէ քեզ, որ դրան կին ունենաս»։ Հերովդէսն ուզում էր նրան սպանել, բայց ժողովրդից վախենում էր, որովհետև նրան ընդունում էր որպէս մարդարէ, դրա համար էլ պաշտպանում էր, ուստի բանտարկել տուաւ Յովհաննէսին։

Թագաւորն ուզում էր Յովհաննէսին վրէժինդիր լինել և դրա համար յարմար առիթի էր սպասում։ Թագաւորի ծննդեան օրն էր. մեծ խնջոյք տուաւ, ուր ներկայ էին նախարարները, զօրապետները և Գալիլիայի բոլոր մեծամեծները։ Այգտեղ էր և Հերովդիայի աղջիկը. նա կաքաւեց և շատ դուք եկաւ թէ թագաւորին և թէ բոլոր սեղանակիցներին։

Թագաւորը ասաց աղջկան. «Խնդիր ինձնից, ինչ որ ուզում ես և ես կտամ քեզ՝ մինչև անգամ իմ թագաւորութեան կէսը»։ Աղջիկը մօրը հարցրեց. «Ի՞նչ ինդիկեմ»։ Նա էլ ասաց. «Յովհաննէս Մկրտչի վլուխը»։

Աղջիկը շտապով թագաւորի մօտ եկաւ և

ասաց. «Ես կամենում եմ Յովհաննէս Մկրտչի գլուխը»:

Թագաւորը շատ արտմեցաւ, նոր հասկացաւ իւր սխալ առաջարկութիւնը, բայց որովհետև երդուել էր հիւրերի առաջ, չուզեց խօսքը ետ առնել, իսկոյն դահիճ ուղարկեց բանտ և գլխատել տուաւ Յովհաննէսին. մի սկուսդի մէջ դրաւ գլուխը և աղջկան տուաւ. նա էլ իւր մօրը տարաւ:

Երբ այս բանը նրա աշակերտներն իմացան, եկան դիակը տարան թաղեցին և յախնեցին Յիսուսին:

34.

ՍԵՐՄԱՆԱՑԱՆԻ Ա.Ռ.ԱԿԸ

Յիսուս նստած էր ծովի ափում: Նրա մօտ հաւաքուեց մեծ բազմութիւն: Նա իջաւ և նաւ նստեց, իսկ ժողովուրդը կանգնած էր ափի վրայ:

Յիսուս սկսեց նրանց հետ առակով խօսել և ասել. «Ահա սերմացանը դուրս եկաւ ցանելու և երբ նա ցանում էր, սերմերից մի քամիսն ընկան ճանապարհի վրայ, եկան երկնքի թռչուններն ու կերան: Մի քամիսն էլ ընկան քարքարուա տեղերում, սրանք թէն շուտով բուսան հողի սակաւութեան պատճառով, բայց երբ արել ծա-

գեց, չորացան, որովհետև կարճ արմատներ ունէին: Մի քանիսն էլ ընկան փշոտ աեղ. փշերը դուրս եկան և խեղդեցին նրանց: Իսկ մի քանիսն էլ ընկան լաւ հողի մէջ և պտուղ տուին, որը հարիւր, որը վաթսուն և որը երեսուն:

35.

ՈՐՈՄԻ Ա.Ռ.ԱԿԸ

Յիսուս մի ուրիշ առակ էլ ասաց—Երկնքի արքայութիւնը նման է մի մարդու, որ իւր արտումը բարի սերմ ցանեց, բայց երբ մարդիկ քնեցին, թշնամին եկաւ ցորենի մէջ որոմներ ցանեց ու գնաց: Երբ ցորենը բուսաւ, որոմներն էլ երևեցան:

Ծառաները նկատեցին այս բանը և եկան տիրոջն ասացին. «Տէր, միթէ դու քո արտումը բարի սերմ չցանեցիր, որոմները որտեղից են»: Նա պատասխանեց և ասաց. «Այդ թշնամի մարդու արածն է»: Ծառաներն ասացին. «Իրաւունք տուր, որ գնանք և դուրս հանենք»:

Նա պատասխանեց. «Ո՞չ, մի գուցէ որոմները քաղելիս, ցորենն էլ նրանց հետ արմատախիլ անէք, թողէք երկուն էլ միասին աձեն մինչեւ հունձը, իսկ հնձի ժամանակ կասեմ հընձողներին՝ առաջ որոմները բաղեցէք և խուրձ

կապեցէք ալրելու համար, իսկ ցորենը ժողովեցէք իմ ամբարի մէջ:

36.

Մ Ե Ծ Հ Ն Թ Ր Ի Ք Ի Ա Ռ Ա Կ Ը

«Մի մարդ մեծ ընթրիք պատրաստեց և շատերին հայի հրաւիրեց:

Հրաւիրեալներն ամենքն էլ հրաժարուեցան գալուց զանազան անհիմն պատճառներով—առաջինն ասաց. «Ազարակ եմ գնել, պէտք է գնամ տեսնեմ, չեմ կարող գալ»։ Միւսն ասաց. «Հինգ լուծ եզն եմ գնել, գնում եմ փորձելու։» իսկ երրորդն ասաց. «Կի՞ եմ առել, չեմ կառող գալ»։

Ծառան եկաւ և այս բոլորը պատմեց տիրոջը: Տանտէրը բարկացած ասաց ծառացին. «Դուրս գնա քաղաքի հրապարակները, փողոցները և հրաւիրի աղքատներին, խեղճերին, կաղերին և կոլրերին»։ Ծառան ասաց. «Տէր, կատարեցի այսպէս, ինչպէս հրամայեցիր, բայց տանն էլի տեղ կայ»։ Տէրն ասաց ծառացին. «Դուրս գնա քաղաքից և ճանապարհի վրայ ումը տեսնես, կանչիք, որպէսզի իմ տունը լցուի»։ Ճշմարիտն եմ առում, առաջին հրաւիրուած մարդկանցից ոչ մէկն իմ ընթրիքը չի ճաշակի»։

37.

ԱՆԴԱՄԱԼՈՒԾԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄ ՔԱ-  
ՂԱՔՈՒՄ ԵՒ ԿԱՂԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ՊՐՕՊԱՏԻԿԵ ԿԱՄ  
ԲԵԴՀԵԶԴՐԱ ԱԽԱՋԱՆԻ ՄՈՏ

Ա. Յիսուս քարոզում էր Կափառնայում քա-  
ղաքում: Այստեղ ներկայ էին բազմաթիւ փարի-  
սեցիներ և օրինաց վարդապետներ, որոնք եկած  
էին Գալիլիայից և Հրէաստանից:

Այդ ըոպէին մահճի վրայ դրած մի անդա-  
մալոյժ բերին և աշխատում էին մի կերպ ներս  
տանեն և Յիսուսի առաջ գնեն: Բայց ամբոխի  
պատճառով չկարողացան ներս մտնել, ուստի  
կտուրը բարձրացան. տան առաստաղը բացին  
և մահճով կախ արին հիւանդին Յիսուսի ոտ-  
ների մօտ: Յիսուս բերողների հաւատը տեսնե-  
լով ասաց հիւանդին. «Որդեակ, քո յանցանքը  
ներում է քեզ»։

Դպիրները և փարիսեցիներն այս բանը Աս-  
տծու ընդգէմ համարեցին, ուստի ասացին. «Ո՞վ  
է սա՝ որ հայուանք է խօսում. ով կարող է  
յանցանքը ներել՝ բացի Աստծուց»։

Յիսուս պատասխանեց նրանց և ասաց.  
«Ի՞նչ էք կարծում, որն է աւելի հեշտ—ասելքո  
յանցանքը ներում է՝ թէ վեր կաց և ման եկ:  
իմացէք՝ մարդու Որդին իշխանութիւն ունի երկ-

ըի վրայ մեղքեր ներելու»։ Ետոյ դարձաւ անդամալուծին և ասաց. «Քեզ եմ ասում, վեր կաց, մահիճդ առ և գնա տուն»։ Հիւանդն իսկոյն վեր կացաւ, առաւ մահիճը, գնաց տուն և փառաբանում էր Աստծուն։

Բ. Սրանից ետոյ Զատկի տօնն էր։ Յիսուս եկաւ Երուսաղէմ։ Քաղաքի մէջ Պրօպատիկէ աւազանի մօտ, որ Երայեցերէն Բեդնեզդա է կոչւում, հինգ սրահ կար, ուր պառկած էին շատ հիւանդներ—կոյրեր, կաղեր, գոսացածներ և սպասում էին ջրի յուղւելուն, որովհետև Տիրոջ հրեշտակը ժամանակ-ժամանակ իջնում էր և աւազանի ջուրը յուղում։ Ով առաջինն էր ընկնում յուղուած ջրի մէջ՝ բժշկում էր՝ ինչ հիւանդութիւն էլ որ ունենար։

Այնտեղ մի մարդ կար, որ Երեսունեռութը տարի հիւանդ էր։ Երբ Յիսուս նրան տեսաւ և իմացաւ թէ քանի տարի այնտեղ պառկած է, ասաց. «Կամենո՞ւմ ես բժշկուել»։ Հիւանդը պատասխանեց. «Տէր, ես ոչ ոք չունիմ, որ ջրի յուղման ժամանակն ինձ աւազանը ձըգէ, իսկ ես մինչև տեղիցս կշարժուեմ, ուրիշներն ինձնից առաջ են իջնում»։ Յիսուս ասաց. «Վէր կաց, մահիճդ առ և գնա»։ Այն մարդն իսկոյն առողջացաւ, վեր կացաւ, առաւ մահիճը և գնաց։

Այդ օրը շաբաթ էր։ Տրէաներն ասացին

բժշկուածին. «Այսօր շաբաթ է, ի՞նչպէս կարելի է որ մահիճդ տանում ես»։ Հիւանդը պատասխանեց. «Ինձ բժշկողն ասաց—մահիճդ առ և գնա»։

Սրանից ետոյ Յիսուս պատահեց նրան տաճարում և ասաց. «Դու առողջացար, զգոյշ եղի՛ նորից չհիւանդանաս»։ Այն մարդը գնաց և հրէաներին պատմեց, որ իրան բժշկողը Յիսուսն է եղել։ Սրա համար հրէաները հալածում էին նրան, որ նա շաբաթ օրն էր արդ բանն արել։ Յիսուս պատասխանեց նրանց և ասաց. «Իմ հայրը մինչև այժմ բարի բան է գործել, ես էլ գործում եմ»։ Տրէաներն աւելի սկսեցին հալածել, որովհետև դրանով նա ոչ թէ միայն շաբաթն էր քանդում, այլև Աստծուն իւր հայր էր անուանում, ուրեմն և իւր անձը նրան հաւասար դարձնում։

### 38.

Յ Ի Ս Ո Ւ Ս Ս Ա Ս Ո Ւ Մ է Մ Ր Ր Կ Ի Ն

Յիսուս Երուսաղէմից Գալիլիա դարձաւ. կամեցաւ Գեննեսարէթի ծովի միւս կողմն անցնել և քարոզել։ Նաւ մտաւ. աշակերտները հետեւցին նրան։ Եւ ահա ծովի մէջ մեծ փոթորիկ բարձրացաւ՝ այնպէս որ ալիքները ծածկում էին, իսկ Յիսուս քնած էր նաւի ետեսում։

Աշակերտները մօտ եկան, զարթեցրին նը-

բան և ասացին. «Ճէր, փրկիր մեզ, կորչում  
ենք»: Յիսուս ասաց. «Ի՞նչ վախկառներ էր,  
թերահաւատներ»: Սաստեց քամիներին և իս-  
կոյն խաղաղութիւն տիրեց:

Մարդիկ զարմացան այս բանի վրայ և ա-  
սում էին. «Սա ի՞նչպիսի անձն է, որ քամիներն  
ել, ծովն էլ հնազանդում են սրանց»:

39.

ԿՈՅՐ ԾՆՈՒԱԾԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Յիսուս մի անգամ տաղավարահարաց աօ-  
նին եկաւ Երուսաղէմ: Այստեղ նա մի մարդ տե-  
սաւ, որ ի ծնէ կոյր էր: Աշակերտները հարցըին  
Յիսուսին և ասացին. «Մարդի, ով է մեղանչել.  
սմ՝ թէ սրա ծնողները, որ կոյր է ծնուել»: Յի-  
սուս պատասխանեց, «Ո՞չ դա է մեղանչել և ոչ  
դրա ծնողները, այլ՝ որ սրանով Աստծու դործերը  
լայտնի լինին»: Այս ասելով թքեց գետնի վրայ.  
ցեխ շինեց. քսեց կոյրի աչքերին ու ասաց. «Գնա  
և Սելովամայ աւագանում լուացուիր»: Նա գնաց.  
լուացուեց. ետ դարձաւ և տեսնում էր:

Դրացիները և նրան ճանաչողներն ասում էին.  
«Սա նա չէ, որ նստած մուրում էր»: Մի քանիսն  
ասում էին. «Նա է», մի քանիսը՝ «Նրան նման  
է», իսկ ինքն ասում էր «Ես եմ»: Այս ժամանակ  
ասացին նրան. «Հապա աչքերդի՞նչպէս բացուեց»:

Նա պատմեց, ինչ որ Յիսուսն արել էր: Նրան  
տարան փարիսեցիների մօտ: Օրը շաբաթ էր,  
երբ Յիսուս նրա աչքերը բժշկեց: Փարիսեցիները  
հարցըին, թէ ի՞նչպէս է նրա աչքերը բացուելն  
նա պատմեց: Փարիսեցիներից մի քանիսն ասա-  
ցին. «Այն մարդը Աստուածանից չէ, որովհետև  
շաբաթը չէ պահում»: Իսկ միւսներն ասում էին.  
«Մի մեղաւոր մարդ ի՞նչպէս կարող է այդպիսի  
հրաշքներ անել»: Ներկայ եղողները երկու մասի  
բաժանուեցան: Նրանք դարձեալ ասացին կոյրին.  
«Դու ի՞նչ կասես նրա մասին, որ աչքերդ բաց  
արաւ»: Նա պատասխանեց և ասաց. «Մարդարէ  
է նա»:

Հրէաները չէին հաւատում, թէ նա կոյր է  
եղել և բժշկուել է, ուստի նրա ծնողներին կան-  
չեցին և հարցըին. «Սա է ձեր որդին, որի հա-  
մար ասում էիք, թէ կոյր ծնուեց, հապա ի՞նչ-  
պէս է որ հիմա տեսնում է»: Ծնողները պատաս-  
խանեցին. «Այս, սա մեր որդին է, նա կոյր ծն-  
ուեց, բայց թէ հիմա ի՞նչպէս է տեսնում, չու-  
տեսնք—ինքը չափահաս է, իրան հարցըէք»:  
Ծնողները նրա համար այսպէս խօսեցին, որ վա-  
խենում էին հրէաներից, որովհետև նրանք որոշել  
էին, եթէ մինը Յիսուսին Քրիստոս, այսինքն  
Միսիա ընդունէ, ժողովրդանոցից դուրս կանեն:

Երկրորդ անգամ կանչեցին կոյր ծնած և  
բժշկուածին ու ասացին. «Աստծուն փառք տնել,

մենք գիտենք, որ քեզ բժշկողը մեղաւոր է»։ Նա պատասխանեց. «Թէ նա յանցաւոր է, այդ չգիտեմ ես, բայց այսքանը հաստատ գիտեմ, որ ես կոյր էի, իսկ այժմ տեսնում եմ»։ Դարձեալ հարցրին նրան. «Ի՞նչպէս բացեց քո աչքերը»։ Նա պատասխանեց. «Արդէն ձեզ ասացի, չլսեցի՞ք. միթէ դուք էլ էք կամենում նրան աշակերտ լինել»։ Այն ժամանակ նրանք հայհոյեցին և ասացին. «Դու ես նրա աշակերտ, իսկ մենք Մովսիսի աշակերտներն ենք»։ Բժշկուածը պատասխանեց նրանց և ասաց. «Հէնց դա է զարմանալուն, որ դուք չէք իմանում, թէ նրաւեղից է նա, որ իմ աչքերը բաց արաւ։ Մենք գիտենք, որ Աստուած լսում է արդարներին և ոչ թէ մեղաւորներին։ Մինչև այսօր դեռ չէ լսուած, որ մինը կոյր ծնածի աչքերը բաց արած լինի, եթէ սա Աստուածանից չլինէր, ոչինչ չէր կարող անել»։ Այն ժամանակ պատասխանեցին. «Դու մեղաւոր ծնել ես հերիք չէ, դեռ վստահանում ես մեզ խրատել»։ Նրան դուրս արին։

Յիսուս իմացաւ այս բանը. Երբ բժշկուածին տեսաւ, ասաց. «Դու հաւատում ես Աստծու Որդուն»։ Կոյրը պատասխանեց. «Հաւատում եմ, Տէր և Երկրպագեց նրան»։

40.

ԱՅԳՈՒ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Երկնքի արքայութիւնը նման է այն տանուտիրոջ՝ որ առաւոտը վաղ դուրս եկաւ այգու համար մշակներ վարձելու. Մշակների հետ օրը մի դահեկանի խօսելով՝ ուղարկեց իւր այգին։ Ժամը երեքի (9) մօս դուրս եկաւ, տեսաւ ուրիշ մշակներ, որոնք հրապարակում անգործ կանգնել էին և ասաց նրանց. «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կտամ»։ Նրանք էլ գնացին։ Դարձեալ հրապարակ դուրս եկաւ ժամը վեցին (12) և իննին (3) ու նոյնպէս արաւ։ Ժամը տամն և մէկին (5) դուրս եկաւ՝ ուրիշ պարապ մշակներ գտաւ և ասաց. «Ինչու էք այսեղ ամբողջ օրը պարապ կանգնել»։ Ասացին նրան. «Որովհետեւ մեզ ոչ ոք չվարձեց»։ Այն ժամանակ ասաց. «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կտանաք»։

Երեկոյեան՝ այգու տէրը վերակացուին ասաց. «Կանչիր մշակներին և վարձ տնւր նրանց»։ Ամենից առաջ եկողները մօտեցան և մի-մի դահեկան ստացան։ Հետեւեալ մշակներն էլ եկան և կարծում էին, թէ աւելի կստանան, բայց նրանք էլ մի դահեկան ընդունեցին։ Վերջինները արտնչացին և ասացին. «Դրանք մի ժամ աշխատեցին

բայց մեզ հաւասար ստացան»։ Նա էլ նրանցից մինին պատասխանեց և ասաց. «Ընկեր, ես քեզ չեմ զրկում, մենք մի դահեկանով համաձայնեցանք, քո վարձն առ և դնա, ես կամենում եմ որ այն ուշ եկողներին էլ քեզ չափ տամ, միթէ ես իշխանութիւն չունիմ իմ փողի հետ այնպէս վարուելու, ինչպէս իմ ցանկութիւնն է, ինչու ես նախանձում իմ առատաձեռնութեան վրայ»։

Այսպէս ետիններն առաջին կլինին, իսկ առաջինները՝ ետին։

41.

ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԲ

Մի մարդ օտար երկիր էր գնում։ Կանչեց ծառաներին և իւր ունեցածը նրանց յանձնեց—մէկին հինգ քանիքար տուաւ, միւսին երկու, իսկ երրորդին՝ մի—իւրաքանչիւրին իւր ընդունակութեան համեմատ և շտապով հեռացաւ։

Հինգ քանիքար ստացողը գործ դրաւ փողը և նրանով ուրիշ հինգ քանիքար ևս շահուեց։ Նոյնպէս և երկու քանիքար ստացողը գործ դրաւ և երկու քանիքար ևս շահուեց։ Իսկ մի քանիքար ստացողը գետինը փոլեց ու աիրոջ քանիքարը թագկացրեց։

Մի քանի ժամանակից ետոյ տէրը վերադարձաւ և նրանցից հաշիւ պահանջեց։ Հինգ քան-

քար ստացողն առաջ եկաւ, հինգ նոր քանիքար տիրոջը տուաւ ու ասաց. «Տէր, որւ ինձ հինգ քանիքար տիր. ահա հինգ ուրիշ քանիքար ևս աշխատել եմ դրանով»։ Տէրն ասաց նրան. «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ քիչ բանի մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բաների վրայ կառավարիչ կնշանակեմ քեզ—իմ գալստեան պատճառով հրաւէր ունիմ, որւ ևս կարող ես մասնակցել հրաւէրին։ Մօտ եկաւ երկու քանիքար ստացողն ու ասաց. «Ինձ երկու քանիքար տուիր, տէր, ահա ուրիշ երկուսը ևս շահել եմ դրանով»։ Տէրն ասաց նրան. «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ որւ քիչ բանի մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բաների վրայ կառավարիչ կնշանակեմ—որւ ևս կարող ես մասնակցել իմ գալստեան պատճառով պատրաստուած հրաւէրին։

Մօտ եկաւ մի քանիքար ստացողն ու ասաց. «Տէր, ես զիտէի, որ որւ խիստ մարդ ես, հնաձում ես այնտեղից, ուր չես ցանել և հաւաքում ես, ուր չես փոել, ուստի վախեցայ քեզնից և քո քանիքարը գետնի մէջ թաքկացրի—ահա քեզ քո տուածը»։ «Զար և վատ ծառայ, երբ որւ գիտէիր, որ ես հնձում եմ այնտեղից, ուր չեմ ցանել և հաւաքում, ուր չեմ փոել, ինչու առաջուց չցանձնեցիր իմ արծաթը սեղանաւորներին, որ ես այժմ տոկոսով ստանայի նրանցից։ Ուրե-

մըն առէք դրանից այդ քանքամը և տուէք տաս-  
սըն քանքար ունեցողին, իսկ այն անպիտան  
ծառալին հանէք դրսի խաւարը, անտեղ կիմնի  
լացը և ատամների կրծտելլ»:

42.

ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂԲԱՏ ԴԱԶԱՐՈՍԻ Ա.ՌԱԿԼ

Հարուստի մէկը հագնում էր թանկագին շո-  
րեր—ծիրանի և բեհեզ ու ամեն օր փառաւոր  
կեանք էր վարում: Մի աղքատ մարդ էլ կար՝  
Ղազարոս անունով, որ հարուստի դռանն էր ըն-  
կած, վէրքերով լիքը և կերակրում էր նրա սե-  
ղանից թափուած փշանքներով: Մարդիկ նրան  
մոռացել էին, շներն աւելի զթոտ էին—դալիս  
էին և նրա վէրքերը լիզում բժշկում էին:

Աղքատը մեռաւ: Հրեշտակները տարան  
նրան Աբրահամի գողը—արքայութիւն: Հարուստն  
էլ մեռաւ ու թաղուեց—սրան տարան դժողքը:  
Երբ սա դժողքում աչքերը բաց արաւ և հե-  
ռուից տեսաւ Ղազարոսին Աբրահամի գողում  
նստած, աղաղակեց ու ասաց. «Հայր Աբրահամ,  
ողորմիր ինձ, ուղարկիր Ղազարոսին, որ մատի  
ծայրը ջրով թաց անէ ու պապակած լեզուս  
հովացնէ, որովհետեւ այս կրակի բոցերի մէջ  
տանջւում եմ»: Աբրահամը պատասխանեց և  
ասաց. «Յիշիր, որդեակ, որ դու քո կենդանու-

թեան ժամանակ վայելում էիր բոլոր երկրային  
բարութիւնները, իսկ Ղազարոսը զբկուած էր.  
այժմ նա այստեղ միսիթարում է, իսկ դու  
պէտքէ տանջուես: Բացի դրանից մեր և ձեր մէջ  
մեծ անդունդ կայ, անյպէս որ՝ ոչ այստեղից  
ձեզ մօտ կարելի է անցնել և ոչ այդտեղից մեզ  
մօտ գալ»:

Հարուստն ասաց. «Աղաչում եմ, հայր, գոնէ  
ուղարկիր Ղազարոսին մեր տուն, ես ուրիշ հինգ  
եղբայր ևս ունիմ, թող գնայ նրանց զգուշացնէ,  
որ նրանք էլ չգան այս տանջանքի տեղը»: Աբ-  
րահամը պատասխանեց. «Նրանք ունին Մովսէս  
և մարգարէներ, թող նրանց ասածները կատա-  
րեն, այստեղ չեն գայ»: Հարուստը պատասխա-  
նեց. «Ոչ, հայր Աբրահամ, եթէ մեռելներից մի-  
նը երթայ, նրանք անպատճառ կապաշխարեն»:  
Աբրահամը կրկնեց. «Երբ Մովսէսին և մարգա-  
րէներին չեն լսում, եթէ մեռելներից մինը յա-  
րութիւն առնէ և նրանց մօտ գնայ, դարձեալ  
չեն հաւատայ»:

43.

ՏԱՄՆ ԿՈՅՑՄԵՐԻ Ա.ՌԱԿԼ

Տամն կոյսեր իրենց լավտերները վեր ա-  
ռան և գնացին վեսային դիմաւորելու: Դրանցից

հինգը յիմար էին, իսկ հինգը իմաստուն։ Յիմարները միայն իրանց ձեթով լիքը լապտերները հետները տարան, իսկ իմաստունները լապտերների հետ աւելորդ ձեթ ևս վեր առան։ Փեսան ուշացաւ—ամենքի քուն տարաւ։

Կէս գիշերին աղաղակ բարձրացաւ—ահա փեսան զալիս է, եկէք նրան դիմաւորելու։ Բոլոր կոյսերը վերկացան և լապտերները պատրաստեցին։ Յիմարների լապտերները անցնելու վրայ էին, աւելորդ ձեթ մոռացել էին վերցնելուսախ դիմեցին իմաստուններին և ասացին. «Զեր ձեթիցը մի փոքր էլ մեզ տուէք, մեր լապտերները հանգչում են»։ Իմաստունները պատասխանեցին. «Եթէ ձեզ էլ տանք, մեզ բաւական չի լինի, աւելի լաւ է գնացէք ծախողների մօսր և գնեցէք ձեզ համար»։

Եւ երբ նրանք ձեթ գնելու գնացին, փեսան եկաւ. իմաստունները նրա հետ հարսանքատուն մտան և դուռը փակեցին։ Ետոյ յիմար կոյսերն էլ եկան և ասացին. «Տէր, տէր, դուռը բաց արա»։ Փեսան պատասխանեց. «Ես ձեզ չեմ ճանաչում» և դուռը բաց չարաւ։

Ուրեմն արթուն կացէք, որովհետեւ չզիտէք, թէ մարդու Որդին որ օրը և որ ժամին կզայ»։

44.

Վ Ե Բ Զ Ի Ն Դ Ա Ս Ա Ս Ա Ն

Աշխարհիս վերջին օրը Յիսուս իրան փառքով նորից կգայ և կնստի փառաց աթոռի վրայ։ Ետոյ բոլոր մարդիկ կժողովուին նրա մօտ և նա կբաժանէ արդարներին մեղաւորներից, ինչպէս հովիւր ջոկում է ոչխարներին այծերից։ Ոչխարները կկանգնացնէ իւր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ։

Այն ժամանակ Յիսուս թագաւորը կասէ աջ կողմը կանգնողներին. «Եկէք, ժամանգեցէք այն արքայութիւնը, որ աշխարհի սկզբիցը պատրաստուած է ձեզ համար, որովհետեւ սոված էի՛ կերակրեցիք ինձ. ծարաւ էի՛ խմացրիք. օտար էի՛ ձեր տուն ընդունեցիք. մերկ էի՛ հազցրիք. հիւանդ էի՛ խնամեցիք, բանտումն էի՛ տեսութեան եկաք»։ Այն ժամանակ արդարները կպատասխանեն. «Մենք քեզ երբ տեսանք սոված և կերակրեցինք կամ ծարաւ և խմացրինք. Երբ տեսանք քեզ օտար և մեր տուն ընդունեցինք կամ մերկ, հազցրինք. Երբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտում ու տեսութեան եկանք»։ Այն ժամանակ թագաւորը կամ ծ. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, ինչ որ իմ փոքր եղբայրներից մինին արիք, ինձ արիք»։

Ետոյ կասէ ձախ կողմում կանգնածներին. «Հեռացէք ինձանից, անիծածներ, դէպի յաւիտենական կըակը, որ պատրաստուած է սատանայի համար, որովհետև սոված էի՝ չկերակրեցիք, ծարաւ էի՝ չխմացրիք. օտար էի՝ ձեր տուն չընդունեցիք. մերկ էի՝ չհագցրիք. հիւանդ և բանտումն էի, չայցելեցիք»։ Նրանք էլ կպատասխանեն. «Տէք, երբ տեսանք բեզ սոված, կամ ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ և չծառայեցինք»։ Այն ժամանակ ապատասխան կտայ և կասէ նրանց. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, ինչ որ իմ փոքրիկ եղբայրներից մինին չարիք, ինձ չարիք»։

Սրանից ետոյ մեղաւորները կըգնան դէպի յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ դէպի յաւիտենական կեանքը։

45.

ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ ԵՒ ԻՆՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յիսուսի ետեից մեծ բազմութիւն էր գնում։ Փրկիչը ժողովրդին տեսնելուն պէս՝ լեառը բարձրացաւ աշակերտների հետ և սկսաւ քարոզել ու ասել.

Ա. 1) «Երանի հոգւով աղքատան երին— երկնքի թագաւորութիւնը նրանցն է. 2) Երանի սգաւորն երին— նրանք պէտք է մխիթարուեն.

3) Երանի հեղանգին երկիրս նրանք պէտք է ժառանգեն. 4) Երանի նրանց՝ որոնք արդարութեան համար սոված և ծարաւ են. նրանք պէտք է կշտանան. 5) Երանի ողորմածն երին— նրանք պէտք է ողորմութիւն գլունեն. 6) Երանի նրանց՝ ովքեր սրտով սուրբ են— նրանք պէտք է Աստծուն աեսնեն. 7) Երանի խաղութիւն անողն երին— Աստծու որդիք պիտի կոչուեն»։ 8) Երանի արդարութեան համար հալածուածներին— երկնքի արքայութիւնը նրանցն է։ 9) Երանի է ձեզ, երբ իմ պատճառով կնախատեն և կհալածեն ձեզ. ուրախացէք դուք, ձեր վարձքը չի մոռացուի երկնքում— մարգարէներին էլ այդպէս հալածեցին։

Բ. «Զկարծէք թէ ես եկել եմ Մովսիսի օրէնքները կամ մարգարէների գրածները քանդելու. ես չեմ եկել քանդելու՝ այլ պակասը լլացնելու։

Օրինակի համար առաջի մարդկանցն ասուեց. 1) թէ սուտ մի երդութիր, այլ Աստծուն տուած երդումդ կատարիր։ Բայց ես ասում եմ ձեզ՝ բնաւ մի երդուէք՝ ոչ երկնքի անունով, որ Աստծու աթոռն է. ոչ երկիրս անունով, որ նրա պատուանդանն է. ոչ երուսաղէմի անունով, որ մեծ թագաւորի քաղաքն է։ Զեր

խօսքը թնդ լինի—այոն՝ այն և ոչը՝ ոչ—սրանից  
աւելին չարի գործ է»։

2) «Դուք լսել էք, որ ասուեց, թէ աչքի  
տեղ աչք եւ ատամի տեղ ատամ։ Բայց  
ես ասում եմ ձեզ՝ չարին հակառակ մի՛ կենաք,  
այլ՝ եթէ մինը քո աջ ծնօտին ապտակէ, շուռ  
տուր միւսն էլ և եթէ մինը կամենայ կոյիւ  
անել և քո շապիկն առնել, այդպիսի մարդուն  
վերարկուդ էլ տուր»։

3) «Դուք լսել էք, որ ասուեց, թէ քո ընկերին  
պէտք է սիրեա, իսկ թշնամուն՝ ատես։  
Բայց ես ասում եմ ձեզ—սիրեցէք ձեր թշնա-  
միներին. օրհնեցէք ձեզ անիծողներին և աղօթք  
արէք նրանց համար, որոնք ձեզ չարչարում ե  
հալածում են, որպէսզի կարող լինիք ձեր երկ-  
նաւոր հօր որդիք լինել, որի արեգակը ծագում  
է և չար և բարի մարդկանց վրայ և անձրև է  
թափում թէ արդարների և թէ մեղաւորների  
վրայ։ Եթէ դուք սիրէք միայն նրանց, որոնք  
ձեզ են սիրում, ինչ աւելի բան արած կլինիք,  
չէ որ մաքսաւորներն էլ նոյնն են անում։ Եթէ  
որ միայն ձեր բարեկամներին ողջունէք, ինչ ա-  
ւելի բան արած կլինիք, չէ որ մաքսաւորներ և  
մեղաւորներն էլ նոյնն են անում։ Ուրեմն եղէք  
կատարեալ, ինչպէս ձեր երկնաւոր հայրը կա-  
տարեալ է»։

—

¶. 4) Զգնյշ կացէք ձեր տալիք ողոր մու-  
թեան մասին, որ մարդկանց առաջ չանէք՝  
ցոյց տալու համար, մի՛ գուցէ վարձ ևս չստա-  
նաք ձեր երկնաւոր հօրիցը։ Երբ դու ուղենաս  
ողորմութիւն տալ, փող փշել մի տուր, ինչպէս  
կեղծաւորներն են անում ժողովրդանոցներումը  
և հրապարակներում՝ մարդկանցից փառաւոր-  
ուելու համար։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ  
նրանց վարձը հէնց այդ է։ Բայց երբ դու ողոր-  
մութիւն տաս, թնդ քո աջ ձեռը չիմանայ, թէ  
ձախն ինչ գործեց, թնդ քո ողորմութիւնը ծա-  
ծուկ լինի և քո հայրը, որ ծածուկն էլ տեսնում  
է, յայտնի կհատուցանէ քեզ»։

5) «Երբ դու աղօթեա, կեղծաւորների  
նման մի՛ վարուիր, որոնք սիրում են ժողովրդա-  
նոցներումը և հրապարակներումը կանգնել և  
աղօթել, որ մարդիկ նրանց տեսնեն։ Ճշմարիտն  
եմ ասում, որ նրանց վարձը հէնց այդ է։ Իսկ  
դու, երբ աղօթք անես, մտիր քո սրտի սեսնակը.  
դոները փակիր և ծածուկ աղօթիր քօ հօրը, և  
քո հայրը, որ ծածուկն էլ տեսնում է, յայտնի  
կհատուցանէ քեզ։ Ինչ ժամանակ դու աղօթք անես,  
շատ մի խօսիր հեթանոսների նման, որոնք կար-  
ծում են, եթէ շատ խօսեն, Աստուած կլսէ։  
Ուրեմն դուք այսպէս աղօթք կանէք—մեր հայր,  
որ երկնքումն ես, քո անունը սուրբ լինի։ Քո  
թագաւորութիւնը գայ. քո կամքը լինի՝ ինչպէս

Երկնքումը, այնպէս էլ երկրիս վրայ. մեր ամենօրեաց հացն այսօր տուր մեզ. մեր պարտքը թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապահներին ենք թողնում. մի ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ չարիցն ազատիր, որովհետև թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը քոնն է՝ յաւիտեանս ամէն»:

6) «Երբ դուք պաս պահէք, կեղծաւոների նման մի տրտմէք, որոնք իրանց տխուր դէմքովը կամենում են ցոյց տալ մարդկանց, թէ պահում են: Ճշմարիտն եմ ասում ձեզ, հէնց այդէ նրանց վարձը: Բայց երբ դու պահես, օծիր դլուխդ իւղով, լուա երեսդ և քո Հայրը, որ ծածուկն էլ տեսնում է, յայտնի կհատուցանէ քեզ»:

¶. 7) «Զեր գանձերը երկրիս վրայ մի հաւաքէք, ուր ցեցն ու ուտիճն ապականում են և գողերը գետնի տակը փորում են ու գողանում: Զեր գանձերը երկնքումը հաւաքեցէք, ուր ոչ ցեց կայ, ոչ ուտիչ և ոչ գողերը գետնի տակը կփորեն և կգողանան: Որովհետև ուր ձեր գանձերն են հաւաքուած, անտեղ էլ ձեր սիրտը կլինի»:

8) «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել—կամ մինին կատէ, միւսին կսիրէ և կամ մինին կպատուէ, միւսին կարհամարհէ: Դուք չէք կարող և Աստծուն և մամոնալին ծառայել»:

9) «Դրա համար էլ ասում եմ ձեզ, հոգու համար հոգ մի անէք, թէ ինչ պէտք է ուտէք կամ ինչ պէտք է հագնէք: Զէ որ ոգին կերակրից և մարմինը շորիցը բարձր է: Մտիկ արէք երկնքի թռչուններին՝ ոչ վարում են, ոչ հնձում և ոչ ամբարներումը ժողովում, բայց ձեր երկնաւոր հայրը կերակրում է նրանց—միթէ դուք նրանցից աւելի չէք: Զեզնից որը հիմա հոգս անելով իւր հասակի վրայ մի կանգուն կարող է աւելացնել: Եւ ինչու էք հոգս անում շորերի համար-մտիկ արէք վայրի շուշանին, թէ ինչպէս է աճում—ոչ աշխատում է և ոչ մանում է: Սողոմոնն անգամ իւր բոլոր փառքերի մէջ նրանց մինի նման շոր չհագաւ: Եթէ վայրի խոտը, որ այսօր կայ և վազր կրակ պիտի ձգուի, Աստուած այդպէս է հագնում, հապա որքան աւելի ձեզ համար կհոգայ, թերահաւատներ: Սրա համար էլ հոգ մի անէք, թէ ինչ ուտենք, ինչ հագնենք: Այդ տեսակ բաները հեթանոսներն են խնդրում, որովհետև ձեր երկնաւոր հայրը գիտէ այն ամենը, ինչ որ ձեզ հարկաւոր է: Դուք խնդրեցէք նախ՝ Աստծու արքայութիւնը և նրա արդարութիւնը, իսկ մնացածն առանց խնդրելու կստանաք»:

¶. 10) «Մի դատէք ուրիշներին, որ նրանք էլ ձեզ չդատեն. ինչ դատաստանով ուրիշին դա-

տէք, նրանով էլ պիտի դատուիք. ինչ չափով որ  
չափեք, նրանով էլ կչափուիք: Ի՞նչու եղբօրդ  
աչքի շիւղը տեսնում ես, իսկ քո աչքի գերանը՝  
ոչ: Կամ ի՞նչպէս ես ասում եղբօրդ, թող քո աչ-  
քի շիւղը հանեմ, այն ինչ քո աչքումը գերան  
կայ: Կեղծաւար, առաջ քո աչքի գերանը հանիք  
և ետոյ նայիր եղբօրդ աչքի շիւղը հանելու»:

11) «Խնդրեցէք՝ կստանաք, որո՞նեցէք  
կըգտնէք. ծեծեցէք դուռը, բաց կանեն: Ո՞վ է  
այն հայրը, որից իւր որդին հաց խնդրէ, միթէ  
քար կտայ, կամ ձուկն ուզէ, միթէ օձ կտայ  
նրան: Ուրեմն դուք որ չար էք, գիտէք ձեր  
որդիներին բարի պարզեներ տալ, հապա որքան  
աւելի ձեր հայրը, որ երկնքումն է, բարի բա-  
ներ կտայ նրանց, որոնք խնդրում են իրանից»:

«Այն ամենը՝ ինչ որ կամենում էք, որ  
մարդիկն անեն ձեզ, այնպէս էլ դուք արէք նը-  
րանց—իսկ սա է օրէնքը և մարզարէքը»:

12) «Նեղ դոնովը ներս մտէք, որով-  
հետեւ լայն դուռը և ընդարձակ ճանապարհը  
գէպի կորուստ է տանում—այդ ճանապարհով  
գնացողների թիւը շատ է: Իրա հակառակ նեղ  
է այն դուռը և ճանապարհը, որ գէպի կետնք է  
տանում և քչերն են նրան գտնում»:

13) «Զգնչ եղէք սուտ մարզարէներիցը,  
որոնք ոչխարի շորերով ձեզ մօտ են գալիս, իսկ  
ներսից յափշտակող գայլեր են: Իրանց պաղիցը

պիտի ճանաչէք նրանց—միթէ կարելի է փշիցը  
խաղող քաղել, կամ տատասկիցը՝ թուզ: Այսպէս  
ամենայն բարի ծառ բարի պտուղ է բերում,  
իսկ չար ծառը չար պտուղ է տալիս: Ուրեմն  
իրանց պաղիցը ճանաչեցէք նրանց: Ամեն մարդ,  
որ ինձ կանչում է՝ տէք, տէք, երկնքի արքայութիւն  
չի մտնի, այլ նա միան, որ կատարում է երկ-  
նաւոր հօրս կամքը:

Զ. «Իրա համար էլ նա՝ ով իմ խօսքերը  
լսում և կատարում է, նման է այն իմաս-  
տուն մարդուն, որ իւր տունը քարի վրայ  
շինեց: Եկան անձրկները. վարարեցին գետերը.  
փշեցին քամիները. խփեցին տանը և տունը չը-  
կործանուեց, որովհետեւ հիմքը բարի վրայ էր  
դրած: Իսկ նա՝ ով իմ խօսքերը լսում է, բաց  
չէ կատարում, նման է անխելք մարդուն,  
որ իւր տունը աւազի վրայ շինեց: Եկան անձ-  
րկները. վարարեցին գետերը. փշեցին քամի-  
ները. խփեցին տանը և տունը ընկաւ—նրա կոր-  
ծանումը մեծ էր»:

Երբ Յիսուս այս բոլորը վերջացրեց, ժողո-  
վուրդը զարմացաւ նրա քարոզի վրայ:

46.

ՅԻՍՈՒՄԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼՈՒՅՑՄԱՆ, ԿԵՐԱԿՐԻ,  
ՊԱՀՔԻ ԵՒ ՇԱԲԱԹԸ ՄՐԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա. Երուսաղէմից եկած դպիրները և փարիսեցիները Յիսուսի մօտ եկան և ասացին. Ի՞նչու քո աշակերտները ծերերի աւանդութիւնիցն անցնում են—ի՞նչու հաց ուտելիս ձեռները չեն լուանում»: Նա էլ պատասխան տուաւ նրանց և ասաց. «Կեզծաւորներ, եսայի մարդարէն շատ լաւ է մարդարէացել ձեր մասին—այս ժողովուրդը շրթունքով է պատւում ինձ, իսկ սրտով հեռացել է ինձնից: Նրանք Աստծու օրէնքները թողել են և մարդկանց պատուէրներ են սովորցնում: Լսեցէք և իմացէք—ոչ թէ այն է պղծում մարդուս, ինչ որ բերանն է մանում, այլ այն՝ ինչ որ բերանիցն է դուրս գալիս, որովհետեւ ինչ որ բերանիցն է դուրս գալիս, սրտիցն է, ահա այն է պղծում մարդուս: Մրտիցն են դուրս գալիս չար խորհուրդներ, սպանութիւններ, ջնութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ: Ահա սրանք են մարդուն պղծողը, իսկ անլուայ ձեռքով ուտելը մարդուս չէ պղծում»:

Մի փարիսեցի աղաջում էր Յիսուսին, որ իւր մօտ ճաշ ուտէ: Յիսուս չմերժեց նրա խնդիրը՝ գնաց և սեղան նստեց: Փարիսեցին տեսնելով, որ ճաշից առաջ չլուացուեց, զար-

մացաւ, Յիսուս ասաց. «Դուք փարիսեցիներդ բաժակի և պնակի դրսի կողմը սրբում էք, այն ինչ ձեր ներքինը լիքն է չարութիւնով: Անմիտներ, կարծում էք՝ ինչ որ դրսիցը մաքուր է, ներսիցն էլ մաքուր կլինի»: Դպիրները և փարիսեցիները բարկացան այս նկատողութեան համար, յարձակւեցին նրա վրայ զանազան հարցերով, որպէսզի բերանից մի սխալ խօսք խլեն և բամբասեն:

Բ. Մի անգամ շաբաթ օրը Յիսուս անցնում էր արտերի միջով, աշակերտները սովեցան. սկսեցին հասկ պոկել և ուտել: Երբ փարիսեցիներն այս բանը տեսան, ասացին. «Ոհաքո աշակերտներն այն են անում, ինչ որ արժան չէ շաբաթ օրն անել»: Նա պատասխանեց նրանց և ասաց. «Դուք չէք կարդացել, թէ ինչ արաւ Դաւիթը, երբ սովեց. ինչպէս մտաւ նա Աստծու տունը և առաջաւորութեան հացը կերաւ, որ ոչ ոք իրաւունք չունէր ուտելու՝ բացի քահանաներից: Կամ չէք կարդացել օրէնքումը, որ քահանաները շաբաթը պղծում են և անմեղ են համարւում: Բայց ասում եմ ձեզ, տաճարիցն էլ մեծ է այստեղ: Մարդու Որդին նաև շաբաթի տէրն է:

Յիսուս հեռացաւ և գնաց նրանց ժողովրդանոցը: Անտեղ մի մարդ կար, որի ձեռը չո-

բացած էր: Յիսուսին հարցրին. «Արդեօք շաբաթ օրը կարելի է բժշկել»: Այս նրա համար ասացին, որ նրանից մի սխալ պատասխան ստանան և սկսեն չարախոսել: Նա պատասխանեց և ասաց. «Եթէ ձեզնից մէկը մի ոչխար ունենալ, շաբաթ օրը փոսի մէջ ընկնի, մի՞թէ նրան չի բռնի և փոսիցը չի հանի: Բայց մարդը ոչխարից որքան բարձր է, ապա ուրեմն շաբաթ օրը պէտք է բարի գործել»: Դարձաւ այն մարդուն և ասաց. «Ձեռդ մեկնիր»: Նա մեկնեց և ձեռն առողջացաւ միւսի նման: Փարիսեցիները դուրս գնացին և խորհուրդ էին անում, թէ ինչպէս հեռացնեն նրան ասպարիզից:

47.

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ

Երբ Յիսուս հրէաստանից Գալիլիա էր դառնում, Սամարիայի միջովն անցաւ և եկաւ Սիւքեար քաղաքը: Այստեղ էր Յակովը ջրհորը: Յիսուս լոգնած էր—հանգստացաւ այդ ջրհորի մօտ:

Մօտաւորապէս ժամը վեցն (12) էր: Ահա այդ միջոցին քաղաքից մի կին եկաւ ջուր հանելու: Յիսուս ջուր խնդրեց նրանից: Նրա աշակերտները քաղաք էին գնացել կերակուր գնելու: Սամարացի կինը գարմացաւ և ասաց Յիսուսին,

Դու հրէայ ես, ես սամարացի, ի՞նչպէս ես ինձանից ջուր ուզում»: Յիսուս պատասխանեց նրան. «Եթէ դու դիտենազիր թէ ով է քեզնից ջուր ուզողը, դու նրանից կենդանի ջուր կիրճութիւր»: Կինն ասաց: «Տէր, դու դոյլ չունիս, այս ջրհորն էլ խորն է, որտեղից կտաս ինձ կենդանի ջուր. միթէ դու մեծ ես մեր հայր Յակովըց, որ այս ջրհորը տուաւ մեզ. ինքն այստեղից խմեց, նոյնպէս նրա որդիքը և անասունները»: Յիսուս պատասխանեց. «Ով այս ջրիցը խմում է, նորից ծարաւում է, իսկ ով իմ տուած ջրիցը կխմէ, յաւիտեանս չի ծարաւի: Այն ջուրը, որ ես կտամ, ջրի աղբիւր կլինի նրանում, որ յաւիտեան կըդմէ նրա մէջ»: Կինն ասաց նրան. «Տէր, տներ ինձ այն ջուրը, որ միւս անգամ չգամ այստեղից ջուր տանելու»:

Յիսուս ասաց նրան. «Գնա, կանչիր քո մարդուն և եկ այստեղ»: Կինը պատասխանեց. «Ես մարդ չունիմ»: Յիսուս ասաց. «Ճշմարիտ ասացիր, թէ մարդ չունիմ, բայց դու հինգ մարդ ես ունեցել և նա, որ հիմա ունիս, քոնը չէ»: Կինն ասաց նրան. «Տէր, ես տեսնում եմ, որ դու մարդարէ ես, մեկնիր ինձ այս մութ կէտը—մեր հայրերն այս սարերում աղօթք արին, իսկ դուք հրէաներգ՝ ասում էք, թէ Երուսաղէմում միայն կարելի է աղօթելք: Յիսուս ասաց նրան. «Դուք երկրպագում էք նրան, որին չէք ճանաչում, իսկ

մենք՝ ընդհակառակը։ Կին, հաւատոա ինձ, որ  
կդայ ժամանակ, երբ ոչ այս լեռներում կերկր-  
պագէք հօրը և ոչ էլ երուսաղէմումը. կզայ ժա-  
մանակ և այդ ժամանակը հիմա է, որ ճշմարիտ  
երկրպագողները հոգւով և ճշմարտութիւնով  
կերկրպագանեն հօրը։ Աստուած հոգի է և նրան  
երկրպագողները պէտք է հոգւով և ճշմարտու-  
թիւնով երկրպագանեն»։ Կինն ասաց. «Զեր ա-  
սածն այն ժամանակ կլինի, երբ Մեսսիան կամ  
Քրիստոսը կգալ»։ Յիսուսը ասաց նրան. «Քեզ  
հետ խօսողը Մեսսիան ինքն է»։

Այս խօսքի վրայ եկան աշակերտները. կինը  
թողեց իւր կուժը, գնաց քաղաք և մարդկանց  
ասաց. «Եկէք տեսէք մի մարդ, որ իմ բոլոր  
գաղտնիքը գիտէ-արդեօք նա չէ Քրիստոսը»։  
Շատ քաղաքացիներ եկան տեսնելու նրան։ Այն  
ժամանակ աշակերտները խողբեցին Յիսուսին և  
ասացին. «Ուաբբի, հաց կեր»։ Նա պատասխանեց.  
«Ես այնպիսի կերակուր ունիմ ուտելու, որ դուք  
չդիտէք»։ Աշակերտները հարցնում էին միմեանց.  
«Արդեօք ով սրա համար ուտելու բան բերաւ»։  
Յիսուս ասաց. «Իմ կերակուրն այն է, որ իմ  
ուղարկողի կամքը կատարեմ»։ Սամարացիներն  
եկան և աղաչեցին, որպէսզի մի քանի օր իրանց  
մօտ մնայ և մնաց այնտեղ երկու օր։ Շատերը  
հաւատացին նրան և այն կնոջն ասում էին. «Այլ-  
և քո խօսքերով չենք հաւատում, մենք ինք-

ներս լսեցինք մեր ականջներով այդ բոլորը և  
գիտենք ճշմարտապէս, որ սա է աշխարհիս փր-  
կիչը՝ Քրիստոսը՝ խոստացեալ Մեսսիան»։

48.

ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԱՐԹԱ

Յիսուս երուսաղէմ գնալիս՝ յաճախ գալիս  
էր Բեթանիա գլուղը։ Այստեղ կենում էր Ղազա-  
րոսը իւր քոյրերի՝ Մարիամի և Մարթայի հետ։

Այս անգամ Ղազարոսը տանը չէր—քոյրերն  
ընդունեցին Յիսուսին և ամեն կերպ աշխատում  
էին պատուել թանկագին հիւրին։

Նրանց յարաբերութիւնն այն աստիճանի  
բարեկամական էր, որ Մարթան Յիսուսի մօտ  
եկաւ և ասաց.

«Տէր, հոգդ չէ, որ քոյրս ինձ մենակ է  
թողել խոհանոցում, ասա նրան, որ ինձ օգնէ»։  
Յիսուս պատասխանեց նրան և ասաց. «Մարթա,  
դու շատ բաներով ես զբաղուած, բայց մի բան  
է պէտք։ Դու աշխատում ես զանազան տեսակ  
կերակուրներով պատուել ինձ, մի տեսակ էլ որ  
լինի, ինձ բաւական է։ Քոյրդ աւելի գեղեցիկ  
կերպով է պատւում ինձ-նա բարի մասնէ ընտրել  
որ ոչ ոք չի խլի նրանից. դու լաւ կանէիր՝ մի  
տեսակ կերակուր բաւականանայիր և գայիր իմ  
քարողները լսէիր»։

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Սրանից ետոյ Մարիամի և Մարթայի եղայր Ղազարոսը հիւանդացաւ: Յիսուս գալիլիացումն էր: Քոյրերը մարդ ուղարկեցին Յիսուսի մօտ ասելու: «Տէր, որին դու սիրում էիր, հիւանդ է»: Յիսուս երբ լսեց, ասաց. «Այդ հիւանդոյթիւնը մեռնելու համար չէ, այլ Աստծու փառքի համար»:

Յիսուս երկու օր մնաց այնտեղ, ուր որ էր: Նրանցից ետոյ ասաց աշակերտներին. «Եկէք դարձեալ գնանք Հրէաստան, մեր բարեկամ Ղազարոսը քնել է»: Աշակերտներն չհառկացան ուսուցին և ասացին. «Տէր, եթէ քնել է, կզարթի»: Այն ժամանակ Յիսուս պարզ կերպով ասաց. «Ղազարոսը մեռել է, ես այնտեղ չէի, բայց ուրախ եմ ձեզ համար, որովհետև դուք պիտի հաւատաք ինձ: Գնանք նրա մօտ»:

Յիսուս դարձաւ Բեթանիա: Արդէն չորս օր էր՝ ինչ թաղել էին: Երուսաղէմից շատերն եկել էին Մարիամին և Մարթային միսիթարելու համար: Երբ Մարթան լսեց, որ Յիսուս գալիս է, գնաց զիմաւորելու, իսկ Մարիամը տանը նըստած էր: Մարթան ասաց Յիսուսին. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկած հրէաներին տեսաւ լաց լինելու: Մարիամը երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկած հրէաներին տեսաւ լաց լինելու՝ սաստիկ լուզուեց և ասաց. «Ո՞ւր դրիք նրան»: Նրանք պատասխանցին. Տէր, եկ և տես»: Յիսուս արտասուեց: Հրէաներն ասում էին. «Տէսէք ինչպէս էր սիրում նրան»: Ոմանք էլ ասում էին. Միթէ սա, որ կոյրի աչքերը բաց արաւ, չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»:

Նից իմնդրես, կտայ քեզ»: Յիսուս ասաց նրան. «Քո եղբայրը յարութիւն կառնէ»: Մարթան ասաց. «Այն, գիտեմ որ նա յարութիւն կառնէ վերջին դատաստանի ժամանակ»: Յիսուս կրկնեց. «Ես իսկ եմ յարութիւնն ու կեանքը, ինձ հաւատացողը, եթէ մեռնի էլ դարձեալ կապրի, հաւատում ես այս բանին»: Մարթան պատասխանց. «Այն, տէր, ես հաւատացել եմ, որ դու ես Քրիստոսը՝ Աստծու Որդին»:

Եւ երբ այս ասաց, գնաց և թաքուն կանչեց Մարիամին տեղով. «Վարդապետն եկել է և կանչում է քեզ»: Նա երբ այս խօսքերը լսեց, շուտով վերկացաւ և եկաւ նրա մօտ: Յիսուս գեռ գիւղը չէր մտել: Տանն եղողները, երբ տեսան, որ Մարիամը վերկացաւ և գնաց, իրանք էլ նրա ետից գնացին, կարծելով թէ զերեզմանն է գնում լաց լինելու: Մարիամը երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկած հրէաներին տեսաւ լաց լինելիս՝ սաստիկ լուզուեց և ասաց. «Ո՞ւր դրիք նրան»: Նրանք պատասխանցին. Տէր, եկ և տես»: Յիսուս արտասուեց: Հրէաներն ասում էին. «Տէսէք ինչպէս էր սիրում նրան»: Ոմանք էլ ասում էին. Միթէ սա, որ կոյրի աչքերը բաց արաւ, չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»:

Յիսուս գերեզմանի մօտ գնաց և ասաց.  
«Կեր առէ՛ք բարը»: Մեռածի քոյք Մարթան ա-  
սաց: «Տէ՛լ արդէն հոտ բոնած կլինի, որովհետև  
չորս օրուան թաղած է»: Յիսուս ասաց. «Զա-  
սացի՞ քեզ, եթէ հաւատաս, Աստծու փառքը կը-  
տեմնես»: Քարը վեր առան: Յիսուս աչքերը  
երկինք բարձրացրեց և ասաց. «Հալը, շնորհա-  
կալ եմ քեզնից, դու ինձ միշտ լսել ես. խնդրում  
եմ այս անդամ էլ լսես, որ այս ժողովուրդը հա-  
ւատայ, թէ դու ես ինձ ուղարկել»: Այս ասաց  
և բարձր ձայնով աղաղակեց. «Ղաղարէ, արի, Եկ  
արտաքս»: Մեռելը դուրս եկաւ ոտներն ու ձեռ-  
ները պատահած, իսկ երեսը վարշամակով պա-  
տած: Յիսուս ասաց. «Արձակէցէք կապերը և թո-  
ղէք գնայ»: Հրէաներից շատերը, որ Մարիամի  
մօտ էին եկել, տեսան այս հրաշքը և հաւատա-  
ցին նրան:

III

50.

### ՅԻՍՈՒՍԻ ԹԸՆԱՄԻՆԵՐԸ

Եերկայ եղող հրէաներից մի բանիսը երու-  
սալէմ եկան և պատմեցին փարիսեցիներին թէ  
ինչպէս Յիսուս Ղաղարոսին յարութիւն տուաւ:  
իսկոյն քահանայալեաները և փարիսեցիները

8

ժողով արին և ասացին. «Ի՞ն չանենք, այն մարդը  
շատ հրաշքներ է անում, եթէ այդպէս թոյլ  
տանք, ամենքը կհաւատան նրան և հռովմայեցի-  
ները կգան ու կնուածեն մեզ էլ, մեր երկիրն  
էլ»: Այն տարուայ քահանայալեա կայիհափան  
ասաց. «Դուք ոչինչ չգիտէք և հեռուն չեք էլ  
մտածում, աւելի լաւ է մի մարդ մեռնի ժողո-  
վրդի համար, քան թէ բոլոր ազգը կորչի»:  
Բայց նա այս խօսքերն իրանից չասաց, այլ մար-  
դարէացաւ, որ Յիսուս պիտի մեռնէր ազգի  
համար: Այն օրից սկսած՝ քահանայալեար և  
փարիսեցիները խորհուրդ արին, որ սպանեն նը-  
րան: Ուստի հրաման արձակեցին, ով նրա  
տեղն իմանայ, իմաց տայ իրանց, որ բոնեն:

Յիսուս իւր աշակերտներով հեռացաւ այն-  
տեղից: Հրէից զատիկը մօտ էր, զրա համար էլ  
շատերը ուխտ էին գալիս երուսաղէմ: Նրանք  
հարցնում էին միմեանց Յիսուսի մասին և տա-  
ճարում իրար հետ խօսում էին, թէ տօնի օրն  
արդեօք Յիսուս կգայ երուսաղէմ թէ ոչ:

51.

### ՅԻՍՈՒՍԻ ՕԾՈՒՄԸ ԲԵԹԱՆԻԱՅՈՒՄ

Յիսուս Զատկից վեց օր առաջ եկաւ Բե-  
թանիա, ուր կենում էր յարութիւն առած Ղա-  
ղարոսը: Այտեղ նրա համար ընթրիք պատրաս-

տեցին—Մարթան ծառայում էր սեղանին, Դազգարոսը ևս սեղանակից էր, իսկ Մարիամը մի լիտր նարդոսի խւղ առաւ, նրանով Յիսուսի ոտներն օծեց և իւր երկար մաղերովը սրբեց։ Տունը լցուեց իւղի հոտովը։ Յիսուսի աշակերտ Յուդա իսկարովացին, որ նրանց գանձապահն էր և գողանում էր, ինչ որ արկղն էին ձգում, ասաց. «Աւելի լաւ չէր լինի, որ այդ իւղը երեք հարիւր դահեկանի ծախուէր և աղքատներին տրուէր»։

Յիսուս ասաց. «Ի՞նչու էր վիրաւորում Մարիամին, դա մի գեղեցիկ բան արաւ իմ վերաբերմամբ։ Աղքատներն ամեն ժամանակ ձեզ մօտ են, երբ կամենաք, կարող էք նրանց օդնել, բայց ես միշտ ձեզ մօտ չեմ։ Դա ինչ կարող էր, արաւ—առաջուց մարմինս օծեց՝ ի նշան իմ թաղման։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, ամբողջ աշխարհի մէջ, ուր էլ իմ աւետարանը քարոզուի, այս բանը չի մոռացուի, այլ կյիշուի որա յիշատակի համար, իբրև բարի գործ։

52.

## ՅԻՍՈՒՍ ՄՏՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԵՄ

Յիսուս Բեթանիայից երուսաղէմ եկաւ։ Երբ Զիթենեաց լերան մօտեցան, աշակերտներից երկուսին ուղարկեց և ասաց. «Գնացէք մօտիկ

գիւղը, այնտեղ կգտնէք մի կապած էշ և մի աւանակ էլ նրա մօտ, տրձակեցէք և բերէք։ Աշակերտները գնացին, բերին էշն ու աւանակը և իրանց հանդերձները վրան ձգեցին։ Յիսուս նստեց նրանցից մինի վրայ։ Ժողովրդից շատերն իրանց հանդերձները ճանապարհի վրայ փռեցին. շատերն էլ ծառից արմաւենու ձիւղն էին կտրում ու ճանապարհի վրայ փռում։ Երբ Յիսուս լերան գլուխը հասաւ, որտեղից քաղաքը երկումէր, ասաց. «Երուսաղէմ, երուսաղէմ, երանի՛ դու գոնէ այսօր զգայիր, թէ որն է քո օգուար, բայց այդ բանը դու չես տեսնում։ Կը գան օրեր, երբ քո թշնամիները կպաշարեն քեզ և հիմնայատակ կանեն. որդիքդ կկոտորեն ու չեն թողնի բարը քարի վրայ կանգնէ, որովհետեւ այցելութեանդ ժամանակը չիմացար։ Ժողովուրդի, որ առջեկից և ետեկից գնում էր, աղաղակում և ասում էր. «Ովսանան Դաւթի որդուն, օրհնեալ է Տիրոջ անունով եկող թագաւորը, ովսաննան բարձրումը»։ Եւ երբ երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դղրդեցաւ և ամենայն ոք հարցնում էր. «Ո՞վ է սա»։ «Աս Յիսուսն է, նազարէթի մարգարէն», պատասխանում էին նրան։

Յիսուս մտաւ տաճարի գաւիթը. դուրս արաւ բոլոր առևտուր անողներին—աղաւնէվաճառներին, կործանեց փող մանրողների սեղան-

ները և ասաց նրանց. «Գրած է, որ իմ տունը աղօթքի տուն պիտի լինի, իսկ զուք նրան վաճառատեղ էք դարձրել»։ Նրա մօտ տաճարում գալիս էին շատ կաղեր, կոյրեր ու բժշկում էր նրանց։ Երբ տաճարի իշխանութիւնը տեսաւ այս ամենը և տաճարում եղողների գովասանական աղաղակները, խիստ բարկացան և ասում էին նրան. «Լսում ես, թէ դրանք ինչ են ասում»։ Յիսուսն էլ ասաց նրանց. «Այն, միթէ չէք կարդացել, որ մանուկների և կաթնակերների բերանով պիտի հաստատուի օրնութիւնը»։ Յիսուս թողեց նրանց, գնաց քաղաքից դուրս՝ Բեթանիա և գիշերն այնտեղ մնաց։

53.

ՅԻՍՈՒՍ ՎԻՃԱԲԱՆՈՒՄ Է ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԵՏ

Ա. Առաւոտեան՝ երբ Յիսուս քաղաք եկաւ, մտաւ տաճար։ Քահանայապետները և ժողովրդի ծերերը մօտ եկան և երբ նա ուսուցանում էր, ասացին. «Ի՞նչ իշխանութիւնով ես անում այդ բանները և ով տուաւ քեզ այդ իրաւունքը»։ Յիսուս պատասխանեց և ասաց. «Ես ձեզ մի բան կհարցնեմ, եթէ պատասխանէք, ես էլ ձեզ կասեմ, թէ ինչ իշխանութիւնով եմ այս բաններն անում—Յովհաննէսի մկրտութիւնը որտեղից էր, երկնքից, թէ մարդկանցից»։ Նրանք իրանց մէջ մտածում էին. «Եթէ երկնքից ասենք, կասէ մեզ.

հապա ինչու չհաւատացիք նրան, իսկ եթէ ասենք մարդկանցից, ժողովրդիցը վախենում ենք, որովհետեւ ամենքը Յովհաննէսին մարգարէ են ընդունում»։ Սրա համար էլ Յիսուսին պատասխանեցին. «Չգիտենք»։ Նա էլ նրանց ասաց. «Ես էլ ձեզ չեմ ասի, թէ ինչ իշխանութիւնով եմ անում այս բանները»։

Բ. Դրանից ետոյ փարիսեցիները գնացին և խորհուրդ արին, թէ ինչպէս խօսքով որոգայթ դնեն նրան։ Փարիսեցիներն իրանց աշակերտներին չերովդէսի մարդկանց հետ Յիսուսի մօտ ուղարկեցին, գովեցին նրան և ասացին. «Վարդապահետ, գիտենք, որ զու ճշմարիտ ես ուսուցանում. դու ոչ ոքից չես քաշւում և ոչ երեսպաշտութիւն գիտես։ Այժմ ասա մեզ՝ կայսեր հարկ տալ պէտք է, թէ ոչ»։ Յիսուս նրանց չարութիւնն իմանալով՝ ասաց. «Ինչու էք փորձում ինձ, կեզծաւորներ, ցոյց տու էք ինձ հարկի գահեկանը»։ Նրանք մի գահեկան բերին։ Յիսուս հարցը եց. «Ումն է այս պատկերը կամ գիրը»։ Նրանք պատասխանեցին. «Կայսեր»։ Յիսուս ասաց. Ուրեմն կայսրինը՝ կայսրին տուէք, իսկ Աստծունը՝ Աստծուն»։ Երբ այս բանը լսեցին, խիստ գարմացան, թողին նրան և հեռացան։

Գ. Մինչև այժմ Յիսուս պաշտպանւում էր

թշնամիների յարձակումների դէմ, այժմ ինքն է սկսում յարձակուել նրանց վրայ մի առակ պատմելով—«Մի տանուտէր այգի տնկեց. նրան ցանկով պատեց. մէջը հնձան փորեց. աշտարակ շնեց. յանձնեց մշակներին և գնաց ուրիշ աշխարհ: Երբ ժամանակը մօտեցաւ, ուղարկեց ծառներին մշակների մօտ՝ պտուղն ստանալու: Մշակները ծառաներին բռնեցին—մէկին տանջեցին, միւսին սպանեցին և երրորդին էլ քարկոծեցին: Դարձեալ ուղարկեց ուրիշ ծառաներ առաջիններից շատ, բայց նրանց հետ էլ միւսոյն ձեռվ վարուեցան: Վերջապէս իւր որդուն ուղարկեց՝ ասելով թերես նրանից ամաչեն: Մշակները որդուն տեսնելով իրանք իրանց ասացին.—սա ժառանգն է, եկէք սպանենք և ժառանգութեանը տիրանանք: Իսկոյն բռնեցին նրան, այգուց դուրս հանեցին և սպանեցին: Երբ այգու տէրը գայ, ինչ կասէ մշակներին»:

Նրանք պատասխանեցին. «Զար մշտկներին կհեռացնէ և այգին ուրիշ մշակների կյանձնէ, որոնք կլսոստանան իւր ժամանակին պտուղ տալ»: Յիսուս պատասխանեց. «Այսպէս էլ Աստծու արքայութիւնը ձեզնից կառնուի և կտրուի հեթանոսներին, որոնք ժամանակին պտուղ կտան»: Փարիսեցիները նկատեցին, որ իրանց վրայ է խօսում, ուստի շատ բարկացան: Այսուհետեւ յարմար ժամանակ էին որոնում, որ բռնեն Յիսու-

սին, բայց վախենում էին ժողովրդից, որովհետև նրան մարգարէի տեղ էր ընդունում:

Դ. Յիսուս շարունակում է իւր յարձակումը—նա խօսեց ժողովրդի և իւր աշակերտների հետ ու ասաց. «Մովաէսի աթոռի վրայ դպիրները և փարիսեցիները նստեցին: Դրանք ինչ էլ որ ասեն ձեզ, լսեցէք, և արէք, բայց նրանց գործերից հեռու կացէք, որովհետև ասում են, չեն կատարում: Ծանր և դժուարակիր բեռներ են կապում և զնում մարդկանց ուսերին, բայց իրանք մտտով անդամ չեն ուզում շարժել: Նրանց բոլոր գործերը մարդկանց երևալու համար է: Բնթրիքներում առաջին տեղ են ընտրում. ժողովարաններում առաջին կարգի աթոռներն են վերցնում. սիրում են որ վողոցներում իրանց ողջունեն և մարդկանցից ուաբրի, ուաբրի կոչուեն: Բայց գուք այգպէս չպիտի լինիք:

Վայ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, երկնքի արքայութեան դռները փակում էք մարդոց առաջ. ինքներդ չէք մտնում, իսկ մտնողներին էլ արգելում էք: Վայ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, տասանորդում էք անանուխ, սամիթ և չաման, բայց մոռանում էք օրէնքի ծանր-ծանր կողմերը՝ դատաստանը ողորմածութիւնը և հուատքը—այս պէտք է անել և այն չմոռանալ: Կոյր առաջնորդ-

ներ, մժեղները քամում էք, իսկ ուղտերը կուլ էք տալիս: Վայ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, բաժակի և սկաւառակի արտաքին կողմը մաքրում էք, բայց ներքուստ լի էք յափշտակութեամբ և անիրաւութեամբ: Վայ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, նման էք ծեփած գերեզմանների, որոնք արտաքուստ գեղեցիկ են երեսում, բայց ներքուստ լի են մեռելների ոսկորներով և ամեն տեսակ պղծութիւնով: Այսպէս էլ դուք, թէ Կարտաքուստ արդար էք երեսում, բայց ներքուստ լի էք կեղծաւորութիւնով և անօրէնութիւնով: Վայ ձեզ դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, դուք մարդարէների շիրմները շինում էք, արդարների գերեզմանները զարդարում էք և ասում, եթէ մեր հայրերի ժամանակներում ապրէինք, մասնակից չէինք լինի նրանց սպանման: Ուրեմն դուք վկայում էք, թէ մարդարէների սպանողների որդիքն էք: Դուք՝ օճեր, իժերի զաւակներ, ինչպէս կարող էք փախչել գեհենի դատաստանիցը»:

«Երուսաղէմ, Երուսաղէմ, դու որ մարդարէներին կոտորում էիր և քեզ մօտ ուղարկուածներին բարկոծ անում. քանի անդամ կամեցալ քո երեխաներին ժողովել այնպէս, ինչպէս հաւը ժողովում է իւր ձագերին թևերի տակ, բայց չկամեցար: Դէս որ ինձ չլսեցիր, աւերակ կը դառնաս:

54.

ՅՈՒՂԱՅԻ ՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ.

Յիսուս ցերեկը սովորեցնում էր տաճարում, իսկ գիշերները բարձրանում էր Զիթենեաց լեառը: Բոլոր ժողովուրդը առաւօտանց վաղ գնում էր տաճարը նրան լսելու համար:

Սրանից ետոյ քահանայապեաները, դպիրները և ժողովրդի ծերերը ժողովուեցան այն քահանայապեանի մօտ, որի անունը Կայիփավա էր և խորհուրդ արին, թէ ինչպէս Յիսուսին նենդութեամբ բռնեն և սպանեն, բայց ասում էին՝ ոչ այս տօնի ժամանակ, որպէսզի ժողովրդի մէջ խոռվութիւն չընկնի:

Տասներկուսից մէկը՝ Յուղա իսկարիովտացին, գնաց քահանայապեաների մօտ և ասաց. «Ինչ կտաք ինձ, որ Յիսուսին ձեզ մատնեմ»: Նրանք շատ ուրախացան և երեսուն արծաթ խոստացան: Այնուհետև յարմար ժամանակ էր որոնում Յուղան, որ մատնէ Յիսուսին:

55.

ՈՏՆԱԼՈՒՄՅՅԻ ԽՈՐՀՈՐԴԱԽՈՐ ԸՆԹՐԻՔ

Ա. Աւագ հինգշաբթի օրը աշակերտները Յիսուսի մօտ եկան և ասացին նրան. «Ո բաեղ

Ես կամենում, որ քեզ համար զատիկը պատրաստենք»։ Յիսուս ասաց. «Գնացէք քաղաք՝ այս ինչ մարդու մօտ և ասացէք նրան—վարդապետն ասում է՝ քեզ մօտ պիտի ուտեմ զատիկն աշակերտներիս հետ»։ Նրանք էլ այնպէս արին, ինչպէս որ Յիսուս պատուիրեց և պատրաստեցին զատիկը։ Երեկոյեան սեղան նստեց տասն և երկու աշակերտների հետ և ասաց. «Յանկանալով ցանկացայ այս զատիկը ձեզ հետ ուտելի իմ չարչարուելուց առաջ»։

Ետոյ Յիսուս ընթրիքից վեր կացաւ, հանց վերկի հանդերձները, մի ղենջակ մէջքին կապեց. ջուր ածեց կոնքի մէջ, սկսեց նրանց ոտները լուանալ և մէջքին կապած ղենջակովը սրբել։ Կարգը Սիմօն Պետրոսին հասաւ, նա թոյլ չտուաւ և ասաց. «Տէր, դժու պէտք է իմ ոտները լուանաս»։ Յիսուս պատասխանեց. «Ինչ որ ես անում եմ, դու այժմ չգիտես, բայց ետոյ կիմանաս»։ Պետրոսն ասաց. Երբէք չեմ թոյլ տայ, որ դու իմ ոտները լուանաս»։ Յիսուս պատասխանեց. «Եթէ չթողնես ոտներդ լուանամ, դու իմ աշակերտը չես լինի»։ Այն ժամանակ Սիմօն Պետրոսն ասաց. «Տէր, եթէ այդպէս է՝ ոչ թէ իմ ոտները միայն, այլ ձեռներս ու գլուխը էլ լուա»։ Ոտները լուաց, վերջացրեց. հագաւ իւր հանդերձները. նորից սեղան նստեց և ասաց. «Գիտէք թէ ես ինչ արի ձեզ։ Դուք ինձ

կանչում էք վարդապետ և տէր և լաւ էք անում, որովհետի այդպէս էլ եմ։ Եթէ ես՝ ձեր ոտները լուացի, դուք էլ պէտք է իրարու ոտները լուաք, ես ձեզ խոնարհութեան օրինակ ցոյց տուի—ինչպէս ես ձեզ արի, նոյնն էլ դուք արէք միմեանց»։

Բ. Յիսուս այս ասելով՝ հոգւով տրամեցաւ և ասաց. «Ճշմարիտն եմ ասում, ձեզնից մէկը մատնելու է ինձ»։ Աշակերտներն էլ տարակուսած իրար երեսի էին նայում, թէ ում համար է ասում, ուստի ամեն մինը տեղից վեր կենալով՝ հարցնում էր. «Տէ՛ր, միթէ ես եմ»։ Յիսուս պատասխանեց. «Մարդու Որդին կգնայ, ինչպէս որ գրուած է, բայց վայ այն մարդուն, որի ձեռով նա պիտի մասնուի. աւելի լաւ է, եթէ այն մարդը ծնուած չլինէր»։ Այն ժամանակ Յուդան էլ հարցրեց. «Միթէ ես եմ, վարդապետ»։ Յիսուս ասաց. «Դու ասացիր»։ Յուդան իսկոյն դուրս գնաց. Սրդէն երեկոյ էր։

Երբ Յուդան դուրս գնաց՝ Յիսուս իրան ազատ զգաց, ուստի և ասաց. «Մի փոքր ժամանակ էլ ձեզ հետ եմ. նոր պատուէր եմ տալիս ձեզ, որ դուք իրար այնպէս սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի։ Սրանով ձեզ ամենքը կճանաչեն, որ իմ աշակերտներն էք»։

¶. Ընթրիքից ետոյ Յիսուս վեր առաւ հացը  
և օրհնելով կոտրեց, աշակերտներին տուաւ ու  
ասաց. «Առէք, կերէք այս է իմ մարմինը, այսպէս  
արէք իմ յիշատակի համար»։ Ետոյ բաժակն  
առաւ, գոհացաւ, տուաւ նրանց և ասաց. «Խմե-  
ցէք դրանից ամենքդ, այս բաժակը նոր ուխտն  
է՝ իմ արիւնովը, որ թափւում է ձեզ և շատերի  
մեղաց թողութեան համար։ Ամեն անդամ՝ երբ  
կամենաք ինձ յիշել, այսպէս արէք»։

56.

ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆՈՒՄ

¶. Ընթրիքից ետոյ՝ Յիսուս իւր աշակերտ-  
ներով անցաւ կետրոնի ձորը և բարձրացաւ Զի-  
թենեաց լեառը։ Այստեղ Յիսուս ասաց իւր ա-  
շակերտներին. «Դուք ամենքդ այս գիշեր կդայ-  
թակղուէք, որովհետեւ գրած է—հովուին որ զար-  
կեն, ոչխալները կցըրուեն»։ Բայց Պետրոսն  
ասաց. «Եթէ ամենքն էլ գայթակղուեն, ես հա-  
ւատարիմ կմնամ»։ Յիսուս ասաց. «Ճշմարիտն  
եմ ասում քեզ, այս գիշեր՝ մինչև աքաղաղի կան-  
չելը երեք անդամ կուրանաս ինձ»։ Պետրոսն  
ասաց. «Եթէ մեռնելու էլ լինիմ, դարձեալ քեզ  
չեմ ուրանայ»։ Այսպէս էլ միւս աշակերտներն  
էին ասում։

¶. Զիթենեաց լերան վրայ մի պարտէզ կար՝  
անունը Գեթսեմանի։ Յիսուս իւր աշակերտների  
հետ եկաւ այստեղ և ասաց նրանց. «Այստեղ  
նստեցէք, արթուն կացէք՝ մինչև ես գնամ և ա-  
ղօթք անեմ»։ Այս ասաց, առանձնացաւ պարտի-  
զի մի անկիւնում. երեսի վրայ ընկաւ, աղօթում  
էր և ասում. «Հայր, եթէ կարելի է այս բաժակը  
(փորձանքը) հեռացրու ինձանից, բայց եթէ չեռ  
ցանկանայ, բռ կամքն է»։ Յիսուս գարձաւ աշա-  
կերտների մօտ, գտաւ նրանց քնած ու ասաց  
Պետրոսին. «Այդպէս մէկ ժամ էլ չկարողացաք  
ինձ հետ արթուն կենալ, արթուն կացէք և ա-  
ղօթեցէք, որ փորձութեան մէջ չընկնէք»։ Երկ-  
րորդ անգամ Յիսուս գնաց աղօթք արաւ և ա-  
սաց. «Հայր, եթէ կարելի է, թող այս բաժակն  
ինձնից հեռանայ, բայց ոչ թէ ինչպէս ես եմ  
կամենում, այլ՝ ինչպէս գու»։ Դարձաւ ու կրկին  
քնած գտաւ աշակերտներին. «Թողեց նրանց.  
դարձեալ գնաց. Երրորդ անգամ աղօթեց և մի-  
ւնոյն խօսքերն ասաց. Յիսուս մեծ նեղութեան  
մէջ էր և եռանգով աղօթում էր. Այն ժամանակ  
Աստծու հրեշտակը երկնքից երեաց և զօրաց-  
նում էր նրան, որպէսզի միշտ այդպէս խօսէ:  
Աղօթքից վեր կացաւ, եկաւ աշակերտների մօտ  
և ասաց. «Քանի՞ քնէք, հասաւ ժամը, երբ մար-  
դու Որդին պիտի մատնուի մեղաւորների ձեռը:  
Վեր կացէք գնանք, ահա մօտենում է մատնիչը»։

Պ. Այս խօսքերը վերջացրած, Յուղան քահանայապետի և փարիսեցիների ծառաների հետմիասին՝ ներս եկան սրերով, ջահերով և լաղտերներով։ Մատնիչը նրանց նշան էր տուել և ասել. «Որին ես համբուրեմ, նրան բռնեցէ՞ք»։ Յուղան մօտեցաւ Յիսուսին և ասաց. «Բարե, վարդապետ» և համբուրեց։ Յիսուս պատասխանեց. «Յուղա, համբուրելով ես մատնում մարդու Որդուն»։ Յիսուս մօտ եկաւ և հարցրեց եկողներին. «Ո՞ւմն էք ուզում»։ Նրանք պատասխանեցին. «Յիսուս նազովրեցուն»։ Յիսուս ասաց. «Ես եմ»։ Այն ժամանակ մօտեցան Յիսուսին և բռնեցին. Բայց Սիմօն Պետրոսը քաշեց իւր սուրը, զարկեց քահանայապետի ծառային և նրա աջ ականջը կտրեց. Յիսուս ասաց Պետրոսին. «Սուրդ պատենի մէջ դիր, ով սուր կըվերցնի, սրով կկորչի»։ Յիսուս մօտեցաւ նրա ականջին և բժշկեց. Ետոյ գարձաւ և իւր վրայ եկող ամբոխին ասաց. «Ինչպէս մի աւազակի վրայ էք դուրս եկել սրերով։ Ես ամեն օր ձեզ հետ էլ տաճարումը և սովորցնում էի, ի՞նչու այնտեղին ձեռ չտուիք»։ Նրանք բռնեցին Յիսուսին և կապեցին։ Բոլոր աշակերտները փախան։

ՅԻՍՈՒՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԻ ԱՌԱՋ

Յիսուսի թշնամիները չէին կարծում, որ այդպէս շուտով կըսնեն նրան, ուստի տարան նրան Կայիափա քահանայապետի աներ Աննայի մօտ, իրեւ ապահով տեղ, մինչև ատենի անդամները կժողովվեն Յիսուսին դատելու։ Աննան հին քահանայապետ էր. նա ալդ ազատ ժամին հարցուփորձ արաւ Յիսուսին՝ նրա աշակերտների և վարդապետութեան մասին։ Յիսուս պատասխանեց և ասաց. «Ես յալտնի կերպով քարոզել եմ աշխարհին, ես միշտ սովորցրել եմ ժողովարանումը և տաճարումը—ծածուկ ոչինչ չեմ խօսել։ Ի՞նչու ես ինձ հարցնում, լսողներին հարցըու, թէ ինչ եմ քարողել»։ Սպասաւորներից մինը Յիսուսին ապահակ տուաւ և ասաց. «Այդպէս ես պատասխանում քահանայապետին»։ Յիսուս ասաց. «Եթէ չար բան խօսեցի, ցոյց տոնը, իսկ եթէ բարի, ինչու ես խփում»։

Երբ լուր եկաւ, թէ ժողովի անդամները հաւաքուել են, Աննան Յիսուսին կապած ուղարկեց Կայիափա քահանայապետի մօտ, ուր դպիրները և թերերն էին ժողոված։ Պետրոսը հեռուից ծածուկ հետևում էր Յիսուսին, որ տեսնէ թէ ինչ է պատահում։ Ներս մտաւ բակը և նըս-

տաւ ծառաների մօտ: Քահանայապետները, ծերերը և բոլոր ատեանը Յիսուսի դէմ սուտ վկայութիւններ էին որոնում, որ մահու դատապարտեն, բայց ոչինչ չկարողացան գտնել: Թէպէտ արտեղ շատ սուտ վկաներ էին եկել, բայց ոչինչ չկարողացան ապացուցնել: Վերջապէս երկու սուտ վկաներ առաջ եկան և ապացուցանում էին, որպէս թէ Յիսուսն ասել է, թէ ես կարող եմ Աստծու տաճարը քանդել և երեք օրում կրկին շինել: Քահանայապետը վեր կացաւ և ասաց Յիսուսին: «Ոչինչ չես պատասխանում, ինչ որ սրանք բո դէմ վկայում են»: Յիսուս լուռ էր, որովհետեւ իւր թշնամիները միևնուն ժամանակ իւր դատաւորներն էին, ինչ էլ ասէր, չպիտի ընդունէին: Քահանայապետն ասաց, «Երդում եմ տալիս քեզ կենդանի Աստծու անունով, ասա զո՞ւ ես Մեսսիան՝ Քրիստոսը՝ Աստծու որդին»: Յիսուս պատասխանեց. «Այդ դու ես ասում, իսկ ես ասում եմ ձեզ, որ հիմիկուանից կտեսնէք Որդուն Աստծու աջ կողմը նստած՝ երկնքի ամպերի վրայով գնալիս»: Այն ժամանակ քահանայապետը պատառեց իւր հանդերձները և ասաց. «Սա Աստծուն հայնոյում է, էլ ինչ հարկաւոր են մեզ վկաներ՝ դուք ինքներդ լսեցիք դրա հայնոյանը»: Ինչ էք կարծում»: Նըրանք պատասխանեցին և ասացին. «Դա մահու թամանի է»: Այս միջոցին աքաղաղն իսկոյն կանչեց: Յիսուս դարձաւ և մտիկ տուաւ Պետրոսին: Պետրոսը յիշեց Տիրոջ խօսքը, որ ասել էր. «Մինչև աքաղաղի կանչելը երեք անգամ կուրանաս ինձ»: Պետրոսը դուրս գնաց և դառնապէս լաց եղաւ»:

սին և բոռնցքով ծեծեցին, ոմանք էլ ապտակ տուին ասելով. «Մարգարէացիր, Քրիստոս. ով է քեզ զարկողը»:

58.

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅՈՒԴՅՈՅԻ ՎԱԽՃԱՆԸ

Ա. Պետրոսը նստած էր բակում: Մի աղախին մօտ եկաւ և ասաց. «Դու էլ գալիլիացի Յիսուսի հետն էր»: Նա բոլորի առաջ ուրացաւ և ասաց: «Ես նրան չեմ ճանաչում»: Սրանից ետոյ մի ուրիշ կին տեսաւ նրան և ասաց այստեղ եղողներին. «Սա էլ նազովրեցի Յիսուսի հետն էր»: Պետրոսը դարձեալ ուրացաւ և երգուեց, որ այն մարգուն չէ ճանաչում: Փոքր ժամանակից ետոյ այնտեղ կանգնողները ասացին Պետրոսին. «Ճշմարիտ է, դու էլ նրանցից ես, քո արտասանութիւնիցն էլ երկում է այդ»: Այն ժամանակ Պետրոսն սկսեց անիծել և երգուել որ այն մարգուն չէ ճանաչում»: Այս միջոցին աքաղաղն իսկոյն կանչեց: Յիսուս դարձաւ և մտիկ տուաւ Պետրոսին: Պետրոսը յիշեց Տիրոջ խօսքը, որ ասել էր. «Մինչև աքաղաղի կանչելը երեք անգամ կուրանաս ինձ»: Պետրոսը դուրս գնաց և դառնապէս լաց եղաւ»:

Բ. Մատնիչ Յուդան, երբ տեսաւ, որ Յի-

սուսին դատապարտեցին, զղջաց, երեսուն արծաթը ետ դարձրեց քահանայապեաներին ու ասաց. «Ես մեղք գործեցի՝ անմեղ արիւն մատնեցի»։ Նրանք պատասխանեցին. «Մեզ ինչ, դու գիտես»։ Յուղան արծաթը ձգեց տաճարի մէջ, հեռացաւ, գնաց և խեղդուեց. Թշնամիներն ասացին. «Արժան չէ այդ փողը գանձանակի մէջ ձգել, որովհետև արիւնի գին է»։ Խորհուրդ արին և դրանով բրուտի ազարակը գնեցին՝ օտարականներին թաղելու համար։

59.

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱԾՈՍԻ ԱՌԱՋ

Ուրբաթ լուսարացին Յիսուսին կապած տարան պօնտացի Պիղատոսի մօտ, որ երկրի կուսական էր. Իրանք չմտան պալատը, որովհետեղ գատկի տօնը մօտ էր, կպղծուէին և զատկական գառը չէին կարող ուտել. Պիղատոսն ինքը դուրս եկաւ նրանց մօտ և ասաց. «Ի՞նչ գանգատ ունիք այդ մարդու դէմ»։ Նրանք պատասխանեցին. «Եթէ սա չարագործ չլինէր, քեզ մօտ չէինք բերի»։ Պիղատոսն ասաց. «Ուրեմն վեր առէք և ձեր օրէնքի համաձայն դատեցէք»։ Հրէաներն ասեցին. «Մեր օրէնքը մեզ իրաւունք չէ տալիս մահու վճիռ տալ»։ Սա մոլորեցնում է ժողովրդին. արգելում է կալսեր հարկ տալ և

իրան թագաւոր է անուանում»։ Յիսուս ոչինչ չպատասխանեց քահանայապեաների և ժողովրդի ծերերի մեղադրանքներին։ Այն ժամանակ Պիղատոսը հարցրեց Յիսուսին. «Չես լսում, թէ որքան բաներ են վկայում քեզ հակառակ»։ Յիսուս էլի ոչինչ չպատասխանեց. Կուսակալը խիստ զարմացաւ այս բանի վրայ, ուստի ներս տարաւ պալատը և հարցրեց. «Դու հրէաների թագաւոր ես անուանում քեզ»։ Յիսուս պատասխանեց. «Եթէ ես այս աշխարհի թագաւորներից լինէի, իմ զօրքերը կպատերազմէին և ես հրէաների ձեռը չէի ընկնի. իմ թագաւորութիւնն այս աշխարհից չէ»։ Պիղատոսն ասաց. «Ուրեմն դու թագաւոր եա»։ Յիսուս պատասխանեց. «Դու ես ասում, որ ես թագաւոր եմ. ես դրա համար էլ ծնուել և աշխարհ եմ եկել, որ վկայեմ այն ձշմարտութիւնը, որ ես լսել և տեսել եմ Աստծու մօտ»։ Պիղատոսը հեթանոս էր, այն աշխարհի թագաւորութեան մասին հասկացողութիւն չունէր. նա բաւականացաւ նրանով, որ Յիսուս ասաց. թէ ես այս աշխարհի թագաւորներից չեմ, ուստի դուրս եկաւ հրէաների մօտ և ասաց. «Ես ոչ մի յանցանք չեմ գտնում նրա մէջ»։

Ժողովուրդն սկսեց ևս աւելի զրպարտել և ասել. «Սա ժողովրդին մոլորեցնում է՝ Գալիլիայից սկսած մինչև այստեղ»։ Պիղատոսը, երբ Գալիլիայի անունը լսեց, հարցրեց, թէ արդեօք

նա Գալիլիացիցն է և երբ իմացաւ որ Հերովդէսի իշխանութիւնից է, ուղարկեց նրա մօտ, որ այդ օրերում Երուսաղէմ ուխտ էր Եկել: Հերովդէսը Յիսուսին տեսնելուն պէս, խիստ ուրախացաւ, որովհետեւ վաղուց ցանկանում էր նրան տեսնել. շատ բաներ էր լսել նրա մասին. յոյս ունէր, որ մի հրաշք կանէ: Հերովդէսը շատ բաներ հարցրեց Յիսուսին, բայց սա էլ ոչ մի պատասխան չստացաւ: Քահանալապետները և դպիրները կանգնած էին և սաստիկ չարախօսում էին նրանից: Հերովդէսն վիրաւուրուց Յիսուսի լոռութիւնից. ծաղրի համար սպիտակ շոր հազցրեց և ետ ուղարկեց Պիղատոսի մօտ: Այդ օրից սկսած Հերովդէսն ու Պիղատոսը բարեկամ դարձան իրար, առաջ թշնամի էին:

Պիղատոսն ասաց քահանայապետներին և ժողովրդին. «Դուք այս մարդուն ինձ մօտ բերիք և իբրև ժողովրդեան մոլորեցնող ներկայացրիք. ահա ձեր առաջ դատեցի և ոչ մի յանցանք չդտայ: Հերովդէսը ևս ոչինչ յանցանք չէ դտել, որ մահու արժանի լինէր, ուստի ես կպատժեմ նրան և կարձակեմ»:

Պիղատոսը համոզուեց, որ Յիսուս արդար է, հրէաները նախանձում են, բայց ուղղակի պաշտպանել վախեցաւ, այլ կողմնակի ճանապարհով աշխատում էր աղատել:

Զատկի տօնի օրերն էին: Կուսակալը, հա-

մածան սովորութեան, բանտարկեալներից մինին պէտք է ազատութիւն տար, որին ժողովուրդը կցանկար: Մի նշանաւոր բանտարկեալ կար՝ անունը Բարաբբա, որ մարդասպանութեան համար բանտ էր դրուած: Պիղատոսը ժողովրդին հարցրեց. «Ումն էք կտմենում, որ արձակեմ, Բարաբբային, թէ Յիսուսին»—չէր կարծում թէ մարդասպանի օգտին ձախն կտան: Բայց քահանապետները և ժողովրդի ծերերն աղաղակում էին և ասում. «Բարաբբային արձակիր»: Պիղատոսը հարցրեց. «Իով ի՞նչ անեմ Յիսուսին, որին հրէից թագաւոր էք ասում»: Ամենօր մի:աբնրան աղաղակեցին և աւացին. «Խաչիր, խաչիրնրան»: Կուսակալը նորից հարցրեց. «Բայց ի՞նչ չառ բան է գործել նա»: Նրանք ևս աւելի բարձր ձախով աղաղակում էին և ասում. «Խաչիր, խաչիր նրան»: Պիղատոսը տեսաւ, որ այս միջոցով էլ չկարողացաւ օգնել Յիսուսին, դատաւորական աթոռի վրայ նստաւ, որ վճիռը լայտնէ գանգատաւորներին: Այդ ժամանակ Պիղատոսի կինը մարդ ուղարկեց ասելու. «Այդ արդար մարդու հետ բան չունիս, երազումն շատ բան տեսայ նրա մասին»:

Սրանից ետոյ Պիղատոսը՝ հրէաներին դուր դալու համար՝ առաւ Յիսուսին և ծեծեց: Զինուորները վշերից պսակ դրին դլիսին. ծիրանի հագցրին. աջ ձեռը մի եղեգը տուին. ծունկ էին չորսում առաջին. ծաղրում էին և ասում. «Ողջ չոքում առաջին, ծաղրում էին և ասում:

կաց, հրէից թագաւոր»: Եղեգնով խփում էին գլխին և երեսին ապտակներ տալիս: Պիղատոսը այսպէս ծեծուած դուրս բերաւ Յիսուսին պալատից: Նա փշեայ պսակ ունէր գլխին և ծիրանի հագած, որպէս թէ թագաւոր է: Պիղատոսն ասաց ժողովրդին. «Ահա այրդ ցձեզ», այսինքն՝ ահա այն անձը, որին դուք յանցաւոր էք գտնում, սա աւելի շուտ կարեկցութեան՝ քան պատժի արժանի է, սա այնպիսի թագաւոր չէ՝ ինչպէս դուք էք ասում: Երբ քահանայապետը և ժողովուրդը տեսան նրան, աղաղակեցին. «Խաչիր, խաչիր նրան»: Պիղատոսն ասաց. «Ես դրա մէջ յանցանք չեմ գտնում»: Հրէաները տեսան որ թագաւոր ասելով չեն կարողանում պատժել տալ, ակսեցին ուրիշ բանում մեղադրել—նրանք ասացին. «Մենք օրէնք ունինք և նա դրա համաձայն պէտք է մեռնի, որովհետեւ իրան Աստծու որդի է անուանում»: Երբ Պիղատոսն այս խօսքերը լսեց, վախեցաւ և նորից ներս տարաւ Յիսուսին պալատն ու հարցըց «Դու ի՞նչ տեղից ես»: Յիսուս չպատասխանեց, որովհետեւ Պիղատոսը հեթանոս լինելով՝ գաղափար չունէր երկնքի Աստծու մասին: Պատասխանէր էլ, նա ոչինչ չէր հասկանայ—այս պատճառով լուեց: Պիղատոսն ասաց. «Ինձ հետ չես խօսում, միթէ չգիտես, որ ես իշխանութիւն ունիմ քեզ խաչելու և արձակելու»: Յիսուս պատասխանեց. «Դու ոչինչ իշխանութիւն

չէիր ունենայ ինձ վրայ, եթէ կայսրիցը արուած չինէր քեզ, այդպէս էլ ես իրաւունքներ ունիմ երկնքի Աստծուց»: Պիղատոսն աշխատում էր մի ձեռվ արձակել Յիսուսին: Բայց հրէաներն աղաղակում էին և ասում. «Եթէ նրան արձակես, կայսեր բարեկամ չես. ով իրան թագաւոր է անուանում, կայսեր հակառակ է»: Պիղատոսը, երբ այս խօսքերը լսեց, Յիսուսին դուրս բերաւ, բեմի վրայ նստեց և ասաց. «Ահա ձեր թագաւորը ձեզ»: Նրանք աղաղակեցին և ասացին. «Վեր առ դրան և խաչիր»: Պիղատոսը հարցըց. «Չեր թագաւորին խաչեմ»: Նրանք պատասխանեցին. «Մենք ուրիշ թագաւոր չունինք բացի կայսրից»: Պիղատոսն՝ երբ տեսաւ, որ խնդրին ուրիշ վատնդաւոր նշանակութիւն են տալիս, վախեցաւ որ կայսեր գանգատ կտան, մանաւանդ որ իւր յարաբերութիւնն էլ կայսեր հետ լաւ չէր, ուստի ջուր առաւ. ձեռները լուաց ժողովրդի առաջ և ասաց. «Ես այդ արդարի արիւնիցն անմեղ եմ, դուք գիտէք»: Բոլոր ժողովուրդն աղաղակեց. «Թո՞ղ դրա արիւնը մեր և մեր որդւոց գլխին լինի»: Այն ժամանակ Բարպարային արձակեց. իսկ Յիսուսին ծեծելուց ետով՝ յանձնեց նրանց, որ խաչեն:

60.

ՅԻՍՈՒԹՅԻ ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆԸ

Զինուորները հանեցին նրա կարմիր քղամիտը և հազգըրին իւր շորերն ու տարան խաչելու։ Յիսուս ինքն էր տանում իւր խաչափայտը։ ճանապարհին վայր ընկաւ, որովհետև յոդնել էր, ամբողջ գիշերը չարչարել էին։ Այդ ժամանակ պատահեցին Սիմօն Կիւրենացի անունով մէկին, որը դաշտի աշխատանքիցն էր դառնում և ստիպեցին նրան, որ խաչափայտը տանէ։ Յիսուսի ետևից մեծ բաղմութիւն էր գնում, շատ կանաքը լաց էին լինում։ Յիսուս դարձաւ նրանց և ասաց։ «Երուսաղէմի աղջիկնք, ինձ վրալ մի լաք, այլ լացէք ձեր և ձեր ողունոց վրայ, որովհնան կդան օրեր, երբ կասէց լեռներին թէ ծտծիեցէք մեռ։ Մտածեցէք փոքր ինչ, եթէ դալար փայտիս հետ այսպէս վարուեցին, չորին Բնէ կանեն»։ Երկու ուրիշ չարագործ մարդիկ էլ տարան, որ նրա հետ միասին խաչեն։

Երբ եկան դադաթն կոչուած տեղը՝ երայեցերէն Գողգոթայ, Յիսուսին խաչեցին երկու չարագործների հետ-մինին աջ, իսկ միւսին ձախ կողմում։ Ժամը երեքն էր (9), Յիսուս ասաց։ «Ներիր գրանց, Հայր, որովհետև իրանք էլ չգիտեն, թէ ինչ են անում»։ Զինուորները վիճակ ձգեցին և բաժանեցին նրա հանդերձները։ Պա-

հապանները նստել էին այնտեղ և պաշտպանում էին։ Պիղատոսը մի տախտակ գրեց և խաչի վերկից կախել տուաւ։ Տախտակի վրայ գրած էր — Յիսուս Նազովրեցի թագաւոր հրէից։ Այս տախտակը հրէաներից շատերը կարդացին։ Քահանայապետները նեղացան այս գրուածքից և ասացին Պիղատոսին. «Մի գրիր հրէից թագաւոր, զրիր որ ինքն էր ասում, թէ հրէից թագաւոր եմ։ Պիղատոսը բարկացած պատոսխանեց. «Ի՞նչ որ գրեցի, գրեցի»։

Զինուորները ծաղր էին անում նրան և ասում. «Եթէ դու ես հրէաների թագաւորո, փըրկիր քո անձը»։ Անցուգարձ անողները հայհում էին նրան և զլուխները շարժելով ասում։ «Ո՞վ տաճարը քանդող և երեք օրում շինող, ազատիր քեզ, եթէ Աստծու որդի ես և իջիր խաչիցը»։

Այսպէս ծաղրում էին քահանայապետները, գալիրները, ծերերը և ասում. «Աւրիշներին ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազատել. թէ որ նա իսրայէլի թագաւորն է, թնդ իջնէ խաչիցը և հաւատանք նրան»։

Խաչուած չարագործներից մինն էլ հայհույում էր նրան և ասում. «Եթէ դու ես Թրիստոսը, փրկիր քեզ էլ, մեզ էլ»։ Իսկ միւսը բարկացաւ նրա վրայ և ասաց. «Զես վախենում Աստծուց մեղաւոր տեղովու։ Մենք իրա-

ւացի կերպով ենք պատժուած, իսկ սա ոչ մի յանցանք չունի»։ Սա դիմեց Յիսուսին և ասաց. «Տէր, լիշիր ինձ, երբ որ գաս քո թագաւորութիւնովը»։ Յիսուս միխթարուած պատասխանեց. «Ճշմարիան եմ ասում քեզ, դու այսօր ինձ հետ դրախտում կլինիս»։

Այստեղ էին և այն կանաքը, որոնք նրա Գալիլիա եղած ժամանակը աշակերտում և ծառայում էին նրան։ Յիսուսի խաչի մօտ էին նրա մալրը, մօրաքոյրը և Մարիամ Մագդաղենացին։ Յիսուս տեսնելով իւր մօրը և Յովհաննէս աշակերտին, ասաց. «Ովկ կին, ահա քո որդին»։ Ետոյ աշակերտին ասաց. «Ահա քո մալրը»։ Եւ այն ժամանակից սկսած աշակերտն իրան մօտ առաւ Մարիամին։

Ժամը վեցին (12) խաւար իջաւ երկրի վրայ—արել խաւարեց։ Ժամը իննին (3) Յիսուսը բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Էլի, Էլի, լամա սաբաթանի», այսինքն՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչու թողիր ինձ։ Սրանից ետոյ Յիսուս ասաց. «Մարաւ եմ»։ Զինուորներից մինը վերցրեց սպունդը, թաթախեց քացախած զինու մէջ և մշտկի ծալրին դրած բերանին մօտեցրեց։

Երբ Յիսուս քացախը ճաշակեց, ասաց. «Ամեն ինչ կատարեալ է»։ Յիսուս վերջին անգամ խօսեց՝ ասելով. «Հայր, հոգիս քո ձեռն եմ

աւանդում»։ Այս ասելով՝ խոնարհեցրեց զլուխը և հոգին աւանդեց։ Այդ ժամանակ տաճարի վարագոյրը վերկեց մինչև ներքև պատառուեց. երկիրը շարժուեց. ժայռերը պատառուեցան և գերեզմանները բացուեցան։ Հարիւրապետը և պահապանները, երբ տեսան շարժը և եղածները, ասացին. «Ճշմարիտ, որ սա Աստծու որդի էր»։ Ժողովուրդը, որ այս տեսարանը դիտելու համար էր եկել, եղածը տեսնելով, կուրծքը ծեծում էր և զղացած սրտով ետ դառնում։

## 61.

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Թաղումն։ Մեր աւագ ուրբաթ օրն էր—միւս օրը հրէաների Զատիկն էր։ Որպէսզի մարմինները շաբաթ օրը չմնային խաչերի վրայ և իրանց Զատիկն ուրախ անցկացնէին, ինողեցին Պիղատոսին, որ իրաւունք տրուի մարմինները խաչերի վրայից վերցնելու։ Պիղատոսը հրաման տուաւ, բայց առաջուց մարդ ուղարկեց, որ մահն ստուգեն։ Զինուորները եկան և չարագործների սրունդները ջարդեցին։ Բայց երբ Յիսուսին մօտեցան, գտան մեռած։ Զինուորներից մինը՝ նրա մահն ստուգելու համար, գեղարդով կողը խոցեց և խսկոյն արիւն և ջուր դուրս եկաւ։

Սրանից ետոյ արեմաթացի Յովսէփը, որ ծածուկ աշակերտ էր Յիսուսին, եկաւ Պիղատոսի մօտ և խնդրեց նրա մարմինը։ Պիղատոսը զարմացաւ, որ Յիսուս այդպէս վաղ էր մեռել, սրա համար կանչեց հարիւրապետին և պատուիրեց, որ տեղեկանայ այդ մասին։ Երբ հարիւրապետից էլ ստոյգն իմացաւ, մարմինը Յովսէփին շնորհեց։ Նիկողիմոս անունով մի ուրիշ ծածուկ աշակերտ ևս եկաւ և բերեց զմուռս՝ հալուեի հետ խառնած։ Այս նիւթերով Յիսուսի մարմինը զմուռեցին և պատանեցին, ինչպէս որ հրէաների սովորութիւնն էր թաղման ժամանակ։

Այստեղ մի պարտէզ կար. պարտիզում մի նոր գերեզման. ահա այնտեղ թաղեցին Յիսուսին և մի մեծ քար էլ գլորեցին դռանն ու հեռացան, գնացին։ Գալիլիակից եկած կանաքը տեսան Յիսուսի գերեզմանը։ Սրանք ետ դարձան, խռունկ և իւղ պատրաստեցին, որ կիւրակէ գնան մարմինն օծեն—շաբաթ օրը ոչինչ չարին՝ պատուիրանի համաձայն։

Բ. Յարութիւն։ 1. Երբ շաբաթ օրն անցաւ, Մարիամ Մագիստրադենացին, Յակովը մազր Մարիամը և Սաղօմէն առան զանազան տեսակ խռունկ և գերեզման գնացին մարմինն օծելու։ Նրանք շատ վաղ եկան՝ արեգակը դեռ նոր էր ծագել։ Կանալքը միմեանց առում էին. «Ո՞վ կողորէ գերեզմանի քարը»։ Երբ մօտեցան, տե-

սան, որ քարը գերեզմանից հեռու էր ընկած։ Մարիամ Մագիստրադենացին իսկոյն վազեց Սիմօն Պետրոսի և միւս աշակերտների մօտ ու ասաց նրանց. «Տիրոջը գերեզմանից վեր են առել և չենք իմանում, թէ ուր են դրել»։ Իսկ միւս երկու կանալքը ներս մտան գերեզմանը և տեսան մի երիտասարդ նստած էր գերեզմանի աջ կողմում՝ սպիտակ պատմուճան հագած—նրանք խիստ զարհութեցան։ Երիտասարդն ասաց. «Մի զարհութէք, գուք խաչուած Յիսուսին էք փընտում, նա յարութիւն առաւ. այստեղ չէ. ի՞նչու էք կենդանին մեռելների մէջ որոնում։ Գնացէք, ասացէք նրա աշակերտներին և Պետրոսին, որ նա ձեզնից առաջ կփայ Գալիլիա և այստեղ կտեսնէք նրան, ինչպէս ձեղ առաջուց էլ ասել է»։ Կանալքը շտապով եկան և պատմեցին տասնումէկ աշակերտներին և ուրիշներին։ Այս խօսքերը անհաւատալի երկեցան նրանց, բայց Պետրոսը և Յովիաննէսը շտապով գնացին գերեզմանը և տեսան, որ պատանն առանձին մի կողմն է ընկած։ Նրանք ետ դարձան և խիստ զարմանում էին եղածի վրա։

2. Մարիամ Մագիստրենացին արդէն ետ էր դարձել և գերեզմանի դուրսը կանգնած լաց էր լինում—նա կարծում էր, որ Յիսուսի արմինը գերեզմանից մի ուրիշ տեղ են վու-

խաղըել։ Մարիամը նայեց գերեզմանի մէջ ու տեսաւ երկու հրեշտակ՝ սպիտակ շորերով նըստած՝ մէկը զլխի կողմը, իսկ միւսը՝ ոտների։ Հրեշտակներն ասացին Մարիամն. «Ո՛վ կին, ինչու ես լաց լինում»։ Մարիամին ասաց. «Իմ տիրոջը վեր են առել և չգիտեմ, թէ ուր են դրել»։ Եւ երբ այս ասաց, ետ դարձաւ և իրան Յիսուսին տեսաւ, բայց չճանաչեց։ Յիսուս ասաց. «Կին, ինչու ես լաց լինում, ումն ես որոնում»։ Մարիամը կարծերով թէ պարտիզպանն է, ասաց. «Տէր, եթէ դու ես վեր առել, ասա ինձ, ուր ես դրել»։ Յիսուս ասաց. «Մարիամ»։ Մարիամը ճայնից ճանաչեց, դարձաւ և ասաց նըրան. «Բաբնւնի», որ նշանակում է վարդապետ։ Յիսուս ասաց. «Մի մօտենար ինձ, շտապիր և աշակերտներիս ասա, որ ես գնում եմ իմ հայր Աստծու մօտ։ Մարիամ Մագդաղենացին եկաւ և պատմեց աշակերտներին, թէ նա տեսել է Տիրոջը և պատմեց պատահած դէպքը։

3. Յիսուսի հեռաւոր աշակերտներից երկուը միենոյն օրը էմմառւս գիւղն էին գնում, որ երկու և կէս ժամ հեռի է Երուսաղէմից։ Նրանք իրար մէջ խօսում էին պատահած բաների մասին։ Երբ այսպէս վիճաբանում էին, հենց ինքը Յիսուս մօտեցաւ նրանց և գնում էր հետները։ Բայց նրանք չճանաչեցին։ Յիսուս հարցրեց։ Այդ ինչի մասին էք վիճում և ինչու տըր-

տում էք»։ Նրանցից մինը, որի անունը Կղէռպաս էր, պատասխանեց. «Միթէ դու Երուսաղէմում բնակուող միակ օտարականն ես, որ չգիտես, թէ այս օրերում ինչ բաներ պատահեց այնտեղ»։ Յիսուս ասաց. «Ի՞նչ բաներ»։ Նրանք ասացին. «Նազովբեցի Յիսուս մարգարէին քահանայապետները և իշխանները խաչեցին, բայց նա երրորդ օրը յարութիւն առաւ։ Մի բանի կանաքը էլ առաւօտանց վաղ գնացել էին գերեզմանը, մարմինը չէին գտել, եկել յատնել էին, որ հրեշտակներ են տեսել, հրեշտակներն ասել են, թէ նա կենդանի է։ Մեզնից մի քանիսը գնացին գերեզմանը և գտան իսկ անպէս, ինչպէս կանաքը էին պատմել, բայց իրան չէին տեսել։ Յիսուս ասաց նրանց. «Ո՛վ անմիտներ և թուլասիրաններ, միթէ չպէտք է հաւատալ այն բոլոր բաներին, որ մարգարէները գուշակել են։ Զէ որ Քրիստոս պէտք է չարչարուէր, որպէսզի իւր փառքի մէջ լուսը»։ Եւ ո՛ւեց խօսել Մովսիսից և բոլոր մարգարէն լուս—մեկնում էր նրանց, ինչ որ գրքերի մէջ գրուած էր իւր մասին։ Նրանք մօտեցան Էմմառուսին, բայց Յիսուս այնպէս էր ցոյց տալիս, որպէս թէ էլլու հեռու է գնալու։ Այն երկուսը սափակցին նրան և ասացին. «Մնա մեզ մօտ, իրիկուայ դէմ է»։ Յիսուս մնաց նրանց մօտ։ Երբ սեղան նստեցան, առաւ հացը, օրհնեց, կոտրեց և տուաւ նրանց։

Աշակերտներն իսկոյն ճանաչեցին նրան, բայց  
Յիսուս հեռացաւ, աներեղիթ եղաւ։ Սրանից ե-  
տոյ սկսեցին իրար հետ խօսել և ասել. «Մեր  
սրտերը ինչպէս բորբոքում էին, երբ ճանա-  
պարհին մեզ հետ խօսում էր և ինչպէս գրքերում  
գրածները մէկ մէկ ցոյց էր տալիս մեզ։ Նոյն  
ժամին վեր կացան. ուրախ-ուրախ դարձան Երու-  
սաղէմ. եկան աշակերտների մօտ և պատմեցին  
նրանց, թէ ճանապարհին պատահածը և թէ ինչ-  
պէս հացը կոտրելու ժամանակ ճանաչեցին նրան։

4. Նոյն օրը՝ երեկոյեան՝ աշակերտները  
հրէաների երկիւղից դռները փակած միասին  
էին հաւաքուած։ Յիսուս յալանուեց նրանց և  
ասաց. «Ինչու էք շփոթուած, ինչու էք կամկա-  
ծում—չէք հաւատում, որ ես եմ. մօտ եկէք շո-  
շափեցէք իմ ձեռքերը և ոսմերը—կարծում էք  
ես հոգի եմ. տեսէք հոգին մարմին և ոսկոր  
չունի։ Այս ասաց և ցոյց տուաւ ձեռները, ոտ-  
ներն ու կողը։ Աշակերտները չափից դուրս  
ուրախացան, որ Տիրոջը մի անգամ էլ տեսան։  
Յիսուս դարձեալ ասաց. «Խաղաղութիւն ձեղ,  
ինչպէս իմ հայրն ինձ ուղարկեց, այնպէս էլ ես  
եմ ձեզ ուղարկում։ Այս ասելով փչեց նրանց  
վրայ իւր հոգին և ասաց. «Առէք սուրբ Հոգին.  
ում մեղքը որ թողնէք, թողած լինի, ումը որ  
կապէք՝ կապած։»

Թովմասն այնտեղ չէր։ Երբ եկաւ, ընկեր-  
ները յայտնեցին նրան և ասացին. «Մենք  
տեսանք Տիրոջը»։ Իսկ նա ասաց. «Մինչև ես  
իմ աչքով չտեսնեմ ձեռների բևեռների նշանը և  
մատս չղնեմ բևեռների տեղի վրայ, մինչև նրա  
խոցուած կողը ձեռովս չշօշափեմ, չեմ հաւա-  
տալ»։ Ութ օրից ետոյ աշակերտները կրկին հա-  
ւաքուել էին միևնոյն տան մէջ։ Թովմասն էլ  
նրանց մօտն էր։ Յիսուս փակ գոներից մտնե-  
լով, կանգնեց նրանց մէջ և ասաց. «Խաղաղու-  
թիւն ձեղ»։ Ետոյ դարձաւ Թովմասին և ասաց.  
«Բէր քո մատն այստեղ և տես իմ ձեռները.  
բեր ձեռդ և կողս շօշափիր. անհաւատ մի լինիր,  
այլ հաւատացեալ»։ Թովմասը պատասխանեց և  
ասաց. «Իմ Տէր և իմ Աստուած»։ Յիսուս ա-  
սաց. «Թովմաս, դու ինձ տեսար և հաւատացիր,  
բայց երանի նրանց, որոնք առանց տեսնելու  
կհաւատան»։

5. Սրանից ետոյ Յիսուս վերջին անգամ  
յայտնուեց աշակերտներին Տիրերական ծովի ա-  
փին։ Յիսուս եկաւ նրանց մօտ և ասաց. «Եկէք,  
ճաշեցէք»։ Աշակերտները ձայնից ճանաչեցին։  
Ճանաչելուց ետոյ Յիսուս փորձեց Սիմօն Պե-  
տրոսին և ասաց. «Սիմօն՝ Յովանի որդի, սի-  
րում ես ինձ»։ Նա ասաց. «Այս Տէր, դու գի-  
տեռ, որ ես սիրում եմ քեզ»։ Յիսուս ասաց.

«Արածացրնւ իմ գառները»։ Դարձեալ հարցըեց։ «Սիմօն Յովնանի որդի, սիրում ես ինձ»։ «Այն, Տէր, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»։ Յիսուս ասաց. «Արածացրնւ իմ գառները»։ Յիսուս երրորդ անդամ հարցըեց. «Սիմօն՝ Յովնանի որդի, սիրում ես ինձ»։ Յիսուս երեք անդամ հարց տալով, յիշեց նրա երեք անդամուայ ուրացութիւնը. Պետրոսը տըտմեցաւ այս նկատողութեան համար և ասաց. «Տէր, դու ամեն բան գիտես, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»։ Յիսուս ասաց նրան. «Արածացրնւ իմ ոչխարները։ Ճշմարիտը, ճշմարիտն եմ ասում քեզ, երբ որ պատանի էիր, գոտիդ կապում և գնում էիր, ուր կամենում էիր, բայց երբ կծերանաս, ձեռդ կմեկնես, ուրիշը գօտիդ կկապէ և կտանէ, ուր որ չես կամենում»։ Յիսուս կամենում էր ասել—դու այսուհետեւ քո կամքով չպիտի գործես, այլ Աստուած ինչպէս կկամենայ, այնպէս պիտի անես»։

62.

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Յարութիւնից ետոյ Յիսուս քառասուն օր էլի մնաց երկրիս վրայ իւր աշակերտների մօտ և այդ ժամանակամիջոցում խօսում էր նրանց հետ երկնքի արքայութեան մասին։ Սրանից ետոյ

Զիթենեաց լեաուը բարձրացաւ աշակերտների հետ և այնտեղ նրանց վերջին անգամ պատուէրներ տուաւ ու ասաց. «Երուսաղէմից չհեռանաք, այլ սպասեցէք իմ հօր աւետիրին, որ ես ձեզ խոստացել եմ։ Երբ սուրբ Հոգին ձեզ վրայ կիջնէ, դուք ուրիշ մարդիկ կդառնաք և կվկայէք իմ մասին երուսաղէմում, Հրէաստանում, Սամարիայում և մինչև երկրի ծայրերը։ Ուրեմն գնացէք և բոլոր ազգերին ուսուցէք Հօր, Որդոյ և Հոգւոյն սրբոյ անունով։ Ուսուցէք նրանց որ պահեն այն ամենը, ինչ որ ես ձեզ պատուիրեցի։ Ով կհաւատայ և կմկրտուի, նա կփրկուի, իսկ ով չի հաւատայ, նա կդատապարտուի»։

Երբ այս ասաց, բարձրացրեց ձեռները և օրհնեց նրանց։ Օրհնելու ժամանակը բաժանուեց նրանցից և վերացաւ երկինք։ Մի ամպ ծածկեց նրան աշակերտների աչքից։ Նրանք երկրպագեցին. ուրախութիւնով ետ դարձան երուսաղէմ և սպասում էին խոստացած Հոգուն։

Համբարձման տօնը կատարում էնք Զատկից 40.  
օր ետոյ։

63.

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ

Ա. Երբ Յիսուս երկինք համբարձաւ Զիթենեաց լեռան վրայից, առաքեալները երուսաղէմ դարձան և միասին սպասում էին սուրբ Հոգւոյ գալստեանը: Համբարձումից տասն օր անց, որ Պենտէկոստէ էր կոչւում, առաւօտեան դէմյանկարծ երկինքը գոռաց, սաստիկ քամի բարձրացաւ, եկաւ լցուեց այն տունը, ուր առաքեալները ժողոված էին և ամեն մինի գլխի վրայ կրակի բոցի պէս՝ լեզուի ձևով լոյս երեաց: Առաքեալներն իսկոյն Սուրբ Հոգւով լցուեցան և նրա շնորհքով սկսեցին զանազան օտար լեզուներով խօսել: Ուրիշ երկրներից շատ բարեպաշտ հրէաներ երուսաղէմ ուխտ էին եկել: Երբ երկինքից իջնող ձայնը լսեցին, վազեցին այնտեղ և տեսան, որ ամենքն էլ զանազան լեզուներով էին խօսում—մէկը պարսկերէն, միւսը պարթևերէն, երրորդը հոռվմայեցւոց լեզուով չորրորդը արագերէն....: Այս բանի վրայ ժողովուրդը շատ զարմացաւ և իրար ասում էին. «Զէ՞ որ սրանք բոլորն էլ գալիլիացիներ են, տեսէք ինչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստծու մեծամեծ գործերը, այս ինչ պիտի լինի»: Ու մանք էլ ծաղր անելով՝ ասում էին. «Նրանք հարթել են»:

Բ. Այս ժամանակ Պետրոսը միւս առաքեալների կողմից պատասխան տուաւ նրանց և ասաց. «Ով հրէաստանցիներ և երուսաղէմում բնակուղներ, լաւ լսեցէք ասածներիս—մենք հարբած չենք, որովհետեւ դեռ ևս առաւօտեան ժամի երեքն է (9), այս ժամին մարդ գինի չի խմի, մենք Հոգւով սրբով ենք լցուած: Յիսուս Նազովեցուն, որին Աստուած ուղարկեց և որը ձեր մէջ շատ հրաշքներ գործեց և ապացուցեց, որ ինքը Մեսիան է, դուք փայտի վրայ խաչեցիք, բայց Աստուած նրան յարութիւն տուաւ երկինք համբարձաւ. այնտեղից մեզ համար սուրբ Հոգին ուղարկեց, որի նշանն արդէն դուք տեսնում էք մեզ վրայ: Քաջ գիտացէք, ով իսրայէլացիներ, որ ձեր սպասած ճշմարիտ Մեսիան՝ հէնց այն Քրիստոսն էր, որին դուք խաչեցիք»:

Գ. Ժողովուրդը, երբ այս քարոզը լսեց, զղջաց: Նրանցից շատերը գալիս էին Պետրոսի և միւս առաքեալների մօտ ու ասում էին. «Ինչ անենք»: Պետրոսն էլ ասում էր նրանց: «Ապավարեցէք և մկրտուեցէք Յիսուս Քրիստոսի անունով—ով կմկրտուի, կաղասուի»: Պետրոսի քարոզից հետո՝ երեք հաղար հոգի մկրտուեցան:

Պ. Երեք հազար հաւատացեալները չէին հեռանում տաճարից, այլ շարունակ լսում էին առաքեալների քարոզները։ Բոլոր հաւատացեալները միասին էին հաց ուտում և միասին աղօթում—իմ և քո ասած բանը նրանց մէջ չկար, ասեն բան հասարակաց էր։ Հարուստները ծախում էին իրանց գոյքը և նրանով էին հոգում աղքատների կարիքները։ Ազօթքի ժամանակ ամեն օր տաճարում էին լինում և հացը միասին էին ուտում—աղքատ և հարուստ օրհնում փառաբանում էին Ստեղծողին։ Աստուած առաքեալների ձեռով շատ հրաշքներ էր գործում. ժողովուրդը յարգում էր նրանց—հաւատացեալները օրէց օր աւելանում էին։

## ՑԱՆԿ

### I.

#### ԴԼ

- |   |    |
|---|----|
| 1. Սուրբ կոյս Մարիամի ծնունդը և տաճարին ընծայութիլը . . . . . | 5  |
| 2. Յիսուսի ծնունդը . . . . .                                  | 6  |
| 3. Արևելքի մողերը և Յիսուսի Եգիպտոս փախչիլը . . . . .         | 9  |
| 4. Յիսուսի տաճար տանութիլը . . . . .                          | 12 |
| 5. Տասներկու տարեկան Յիսուսը տաճարում . . . . .               | 13 |
| 6. Յովհաննէս Մկրտչի ծնունդը . . . . .                         | 14 |
| 7. Յովհաննէսն ապաշխարութիւն է քարոզում և մկրտում . . . . .    | 17 |

### II.

- |  |    |
|--|----|
| 8. Յիսուսի մկրտութիւնը . . . . .                             | 19 |
| 9. Յիսուս ընտրում է Սիմօնին և նրա ընկերներին . . . . .       | 20 |
| 10. Յիսուսը կանչում է Մատթէոսին . . . . .                    | 22 |
| 11. Յիսուս և մանուկները . . . . .                            | 23 |
| 12. Աշակերտաները վիճում են թէ ով է մեծ երկարք. մէջ . . . . . | 24 |
| 13. Կանայի հարսանիքը . . . . .                               | 25 |
| 14. Կափառնայումի հարիւրապետը . . . . .                       | 26 |
| 15. Տամն բորոտների բժշկութիլը . . . . .                      | 27 |
| 16. Փարիսեցին և մաքսաւորը . . . . .                          | 28 |
| 17. Անառակ որդու առակը . . . . .                             | 29 |
| 18. Յիսուս բժշկում է կոյրին երիքովի մօտ . . . . .            | 31 |
| 19. Յիսուս և Զակքէոսը . . . . .                              | 32 |
| 20. Յիսուս բժշկում է խուլուհամբին . . . . .                  | 33 |


#### ԵՐԿԱ


21. Ողորմած սամարացու առակը . . . . .	33
22. Այրի կնոջ լուման . . . . .	34
23. Զար ծառայի առակը . . . . .	35
24. Հինգ հազարի կերակրելը . . . . .	36
25. Քանանացի կինը . . . . .	38
26. Յիսուս քարոզում է Նազարէթում . . . . .	39
27. Հարուստ երիտասարդը . . . . .	40
28. Անմիտ հարստի առակը . . . . .	42
29. Կորուսեալ ոչխարի և գրամի առակը . . . . .	42
30. Յայրոսի դուստրը և Նայինի պատանին . . . . .	43
31. Յովհաննէի Վկրտչի դեսպանները և Պետրոսի . . . . .	45
32. Պայծառակերպութիւն . . . . .	47
33. Յովհաննէս Մկրտչի մահը . . . . .	49
34. Սերմանացանի առակը . . . . .	50
35. Որոմի առակը . . . . .	51
36. Մեծ ընթրիքի առակը . . . . .	52
37. Անդամալուծի բժշկութիւնը կափառնացում քաղաքում . . . . .	53
38. Յիսուս սաստում է մըրկին . . . . .	55
39. Կոյր ծնածի բժշկութիւնը . . . . .	56
40. Այզու մշակների առակը . . . . .	59
41. Քանքարների առակը . . . . .	60
42. Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը . . . . .	62
43. Տասն կոյսերի առակը . . . . .	63
44. Վերջին դատաստան . . . . .	65
45. Լեռն քարոզը և ինը երանութիւնները . . . . .	66
46. Յիսուսի խօսակցութիւնը լուացման, կերակրի, պահքի . . . . .	74
47. Յիսուս և սամարացի կինը . . . . .	76
48. Մարիամ և Մարթա . . . . .	79
49. Ղազարոսի յարութիւնը . . . . .	80

III.	
50. Յիսուսի թշնամիները . . . . .	82
51. Յիսուսի օծումը Բեթանիայում . . . . .	83
52. Յիսուս մտնում է Երուսաղէմ . . . . .	84
53. Յիսուս վիճաբանում է թշնամիների հետ . . . . .	86
54. Յուղայի մատնութիւնը . . . . .	91
55. Ոտնալուայ և խորհրդաւոր ընթրիք . . . . .	91
56. Յիսուս Գեթսեմանում . . . . .	94
57. Յիսուս քահանայապետների առաջ . . . . .	97
58. Պետրոսի ուրացութիւնը և Յուղայի վախճանը . . . . .	99
59. Յիսուս Պիղատոսի առաջ . . . . .	100
60. Յիսուսի խաչելութիւնը . . . . .	106
61. Յիսուսի թաղումը և յարութիւնը . . . . .	109
62. Յիսուսի համբարձումն . . . . .	116
63. Հոգեգալուստ . . . . .	117









ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՀԱՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ  
ԿՐՈՆԻ ՀԵՏԵԼԵԱԼ ԴԱՍԱԳՐԵՐԸ

I.

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՍՏՈՐԻՆ ՇՐՋԱՆ

		թ. գ.
1.	ԴԱՍԱԳԻՐՔԿՐՈՆԻ—Հինության, հատոր Ա.	1 75
2.	» » նոր ուխտ » Բ.	2 5
3.	ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ հայ կրօնուսոյցներին. .	— 10
	ՄԻ ԶԻՆ ՇՐՋԱՆ	
4.	ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆ. ԿՐՈՆԻ համա. Դ. .	1 50
5.	» » » » բ. .	— 50
6.	ՏԱՄՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ . . . . .	— 50

II.

ԱՃԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

7.	ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ. . . . .	Ա. տարի — 25
8.	» » . . . .	Բ. » — 20
9.	» » . . . .	Գ. » — 30
10.	ՄՐԲԱԶ. ՊԱՏՄ. հին ուխտի. . . . »	— 35
11.	» » նոր-ուխտի . . . »	— 40
12.	ԳՈՐԾՔ Ա.Ա.Ք.	» . . . » — 40

Իմ դասագրերն ստանալ ցանկացողները կարող  
են դիմել —

1. Тифлисъ: Священнику С. Саакянцъ. Коммерческое училище.
2. " Книжная торговля „Гуттенбергъ“.
3. " Центральная книжная торговля.
4. " Писчебумажный магазинъ Оганесова на Дворцовой ул.
5. " Книжная торговля Тарайанцъ.

Ինձ դիմողներն ստանում են ուսուցչաց դասագրերի համար  $35^0/0$ , իսկ տշակերտաց՝  $20^0/0$  (տպաշին տարին  $25^0/0$ ) գեղջ:

Գինն է 40 ԿՈՊ.

«Ազգային գրադարան



NL0157152

H APM.  
2-8402